


15198



ԲՐԱՉԻՆՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՑ

15 JAN 2010

26 SEP 2006

32(81)
L-93

Ա. ԼՈՒՐՅԵ

ԱՅ

ԲՐԱՅԻՆՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ
ՀԵՐՈՍԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՅՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՈՒՅԹ

1940

03 MAY 2013

15198


Հայոցի ան ժողովրդի հերոսը

Գիրքը պատկերում և Բրազիլիայի ժողովրդական նշանավոր հերոս Լուիս-Կարլոս Պրեստեսի կերպարը և պատմում ե այն պահծալի արշավանքի և մարտերի մասին, վոր նրա ջոկատները մշտեցին բրազիլացիների կառավարության՝ կալվածատերերի և կապիտալիստների դեմ:

Պատ. Խմբագիր՝
Հ. Պարոն Յան
Թարգմանիչ՝
Հ. Մազմանյան
Տեխ. Խմբագիր՝
Ի. Վարդան Յան
Սրբագրիչ՝
Նիկ. Թումանյան

Գլավիլիսի լիազոր՝ Զ—1125. Հրատ 5212.
Պատմիք 282. Տիրաժ 4000.
Հանձնված ե արտադրության 27/VI 1940 թ.
Ստորագրված ե տպագրութ. 3/V 1940 թ.

Հայպետանիքի առաջնական տպագրատիպ Յերևան, Անդրկենտ, 65



2519
40

Ա. Լուրի
Գերօյ
բразильского народа
Армгиз, Ереван, 1940 թ.



Լուիս-Կարլոս Պրեստես



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԲՐԱՋԻԼԻԱՆ

«Բրազիլիայի դեկտատորները հույս ունեն,
վոր կրենց կհաջողվի ծածուկ կերպով կյանքից
գրկել Բրազիլիայի անկախության պայքարի յե-
րիտասարդ հերոսին։ Բայց նրանք թերաբնահատում
են այն սերը, վորով չըշապատված և «Հույսի Աս-
ուետի» լեգենդային դեմքը։ Կարլոս Պրեստեսի ա-
նոնը սրբազն և մեզ համար։ Այն պատկանում է
ամբողջ մարդկության։ (ԹՈՄԵՆ ՌՈԼԱՆ, Փաշիզի
և պատերազմի դեմ պայքարող Միջազգային կոմի-
տեյի կոչից)։

Լուիս Կարլոս Պրեստեսը՝ 1935 թվականին Բրազիլ-
այում ծավալված ժողովրդական ճակատի հղոր շարժման
կոմունիստ առաջնորդը՝ արդեն յերեք տարի տառապում և
Ռիո-դե-Ֆանեյրոյի, Բրազիլիայի մայրաքաղաքի բանտում։
Պրեստեսը ժամանակակից ամենանշանավոր անձնավորու-
թյուններից մեկն ե։ Դեռ մինչեւ կոմունիստական կուսակ-



ցություն մտնելը Պրեստեսն ամենայեռանդուն մասնակցությունն ունեցավ Հեղափոխական մանր բուրժուազիայի 1922-1924 թ. թ. բրազիլիական ազստամբության մեջ:

Կանգնելով վոքրիկ, բայց ընտիր ջոկատի («զորասյան») գլուխը, Պրեստեսը համարյա յերեք տարի (1924 թ. մինչև 1927 թ.) հերոսարար կովեց Բրազիլիայի բռնակահառավարության զորքերի դեմ: Զնայելով իր տեխնիկական կառավարության զբաղեցրի դեմ: Զնայելով իր տեխնիկական թվական զերազանցության, կառավարությունը վոչ մի կերպ չեր կարողանում հաղթահարել «Պրեստեսի զորասյունը», վորովհետեւ վերջինու իր ուղաքարում հենվում եր այդ յերկրի բախտաղուրի աշխատավոր մասսաների ջերմ համականքի և ողնության վրա: Անդադար կովելով, զորասյունը յերեք տարվա ընթացքում Բրազիլիայի կուսական անտառներով, լեռներով, դետերով և տափաստաններով անցավ մի հոկայական ճանապարհ՝ 25 հազար կիլոմետր:

Այն պայքարը, վոր «Պրեստեսի լեղենդային զորասյունը» մղեց Բրազիլիայի կալվածատերերի և կապիտալիստների կառավարության դեմ, հոկայական քաղաքական նշանակություն ունեցավ: Այդ պայքարն արտահայտում եր բրազիլյան ժողովրդի հետզետե աճող դժողովությունը Բրազիլիայի բռնակալ կառավարության դեմ, վորը յերկրի ամենահարուստ հողերն աջ ու ձախ վաճառում եր ոտարերկրյա կապիտալիստներին, այդ կերպ Բրազիլիան կախման մեջ դնելով միջազգային իմպերիալիզմից:

Պրեստեսը հույս ուներ ազստամբություն բարձրացնել սովոր բարբակների և պլանտացիաների գյուղացիների միջավարում: Նա հույս ուներ կովելով հասնել ովկիանոսային խոչը նավահանդիստները, ուր կենտրոնացված ելին պրոլետարական մասսաները, վորոնք բազմիցս ապրու

տամբել ելին կալվածատերերի և կապիտալիստների դեմ: «Պրեստեսի զորասյան» պայքարն առաջին անգամ յերկը իրավագուրիկ, դաժանորեն շահագործվող մասսաների մեջ ստեղծեց այն հույսը, թե կբարելավվի նրանց խղճուկ գրությունը: Այն ցույց տվեց, վոր կարելի յե և պետք ե պայքարել յերկրում տեր ու տնօրեն դարձած կառավարող գասակարգերի և հարուստ ոտարերկրացիների կամայականության դեմ: Այս պատճառով Պրեստեսը միանգամայն իրավմամբ անվանվեց «Հույսի Ասպետ»:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում Բրազիլիան և նրա ժողովուրդը:

Բրազիլիան դրավում է ամբողջ Հարավային Ամերիկայի համարյա կեսը¹⁾ և իր տարածությամբ յերկու անգամ մեծ է ժամանակակից կապիտալիստական Յելրոպայից²⁾: Այդ հոկայական յերկիրը մեծ մասամբ ծածկված է մարդուն անմասնելի կուսական անտառով կամ վայրի, ամայի, անձանով տարածություններով: Իր մեծության համեմատությամբ Բրազիլիան սակավաբնակ է. այնտեղ կա 47 միլիոն բնակչություն:

Բրազիլիան հայտնագործվել է 1500 թ. ապրիլի 22-ին, պղոտուգալիայի Պերո Ալվարես Կաբրալի կողմից: Նավով ժամանելով Պրատո Սեգուրո, Կաբրալը նոր գտնված յերկիրը հայտարարեց Պորտուգալիայի սեփականություն: Հետազայում այդ յերկիրը Բրազիլիա անվանվեց, վորովհետեւ այնտեղ կային շատ ծառեր, վորոնք տալիս են կարմիր ներկ— «բրազա» (այսինքն շիկացած ածուխ, ջերմություն):

1) Հարավային Ամերիկայի տերիտորիայի 46,6%-ը:

2) Բրազիլիայի տարածությունը 8532 քառ. կիլոմետր է:

Յեվրոպայի ծովագնացները յերկար ժամանակ զնում ելին վորոնելու «խորհրդավոր կղզին», վորը հարուստ և ներկատու բույսերով»։ Պորտուգալացիները առաջինը հաստատապես տիւ ացան նոր հայտնադրծված յերկրներին և պորտուգալական լեզուն ու կուլտուրան մինչև որս իշխում են Բրազիլիայում (գա Ամերիկայում միակ յերկիրն ե, վորտեղ պորտուգալերեն են խոսում)։ Հարավային Ամերիկայի մասցած մասում գրական և պաշտոնական լեզուն իսպաներենն ե)։

Շուտով Յեվրոպայից յեկան նոր, ագահ նվաճողները, վորոնք յերազում ելին արագությամբ հարստանալու մասին— Փրանսիացիները, Հոլլանդացիները։ Նրանք տիրացան բրազիլիական ափի մի մասին, և հին տերերը—պորտուգալիացիները բազմիցս ստիպված ելին պատերազմել նրանց հետ (Փրանսիացիք Բրազիլիայի նախահանդիսատներից վերջնականապես արտաքսվեցին XVIII դարի սկզբում, իսկ Հոլլանդացիները՝ 1654 թվին)։

Յերկար ժամանակ յեվրոպացի նվաճողներին հայտնի յեր ցամաքի միայն մի նեղ շերտ ովկիանոսի ափի յերկարությամբ։ Բրազիլիայի խորքն առաջինը մուսոք գործեցին պորտուգալացիները— Սան Պաուլի դաղութարարները։ Նրանք կազմակերպում ելին զինված ջոկատներ, վորոնք հասնում ելին կենտրոնական Բրազիլիայի ամենահեռավոր վայրերը։ Այդ ջոկատները թալանում ելին բնիկ տերերին — հնդիկներին, գրավում նրանց հողերը, անինա կոտորում նրանց մի մասը, վոմանց ել ստրուկներ ելին դարձնում։ Հնդիկներին վորսում ելին ինչպես վայրի դադաններին։

Բրազիլիայի հյուսիս-արևելքում շաքարի պատագիա-

ների ուժեղ զարդացման կապակցությամբ պորտուգալացիներն Աֆրիկայում մասսայական թվով նեղրեր ելին դընում, վորպեսզի աշխատեցնելին այդ պլանտացիաներում։ Յերեք տարվա ընթացքում Բրազիլիան անընդհատ բնակեցվում եր սմամութներով, վորոնք միլվոններով բերվում ելին այդ յերկիրը, տաժանակիր, ստրկական աշխատանքի համար։ (Այժմ միլվոնավոր այդ նեղրերը մետխաների¹ և հնդիկների հետ միասին հանդիսանում են բրազիլյան ժողովրդի հիմնական աշխատավոր մասսան)։

Բրազիլիայում ապրող յերեք ռասաները հաճախ խաչասերվում ելին։ սպիտակամորթների և նեղրուհիների ամուսնություններից ծնվում ելին մուլատները, նեղրերի և հնդիկ կանանց ամուսնություններից— կաֆուները, սպիտակամորթների և հնդիկ կանանց ամուսնություններից—մամելյուկները կամ «կարոկլոնները»։ Այսեղից ե առաջացել Բրազիլիայի ժողովուրդների հսկայական բազմազանությունը, ել չխոսենք Լատինական Ամերիկա գաղթած բազմաթիվ գաղութարարների, — գերմանացիների, իտալացիների, լեհերի, ճապոնացիների մասին։

Այն սլայքարի հետևանքով, վոր Բրազիլիան մղում եր Պորտուգալիայի դեմ, Բրազիլիան 1822 թվին հայտարարվեց իր մետրոպոլիայից (Պորտուգալիայից) անկախ պետություն։ 1888 թվի մայիսի 13-ին վերացվեց ստրկությունը, իսկ հետեւյալ տարում (1889 թ.) այդ յերկրում հեղափոխությունը տարվանեց միապետությունը։ Այն ժամանակներից (ընդհանուր մինչև 1937 թվի նոյեմբերի 10-ի

1 Մետիս կոչվում ե մարդկային տարբեր ռասաների ներկայացրացիների ամուսնությունից առաջացած սերունդը։

հեղաշրջումը, վոր կատարեց պլրեզիդենտ Վարդասը. նա ցրեց պարլամենտը և դիկտատորական ռեժիմ սահմանեց) Բրազիլիայի Միացյալ Նահանգները կոչվում ենին «Պեմո-կրասական հանրապետություն»:

Բայց այստեղ «Պեմոկրատական աղատությունները» դոյություն ունեյին միայն տիրող դասակարգերի համար: Բրազիլիայում ընտրական իրավունքով ոդտվում ենին միայն նրանք, ովքեր գրել-կարդալ դիտեյին և «չեյին զբաղվում այնպիսի արհեստով, վորն անհամատեղելի յե կարծիքների աղատության հետ»: Վորովհետեւ Բրազիլիայի բնակչության հսկայական մասսան անդրագետ եւ և այստեղ դոյություն ունեն մի շարք ցեղեր, ուստի բրազիլիական ամբողջ ժողովրդի միայն 6 տոկոսը կարող եր քվեարկել ընտրությունների ժամանակ: Քվեարկելու իրավունքից զրկվել ենին նաև բոլոր զինվորները:

Ծանր են բրազիլյան ժողովրդի կյանքի պայմանները: Յուրաքանչյուր քայլափոխում— ապշեցուցիչ հակասություններ: Սակավ կուլտուրական, խել-կալվածատիրոջ Փեոդալական հարուստ դղյակ և դրա կողքին—կիսաստրուկ նեղրի խղճուկ հյուղը: Պալատներ և իրմիթներ: Միջնադարյան բռնակալություն և կապիտալիստական դաժան շահագործում— ահա թե ինչի հանդեց Բրազիլիայի «աղատ» հանրապետական իրակարգը:

Ի՞նչ խոսք, վոր Բրազիլիայում աշխատավորների դրությունն եւ ավելի վատթարացավ Վարդասի կատարած հեղաշրջումից հետո, Վարդասի, վորը գեմոկրատական աղատությունների հետքն անդամ չիտղեց:

Բրազիլիան կապիտալիստական յերկիր եւ, ճորտատիրական իրակարգի բաղմաթիւվ մնացուկներով: 28 միլիոն

բնակչությունից, վոր ապրում եւ յերկրագործական աշխատանքով, 20 միլիոնը գուրկ եւ հողից:

Այս թվերը պերճախոս կերպով վկայում են բրազիլիական ժողովրդի տառապահները: Բրազիլիական հողերի մեծ մասը պատկանում եւ ֆեոդալ-կալվածատերերին, վորոնք իրենց կալվածքներում անսահմանափակ իշխանություն ունեն և իրենց պահում են ինչպես փոքրիկ թաղավորներ կամ իշխաններ: Նրանք անկոնտրու կերպով տնօրինում են իրենց զյուղացիների և բատրակների կյանքն ու գույքը: Այստեղ տիրող ռեժիմը շատ բաներով հիշեցնում եւ միջնադարյան Յելոպայի ֆեոդալական իրակարգը: Մինչև որս Բրազիլիայում նկատվում են դեպքեր, յերբ ֆեոդալն ինքն և դատում իր ստորադրյալներին: Կալվածատերերը հաճախ ոդտվում են «փակ զոնների» հինավուրց իրավունքով: Վերջինս նշանակում ե, վոր կալվածատերն իր կալվածատան ներսում ինչ ուզում ե, այն եւ անում ե իրեն յինթակա դյուղացիների և բատրակների հետ: Այդ «վարձու» դյուղատնտեսական բանվորները փաստորեն հանդիսանում են բրազիլիական կալվածատերերի և ձեռնարկուների ստրուկները: Բրազիլիայի հյուսիս-արևելքի պլանտացիաների մեծ մասում և շաքարի մի քանի զործարաններում բանվորներն աշխատավարձը ստանում են վոչ թե փողով, այլ ժետոններով: Նրանք կարող են այդ ժետոններով հաղուստ և սնունդ ձեռք բերել միայն պլանտացիայի կամ գործարանի խանութում, վորտեղ ամեն ինչ յեռակի թանդ ե: Պլանտացիաների բանվոր բատրակների հետ կնքվող պայմանագրերում միշտ լինում ե մի կետ, վորի համաձայն «բացառիկ դեպքերում» (հրդեհ, հեղեղում, մորեխ և այլն) բատրակները պարտավոր են ձրի աշխատել: Վայ այն բատրակին,

ով կկարծի, թե իր աշխատանքն ազատ է, և կյանկանա-
հեռանալ աշխատանքից . կալվածատիրով պահակախումբը
չներին բաց կթողնի նրա վրա կամ ճանապարհին կոնդա-
կահարի...

Յերկրի հյուսիս-արևելյան մասում (գլխավորապետ
Սևարա նահանգում) բրազիլյան միլիոնավոր դյուդացիներ,
վորոնք տարերային աղետների (յերաշտ) հետեանքով լքել
են հողը, սանակացել հողային սպեկուլյանտների չնորհիվ
կամ թալանվել իմպերիալիստական կոնցեսիաների կողմից,
դառնում են թափառաշրջիկներ, վորոնք պատրաստ են մի
կտոր հացի համար վարձվել ամենուրեք և ամեն տեսակ
պայմաններով:

Ամենից զարհուրելին ե կառւչուկ հանող բանվորների
վիճակը:

Կիսաքաղց գոյությունը, Ամազոնի մարզի անտանելի
կլիման և դժոխային աշխատանքը, քայլայիչ հիվանդու-
թյունները և գաղանային խոշտանգումները հանդում են
մասսայական մահացման: Բողոքելու տեղ չկա, արդարա-
դատության վրա հույս դնելն ապարդյուն ե...

Բրազիլիայի գործարաններում այժմ կա մոտ 800,000
տշխատող: Նրանց դրությունը չափաղանց ծանր ե՝ աշխա-
տանքի դաժան պաֆմաններ, չնչին աշխատավարձ: Բրազի-
լիայի արդյունաբերական ձեռնարկությունների մեծադույն
մասը գտնվում է ոտարերկրյա (անդիմական, ամերիկա-
կան) կապիտալիստների ձեռքում, վորոնք դաժանորեն
շահագործում են իրենց բանվորներին:

Բրազիլիայի համարյաց բացակայում ե ծանր արդյու-
նաբերությունը: Անդիմայի, ԱՄՆ-ի, Խորհրդայի, ճամանիա-
յի իմպերիալիստական տրեստները դիմամբ թույլ չեն տա-

լիս այդ արդյունաբերության զարգացումը, վորակեազի
Բրազիլիան պահեն մշտական տնտեսական կախման մեջ:
Յերկրի մետալուրգիան թույլ ե զարգացած, չնայելով, վոր
Բրազիլիան ունի մետաղահանքերի (յերկաթի, նիկելի, ման-
գանի) ամենահարուստ պաշտում այդ են ուղղում Բրազիլիայի
ոտարերկրյա տերերը, վորոնք նրան դարձրել են իրենց կի-
սադաղութը: Բրազիլիայի ազգային արդյունաբերությունը
սահմանափակվում ե գլխավորապես մանածագործական,
ջուտի, աղորիքային և այլ թեթև ինդուստրիայով: Ճիշտ ե,
յերկրում կան քիմիական գործարաններ, վորոնք կարող են
պատերազմում դործադրվող թունավորիչ նյութեր արտա-
դրել, կան ավելո-գործարաններ և նավաշինարաններ, բայց
դրանք պատկանում են վոչ թե բրազիլիական բուրժուազի-
ային, այլ ոտարերկրյա կապիտալիստներին: Շատ Փիրմա-
ներում բրազիլիայի դիրեկտորները փոխդիր անձնավորու-
թյուններ են, իսկ իսկական տերերը՝ ճապոնական, անգլի-
ական, ամերիկական և այլ կապիտալիստներն են:

Բրազիլիայի աշխատավոր մասսաների աղաղակող աղ-
քատություն և աշխատանքի ստրկական պայմաններ, իսկ
դրա հետ միասին— հսկայական բնական հարստություններ:
Բրազիլիայի շատ վայրերի տրոպիկական կլիման նպաստում
ե այնպիսի ոգտակար կուլտուրաների զարգացմանն, ինչպես
սուրճը, բամբակը, շաքարյեղեղնը, կակաոն, ծիստոսը,
բրինձը և այլն:

Բրազիլիայում շատ աղամանդ ե հանվում: Գետերն ու-
նեն բազմաթիվ ջրվեժներ, վորոնց եներդիան գրեթե չի ող-
տագործվում: Տափաստաններում՝ պահածում են ճիերի մեծ
յերամակները և յեղջյուրավոր անտառների հոտերը, իսկ

անտառներում հանվում և կառւչուկ, բուսական մեղքամոմ, բուսայուղեր և բազմաքանակ արժեքավոր դեղանյութեր:

Այս հարուստ և արդավանդ յերկիրն ուժեղ թափով շահագործվում է իմպերիալիստական տերությունների կողմբց: Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակներից Անդլիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ճապոնիայի և այլ յերկրների խոշոր կապիտալիստները մրցում են միմյանց հետ՝ Բրազիլիայի և Հարավային Ամերիկայի մյուս յերկրների վրա իշխելու համար:

Ոտարերկրյա իմպերիալիստներն ի՞նչպես ստրկացրին Բրազիլիան: Նրանք այս յերկիրը ստրկացրին աստիճանաբար, խոշոր փոխառություններ և դրամական գումարներ տրամադրելով բրազիլյան արդյունաբերությանը, տրանսպորտին, ելեկտրական ցանցին և այլն: Ոտարերկրյա միլիոնատերերը գիտեյին, թե ինչ եյին անում: Ամեն անդամ, յերբ նրանք փող եյին տալիս, բրազիլյան կառավարության առաջ վորոշ ստրկական պայմաններ եյին դնում, իրենց համար ձեռնառու պայմաններ եյին ապահովում տեղական հարստությունների շահագործման և Բրազիլիայի հետ կատարվող առևտրի բնագավառում:

Բրազիլիան վոչ միայն տնտեսապես, այլև քաղաքականապես ստրկացնելու համար իմպերիալիստները զործի եյին դնում բոլոր միջոցները, վորապեսզի կառավարության մեջ տեղ դանեն նրանց հաճելի և հլու մարդիկ: Ոտարերկրյա կոնցեսիաների տերիտորիաներում նրանք ունեն նույնիսկ սեփական վոստիկանություն, սեփական դեսային նավատորմիդ. այստեղ բանվորների ոռծիկն ավելի քիչ և, քան յերկրի մնացած վայրերում, իսկ բանվորական կազմակերպությունները բոլորովին արգելված են:

Ամաղոնի և Տափաժոսի ափերից մեկի ուայոնում միլիոնավոր հեկտարներով հողեր, վորտեղ կառւչուկ և հանվում, պատկանում է Հենրի Ֆորդին, ամերիկական «ավտոմոբիլային արքային»: Ամաղոնի անծայրածիր ավագանում ավելի քան $7\frac{1}{2}$ միլիոն հեկտար հող գտնվում է անգըլիացիների, ամերիկացիների և ճապոնացիների ձեռքում, իսկ բրազիլիացիներին պատկանում են միայն Ռիու Նեղրույի և Ժապուական միջև գտնվող հողերը: Ոտարերկրյա իմպերիալիստների վերահսկողության տակ և գտնվում Բրազիլիայի գլխավոր հարստությունների՝ սուրճի, բամբակի, մրգերի արտադրությունն ու արտահանությունը:

Բրիտանական կապիտալը վերահսկողության և յենթարկում յերկաթուղիների միմասը, սուրճի պլանացիաները, նավազնացությունը, բանկերը: Անդլիան հատուկ «սուրճի փոխառություններով» խճողել և բրազիլյան ամրող արտադրությունը: Բրազիլիայի կարևորագույն բանկերը, վորոնք Փինանսավորում են սուրճի արտադրությունը, կախված են բրիտանական կապիտալից: Բայց յեթե բրիտանական կապիտալն իշխում և Բրազիլիայի կենարոնական գոտում, ապա ամերիկական կապիտալը հաստատվել և հարավային նահանգներում, ուր զգալի տեղ են բոնում անասնաբուժության արտադրանքը և անտառային արդյունաբերությունը: Բրազիլիայի հեռագիրը, հեռախոսը, եներգետիկան գտնվում են գլխավորապես ամերիկացիների ձեռքում: Մյուս կողմից՝ սուրճի արդյունաբերության վրա ԱՄՆ մեծ ազգեցությունը պայմանավորված են նրանով, վոր ԱՄՆ հանդիսանում են բրազիլյան սուրճի գլխավոր սպառողը:

Իտալական իմպերիալիստներն ել մեծ հույս են դնում

Հարավային Ամերիկայի և մանավանդ Բրազիլիայի վրա : Խտալացիք այժմ փաստորեն վերահսկողության են յեն թարկում վոչ միայն Սալվադորի, Պերույի, այլև մասամբ Բրազիլիայի ողային ուժերը : 1937 թվին Կաուպոնիի խտալական ավիացիոն Փիրման Պերույի մայրաքաղաքի մոտ կառուցեց ոմբակոծիչների հավաքման գործարան, 7 հազար քառակուսի մետր տարածությամբ հսկայական անգարներով, և մի այերոդրոմ : Խտալացիք Բրազիլիային ռազմանավեր և սուլզանավեր են ծախում : 1937 թվի ամառն խտալական քաղաքացիական ավիացիայի դիրքեկտոր գեներալ Պելեգրինին Բրազիլիայի, Արգենտինայի և Ուրուգվայի հետ համաձայնություն կնքեց Խտալիայի և այդ յերկրների միջև ողային կապ հաստատելու մասին :

Ճապոնական կազմական կամացասեր ունեն : Բրազիլիայում բամբակի արտադրանքը խոշոր չափով գտնվում է ճապոնացիների ձեռքում : 1937-1938 թ. թ. Հարավային Ամերիկայից ճապոնիա կատարվող ներմուծումը 1934 թվի համեմատությամբ ավելացել է 370 տոկոսով :

Բրազիլիայում 1930 թվին կար 700 հազար գերմանացի, 1½ միլիոն խալացի և 200 հազար ճապոնացի, վորոնց մեջ ֆաշիստները կատաղի աղիտացիա ծավալեցին : Խտալացիները Բրազիլիայում լրտեսության լայնորեն ճյուղավորված ցանց ստեղծեցին և առատաձեռնությամբ Փինանսավորում են «ինտեգրալիստների» ֆաշիստական կուսակցությունը :

ԱՄՆ բուրժուազիան, անհանդատանալով այն հանգամանքից, վոր խտալական և ճապոնական կապիտալիներն արագորեն մուտք են դործում կատինական Ամերիկայի յերկրները, վերջին ժամանակներու ավելի վճռական ուղղու-

թյուն ե բռնել՝ Բրազիլիայում իր գերքերն ամբազնդելու համար : Այս իր արտահայտությունն ե դաել նաև խտորեն վորոշված այն աղբեցության մեջ, վոր ԱՄՆ նախագահ Ռուզվելտի հակաֆաշիստական քաղաքանությունը գործում ե Բրազիլիայի կառավարության վրա : Բրազիլիան ժողովուրդը տվյալ պայմաններում շահագրղոված ե նրանով, վորպեսդի ուժեղանա ԱՄՆ աղբեցությունը Բրազիլիանով, վորովհետու ԱՄՆ համառորեն այի կառավարության վրա, վորովհետու ԱՄՆ համառորեն պայքարում են Հարավային Ամերիկայում Փաշիստական պետական գումարիների աղբեցության ուժեղացման դեմ : Բրազիլիայում հակաֆաշիստական, հակախմարիալիստական պարզումը ջերմ աջակցություն ե դանում բրազիլան պրոցետարիատի շահագրղությունը մասսաների մեջ :

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմը, վոր ամբողջ աշխարհում աշխատավոր մասսաների ամենածայրահեղ աղքատություն և ավերածություն առաջացրեց, նույնական ունեցալ նաև Բրազիլիայում, վոր հանդիսանում եր Անդիայի և ԱՄՆ իմպերիալիստական պետական կիսազարությը : Առաջին անհրաժեշտության առարկաների դները կատաստրոֆիկ կերպով բարձրացան : Դրամի արժեքը քանի դնում ավելի յեր ընկնում : Բանվորների և ծառայողների աշխատավարձը չնչին եր : Կապիտալիստները, վորոնք ձգտում եյին պատերազմի ամբողջ ծանրությունը դնել աշխատավորների ուսերի վրա, չեյին ուղղում վոչ մի դիջում անել, աշխատելով սովոր բանվորներից և զյուղացիներից քամել այն ամենն, ինչ վոր կարելի յեր : Այս բոլորն ուժեղ թափով հեղափոխականացարելի յեր :



նում եր Բրազիլիայի աշխատավոր մասսաներին : Դրանում Հակայական դեր խաղաց նաև բոլշևիկյան հեղափոխությունը հեռավոր միության մասսաներին :

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության առաջին արձականքները բրազիլյացիներին հասան արդեն 1918 թվին :

Մեծ Հոկտեմբերի հրեղեն լողումները, Լենինի—Ստալինի կուսակցության գաղափարները յերկրի մի կիսազնից թափանցեցին մյուս կիսագունդը, հասնելով նաև հեռավոր Բրազիլիայի ամենախուլ ույանները :

Ճիշտ եւ, ոռուսական հեղափոխության վերաբերյալ տեղեկությունները Բրազիլիա հասան աղավաղված ձևով— բուրժուական մամուլի կեղծ, զրպարտչական լուսաբանությամբ : Այնուամենայնիվ, Բրազիլիայի բախսաւզուրկ աշխատավորներն ըմբռնեցին Ռուսաստանում կատարված իրադարձությունների իմաստը և համակլեցին ջերմ սիրով դեպի Լենինը և «ոռուսական խորհուրդները» : «Լենին» անունը դառնում եր հացի, հողի և ազատության համար մղվող պայքարի սիմվոլ :

1918—1920 թ. թ. ովկիանոսի ափի խոչըլ կենարուններում (Ռիո-դե-ֆանեյրո, Սան Պաուլո, Ռիսիֆի և այլն) ծավալվեց համերաշխության բանվորական հզոր շարժում Խորհրդային հանրապետության հետ : «Ապարտակ», «Վուդու Պու» (այսինքն «ժողովրդի ձայն») բանվորական թերթերը հրճվանքով գրում եյին «ոռուսական խորհուրդների» մասին : Բրազիլիայի գործարանների բանվորները հուգունքով հետամուտ եյին լինում այն հերոսական պայքարին, վոր մշում եր աշխարհում առաջին բանվորագյուղ-

դացինական իշխանությունը, վորը պաշտպանում եր իր նվաճումները բազմաթիվ ինտերվենտներից և ներքին հականդախոխությունից :

Ռուսաստանի խորհրդային իշխանության պատվին կատարված ցույցերի ժամանակ բրազիլյան պլուետարների բազմությունները մեծ քաղաքների փողոցներում քահում եյին հետևյալ լողումներով . «Կորչի Դենիկինը» (կամ Կոլչակը, Յուլենից, Վրանգելը—ըստ մոմենտի), «Կեցչե Լենինը» : Կորչի ինտերվենցիան» :

Առանձնապես բուռն և բազմամարդ եր 1919 թվի մայիսի 1-ի ցույցը Ռիո-դե-ֆանեյրոյում : Ռիո-դե-ֆանեյրոյի Ավենիդո Ռիո Բրանկո մեծ փողոցի հոյակապ պլուետարների վեհելի քան 60 հազար բանվորներ եյին քայլում :

Բրազիլյան պլուետարները Խորհրդային Միության հետ համերաշխ լինելու իրենց կամպանիան կապում եյին տնտեսական կոնկրետ պահանջների հետ : Նրանք գործադուլ եյին անում, պահանջնելով ավելացնել աշխատավարձու և մտցնել ութժամյա աշխատանքային որ, և կարողացան հաջողացնել թե մեկը և թե մյուսը :

Դեռ 1918 թվին մայրաքաղաքի մանածագործ բանվորներն առաջին անգամ փորձեցին դրավել իշխանությունը : Բանդույում (Ռիո-դե-ֆանեյրոյի արվարձանը) նրանք դուրս յեկան դենքը ձեռներին և շարժվեցին դեպի Մանկական պարագաների մասնակը, փորձելով տիրանալ դինապահանական : Աւտոտամբությունը ճնշվեց :

Բանվորների նույնական դեղի ունեցան յերկրի մյուս քաղաքներում ևս, բայց այդ յերեցքներին նույնը վիճակվեց, վորովհետեւ կոմունիստական կուսակցություն չկար, ապատամբությունը դեկավարում

ելին անարխիստները¹⁾ , վորոնք անընդունակ ելին այդ յելույթները հաղթական վախճանի հասցնելու : Այս պատճառով կառավարությանը միշտ ել հեշտությամբ հաջող վուժ ճնշել այդ մասնատված և վատ կազմակերպված յելույթները : Համաձայնականներն ու պրովոկատորները սկսեցին գործարաններում կատարել իրենց քայլայիչ աշխատանքը : Ուեակցիան հաղթանակեց ...

Բըաղէլիայի Հյուսիս-Արևելքում, Մինաս-Ճերայեսում,
Ոլու Գըանդի գու Սուլում և այլ վայրերում յերեան յե-
կան համարձակ, ժողովրդին նվիրված մարդեկ, վորոնք
պլանտացիաների՝ ստրկական աշխատանքից հյուծված, սո-
վալուուկ բանվորներին, գյուղացիներին և բարրակներին
վորեորությամբ պատմում ելին սոցիալիզմի հեռավոր
յերկրի մասին, ուր բանվորներն ու դյուլացիները վանդել

Են կապիտալիստներին և կալվածատերերին և սեփական ձեռներով նոր կյանք են կատուցում:

Բանվորական շարժման ջախջախումը հանդեց անար-
խիստական կազմակերպությունների վերջնական ուսուակ-
տուման և քայլքայման։ Անարխիստները և այդ խմբակների
առաջնորդները չուտով հեռացան բանվորական շարժումից։
Նրանցից վոմանք զբաղվեցին ամեն տեսակ կրօնական ուս-
ուունքների ուսումնասիրությամբ, վոմանք ել ուղղակի ծա-
ռայության մտան վոստիկանության մոտ։

Այն սերմը, վոր Հոկտեմբերյան սոցիալստական Մեծ
հեղափոխությունը նետել եր բրազիլյան ժողովրդի բանվո-
րական և գյուղացիական մասսաների մեջ, այնուեղ ամենա-
բարենպաստ հող կտավ: Սոցիալիստական հեղափոխության
դաշտարներն ու լոգունդներն ամենակենդանի արձագանք
ենին զանում բրազիլյան պրոլետարիատի հոծ բազմություն-
ներամ: Հարկավոր եր միայն կազմակերպել և դեկավարել
հորը և աճող հեղափոխական շարժումը:

1921 թվին Բրազիլյան պրոլետարիատի ծոցում ծնունդ առավել Բրազիլիայի կոմիուսակցությունը : Նա ծագեց գաղափարական ապաքքարում հանուն պրոլետարական դիկտատուրայի , ընդդեմ ուժորմիստների համաձայնականության և անոկրառման անարխիստների ապաքքագաղափարականության և անոկրառմանության : Նա ամբողջությունում և ձեւավորվում եր պրոլետարական պետության , տվյալ սպամական մոմենտում Բրազիլիայի պրոլետարական կուսակցության տակտիկայի և ստրատեգիայի վերաբերյալ բոցաշունչ վեճերում : Զնայելով , վոր 1921 թվին Բրազիլիայի կոմիուսակցությունը ձեւականորեն «Թույլատրված» եր , նա առաջին խել որից փաստորեն նետվեց ընդհատակ և իր ծագման որից մինչեւ այժմ անլեզար ե մհում :

մի ազատ խոսք: Յերկրում մի շարք հեղափոխական ապօ-
տամբություններ սկսվեցին...

Բըազիլիայի ժողովրդական մասսաները հաճախ առիթ
ունեցել համոզվելու, վոր իրենց այսպես կոչված «ու-
մոլրատական հանրապետական ազատությունները» փաս-
տութեն գոյություն չունեն: Ժողովրդի կամքը, վոր արտա-
հայտվում եր «ազատ քիւարկության» միջոցով, ամենաան-
խեղճ կերպով խեղաթյուրվում եր:

1922 թվին ոլրեղիդենտի ընտրությունները ցույց տվին,
թե այդ յերկրում ովքեր են խիստական տերեր հանդիսա-
թում: Պրեզիդենտ գարձավ այն մարդը, վորը հաճելի յեր
քիւատական իմաստիալիտեներին՝ Արտուր Բենարդեսը՝
խոշոր հողատեր բուրժուազիայի ներկայացուցիչը:
Խոկապես ասած՝ նա նույնիսկ ընտրվեց ել: Ընտրու-
թյունները կեղծվել ելին: Ժողովրդին հայտարարեցին, թե
ընտրված է Բենարդեսը: Վերջինս ընտակալական կառա-
վարման ներկայացուցիչ եր, աշխատավորների և աշխատա-
վոր ինտելիգենցիայի դահճին: Նրա որոք առաջադիմական
մամուլին արգելվեց, արհմիություններն ու կոմկուսակցու-
թյունն անցան անլեղալ դրության:

Բենարդեսի ընտրվելն այն վերջին կաթիւն եր, վորով
ցվեց բարդիւան ժողովրդի համբերության բաժակը:
Բնակչության բոլոր խավերը, բացի արխատոկատիայից՝
հարուստ «սուրճի բարոններից»¹⁾, արդյունաբերուկան և
ֆինանսական բուրժուազիայից, զայրացան Բենարդեսի
ուսակցին ուժից, Բենարդեսի, վորը ճնշում եր ամեն-
ուակցին:

1) Կարլածատեր-ազնվականներ, վորոնք սուրճի հակայական ու-



ԱԶԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԵՐ ՄԱՀ

«Նրանք առանութին եյին... առյուծի քաղությամբ
ձերսոները դեմ յեւան թշնամու բանակին,
ու յերբ կրակեցին վերջին փամփուշտը,
թողնելով իրամատը, մեռնելու գնացեն»:
(Բրագիլիացի անանուն մի հեղինակի «Տանու-
թը խլզախները» պայմենց):

1922 թվի հուլիսի 5-ին, դիշերվա ժամը մեկին Ռիո-
դե-Ֆանելիրոյի ընակիչներին արթնացըին մայրաքաղաքի
կողակարանա ըերդի կրուպպի ծանր թնդանոթների կրա-
կոցները: Այսպես սկսվեց դեմոկրատական զինվորական
յերիտասարդության հեղափոխական ասլստամբությունը
Բենարդեսի ատելի կառավարության դեմ: Կոպակարանա-
յի կայազորը, լեյտենանտ Սկեյրա Կամպոսի հրամանատա-
յի կարգությունը, ձերբակալեց ամրության պարետին և թնդանոթ-
քությամբ, ձերբակալեց վրաց կլսավոր շատրվի վրա:

Զարդ ու վշտը եյին լինում պալատների հայելանման
ապակիները: Արկերը խորը փոսեր եյին փորում պճնազարդ-
փողոցների կոկիկ ասֆալտում: Բայց կառավարությունն
իր ժամանակին նախազգուշացված եր և արագությամբ
զորքը ուղարկեց ապստամբության ուայոնը:

Տերդի հետ միասին ապստամբեցին բարձրագույն ուազ-
մական դարբոցի սաները: Առավոտյան Ռեալենդո արվար-



ձանում սկսվեց մարտը, Առի ժամանակ կուրսանուերի հեղափոխական ջոկատները ջարդվեցին:

Բայց Կոպակաբանա բերդի մի խումբ քաջարի պաշտպանները շարունակում եյին դիմադրել: Բերդն ամբողջ որը հրակոծվում եր: «Մինաթ-Ժերայես» դրեդնոուտը թնդանոթներն ուղղեց բերդի վրա և մի քանի համազարկ տվեց: Համոզվելով, վոր հետադա դիմադրությունն անհմաստ և, Սիկեյրա Կամպոս հրամայեց բաց անել բերդի դարբանները և բոլոր ցանկացողներին առաջարկեց նահանջել ուր վոր ուղենան:

Մեծամասնությունը հեռացավ: Միայն մի փոքրիկ խումբ խիզախ հեղափոխականներ— 18 հոդի վորոշեցին զենքը ձեռներին մեռնել, բայց անձնատուր չլինել: Նրանք ամենաուժեղ հուղումով բացականչում եյին՝ «ազատություն կամ մահ»: Ազգային կանաչ-դեղին-կապույտ դրոշակը բաժանելով 18 մասի, նրանք այդ կտորները կապեցին իրենց կրծքերին և զենքը ձեռներին դուրս յեկան խճուղի:

Կոպակաբանայի խճուղու մոտ մի ամբողջ բաղմություն եր հավաքվել: այստեղ կային թե բուրժուաներ և թե բանվորներ: Ամբոխը ցնծության բացականչություններով, ծափահարություններով դիմավորեց «տասնութիւնաբերքին», վորը քայլում եր խճուղիով: Դյուրազգաց բրազիլացիները բուռն կերպով իրենց հրճվանքն եյին արտահայտում այդ յերիտասարդների հերոսության հանդեպ, յերիտասարդների, վորոնք գնում եյին անխուսափելիորեն մեռնելու:

Առավինյա փողոցում մի տեղ դրանիտը քանդված եր: Այդ տեղը կարող եր լիովին փոխարինել խրամատին: Յե-

րիառարկները պատճեշից թռան լողարանի ավագութը և սպասեցին մոտեցող զինվորներին: Տասնութը հոգի չորս հազարի դեմ: Վերջին համազարի—և հերոսներն ընկած:

Կենդանի մնացին միայն յերկուաը, Ֆանը վիրավորված Սիկեյրա Կամպոսը և Նյուտոն Պրադոն...

Նյուտոն Պրադոն նույն որը զինվորական հիվանդանոցներից մեկում մեռնում եր արյան մեծ կորստից: Գոեզիդենտի պոստում Բեռնարդեսի նախորդը, Եպիստառիկ Պեսպոան առավոտյան այցելեց այն սենյակը, վորտեղ պառկած եր Պրադոն: Նա կանդ առավ Նյուտոն Պրադոյի անկողնի մոտ և նրան դիմեց «հայրական կշտամբանքի» տոնով, հարցնելով, թե նա ինչպես կարող եր նման գործունել, խոստանալով ներել մեռնողին, յեթե վերջինա չլավ վարքով արժանի լինի դրան», այլ կերպ առած՝ մատություն անի: Նա համարձակվեց այդ առաջարկել Պրադոյին, «Կոպակաբանայի 18 հերոսներից» մեկին:

Պրադոն մոռայլ եր ու լուռ: Վերջապես, նրա համբերությունը սպառվեց և նա պատասխանելու փոխարեն պոկեց իր սարսափելի վերքերի բոլոր կապերը: Կարմիր արյունը ցայտեց շատրվանի նման: Սավաններն իսկույն թրջվեցին: Վիրավորն անզգայցավ: Արյան կաթիլներն ընկան յերեւլի հյուրի փափկասուն ձեռների և շքեղ կտայումի վրա: Գեսունն գունավեց, չիոթվեց և անուշահու յուղերով ոծված թաշկինակով զղայնորեն սրբելով նեռները, հետ-հետ գնալով, շտապեց հեռանալ սենյակից: Դեռ մինչեւ լուսաբացը վիրավորը վախճանվեց...

Սիկեյրա Կամպոսը ստիպված եր գաղթել արտաքածան:

Այսպէս տիսուր վերջացավ բրազիլան դժմոկատիկ

սովայության առաջին հեղափոխական ապօտամբությունը : Այդ անսպասելի չեր, վորովհետև մի բուռն զինվորական-ների ասլստամբությունը հենվում եր անհատների անձնա-կան հերոսության վրա և բացակայում եր ժողովրդական լայն մասսաների ոժանդակությունը ; Բեռնարդեսը դաժան գատաստան տեսավ բոլոր նրանց հետ, ովքեր թեկուզ անսւղղակի կերպով մասնակից եյին յեղեք այդ գործին :

Չնայելով բաղմաթիվ ձերբակալութուններին, խոշտան-գումաներին և մահապատիժներին, յերկրի զանազան վայրե-րում նորից սկսեցին պատրաստվել հեղափոխական նոր յելութի :

Նոր շարժման գլխավոր գործիչներից մեկն եր յերե-տարեկան կապիտան Լուիս-Կարլոս Պրես-տեսը :

Պրեստեսը ծնվել ե 1898 թվին : Նրա հայրը պատկա-նում եր դեմոկրատականորեն տրամադրված սպաների թը-վին : Նա վորդու մեջ դաստիարակել եր տոկություն, քաջություն և հավատարմություն դեպի ժողովուրդը :

Կարլոսը միշտ գերազասում եր պայքարել և վոչ թե նահանջել, դիմադրել այնպիսի վիճակում, վորդը կար-ծես բոլորովին հուսահատական եր, — և նա կարողանում եր անսպասելի կերպով փայլուն յելք դտնել :

Յերբ Կարլոսը դարձավ իննը տարեկան, նա մտավ ուսպական դիմնադիա : Այնտեղ նա այնպիսի ուսպական ժիրք ցուցաբերեց, վոր 18 տարեկան հասակում իսկույն ընդունվեց ուսպական ակադեմիա :

Այսահությամբ ձդտելով դեպի գիտությունը, Պրես-տեսը գիշեր-ցերեկ համառորեն աշխատում եր : Դրա հետ

մեկտեղ նա ստիպված եր շարումակ հոդալ ընտանիքի մա-սին, վորը նրա հոր մահից հետո խիստ կարիքի մեջ եր :

Իր խելքի և հսկայական աշխատամիրության շնորհիվ Պրեստեսը շուտով անցավ առաջին աշակերտների շարքը :

«Են ուշադրություն դարձրի այդ տաղանդամուրու ու-սանողի վրա, — պատմում եր ուղմական ականդեմիայի մի պրոֆեսոր : — Քննության ժամանակ նրա աշխատանքը ցույց եր տալիս վոչ միայն շարադրվող հարցի ճիշտ գե-տակություն, այլև մտքի նշանակալից ճկունություն և ա-զատություն : Բավական եր նայել այդ պատանու դեմքին, բավական եր զրուցել նրա հետ, և դու միանդամից յեն-թարկվում եյիր կուիս կարլոս Պրեստեսի պայծառ մտքի հզոր հմայքին : Նա միշտ հանդիսու եր . Նրա հայացքը հաստատուն եր և վճռական . շարժումները զուտպ եյին, խոսքերն անշտապ և ծյատ, հատուկ եյին այն մարդուն, վորը կշռում ու չափում ե և՛ իր խոսքը և՛ իր լուսությունը : Սրանք եյին այդ իրոք վոր որիգինալ պատանու ընորութեանը գծերը : Հետադարձում յետ յերբեք աչքաթող չեյի անում Պրեստեսին :

1923 թվին իր մեկնելու նախորյակին նա յեկավ ինձ հրաժեշտ տալու : Նա ասաց, վոր մտադիր ե աշխատել իր հայրենիքում իրրե զինվորական ինժեներ . . . ինչուս հայտ-նի յե, Պրեստեսը մասնակցեց հեղափոխության և դարձավ նի յե, Պրեստեսը մասնակցեց հեղափոխության և դարձավ նրա ամենաականավոր առաջնորդներից մեկը : Նրա ժողո-նրա ամենաականավոր առաջնորդներից մեկը : Նրա ժողո-նրա ամենաականավոր առաջնորդներից մեկը : Նրա ժողո-նրա ամենաականավոր առաջնորդներից մեկը :

Պրեստեսն այնքան փայլում կերպով ավարտեց : ակա-դիմական, վոր նրան տրվեց բարձրագույն պարգև՝ վոսկե-դեմիան, վոր նրան տրվեց բարձրագույն պարգև՝ վոսկե-դեմիան, այն ժամանակ գոյություն ունեցած կա-մեղալ : Մակայն, այն ժամանակ գոյություն ունեցած կա-

նոնի համաձայն, մեղալի համար պետք եր կանխիկ փող վճարել, իսկ Պրեստեսն այդ չեր կարող անել... Նա ոտիպ-պած յեղավ Հրաժարվել մեղալից:

Պրեստեսը պատանեկության տարիներից սաստիկ վրբ-դովզում եր կառավարական պաշտոնյաների ի չար գործ զնելու և վարձկանության, աշխատավորների աղքատու-թյան և իրավազրկության դեմ:

Արդեն ակադեմիայում Պրեստեսը խորին համակրանք եր ցուցաբերում այն մարդկանց նկատմամբ, վորոնք ապ-րում են հյուղերում, վորոնք աշխատանքի անմարդկային պայմաններում մի պատառ հաց են վաստակում: Նա ընկե-րանում եր չքավորների, նեղերի և մուլատների հետ, հա-ճախ հանդիպում հեղափոխականորեն տրամադրված բուր-ժուական յերիտասարգության հետ: Վաճառականների աը-դանեցն ու ազնվականները, վորոնք սովորում եյին ակադե-միայում, վրդովվում եյին Պրեստեսի այդ վարքի և նրա կապերի դեմ: Նրանք բարձրից եյին նայում ժողովրդի ծո-ցից յելած այդ յերիտասարդի վրա: Բայց Պրեստեսը նը-րանց վրա վոչ մի ուշադրություն չեր դարձնում:

Նա ստեղծեց դեմոկրատական համոզմունքների տեր յերիտասարդ սպաների մի խմբակ: Պրեստեսը և նրա նոր ընկերներն ուսար եյին հին սպայության վոգուն:

1918 թվին Պրեստեսն իսկական ծառայության սպայի կոչում ստացավ:

Պրեստեսը պատկանում եր սպայության այն մասին, վերը, ջերմոքեն սիրելով իր հայրենիքը և ատելով ոտար-երկրյա կեզեքիչներին, հանգես եր գալիս ժողովրդի կող-մեց ընդդեմ ուսակցիոն կառավարության: Կարլոս Պրեստե-սը միշտ ընդհանուր լեզու յեր գոնում դյուլացիների,

զինվորների, նավաստիների և բանվորների հետ: Պրեստեսը պարզ և ընկերաբար եր վարվում իր զինվորների հետ: Նա մարմնական պատիժներ թույլ չեր տալիս այն գորածառե-րում, վորոնց հրամանատարն ինքն եր լինում: Նա թույլ չեր տալիս, վոր սպաները կոպիտ վարվեն զինվորների հետ: Ամեն վոք, ով վիրավորանք եր ստանում, գնում եր ուղղակի Պրեստեսի մոտ և պաշտպանություն գոնում: Պրեստեսն անձամբ դրագիտություն եր սովորեցնում իր մարտիկներին: Նրա չնորհիվ իր զինվորների 90 տոկոսը գրել-կարդալ դիտեր, լավ եր ըմբռնում քաղաքական իրա-դարձությունները: Այդ՝ արտասովոր յերեսույթ ե Բրագի-լիայում, վորտեղ բնակչության 80 տոկոսն անդրագետ, ե:

1924 թվի հուլիսի 5-ին Սան Պաուլու քաղաքում րոնկվեց խոշոր գորամասերի հեղափոխական ապստամբու-թյուն, վորը գլխավորում եյին փորձված սպաները: Այդ ապստամբության նպատակն եր տապալել Արտուր Բենար-դեսի կառավարությունը: «Պաուլիստաների» զինվորական ապստամբությունը մանր բուրժուազիայի դեմոկրատական խավերում և աշխատավոր մասսաների մեջ վարեց այն հույսը, թե կրարելավի նրանց դրությունը:

Սան Պաուլուն, Բրագիլիայի խոշորագույն քաղաքնե-րից մեկը, սուրճի արդյունաբերության կենտրոնը, յերեք որ գտնվում եր ապստամբների ձեռքում: Վախենալով ա-պստամբության հաջողություններից և լայն թափից, Բենարդեսը շտապեց Սան Պաուլու ուղարկել մինչև 10 հաղար զինվոր: Կառավարական հրետանին կրակ բացեց, քաղաքի վրա: Ապստամբության ղեկավարը, Մարչալ Իսի-

գորո Լուսեալ հեղափոխական զորքերին հրաման տվեց թողնել քաղաքը և նահանջել յերկրի խորքը:

Ենթարկվելով հրամանին, վեց հաղար պառկիստները հետ քաշեցին յերկրի խորքը, դեպի Պարանա գետի ափերը: Անընդհատ ճակատամարտերում նրանցից սպանվեցին, միքրայլորվեցին և դերի ընկան 2200 հոդի:

Այդ ժամանակ այն կայձը, վոր բռնկվել եր Սան Պաուլույում, բոցավառեց ամբողջ Բրազիլիան: Հարավում—Ռիու Գրանդի դու Սուլ նահանջում ստեղծվում եր հեղափոխական շարժման մի նոր միջուկը, և այդ շարժման հոգին յերիտասարդ կապիտան Պրեստեսն եր: Բոլոր կողմերից նրա մոտ եյին հավաքվում կամավորները,— բանվորները և գյուղացիները, վորոնք ձգտում եյին մտնել հեղափոխական ջոկատների շարքերը: Ֆուս իդուասսույից (իգուասու և Պարանա գետերի խառնման մերձակա վայրը) պառկիստ սպաները ժամանեցին Պրեստեսի մոտ: Նրանցից ամենայեռանդունն ու փորձվածը գնդապետ Ժուարես Տավորան եր:

1924 թվի հոկտեմբերի 28-ին Սանտ Անժելույում ապստամբություն բռնկվեց: Պրեստեսի գումարտակի մարտիկները մի մարդու պես վերցրին զենքերը: Հետեւյալ որն ապստամբության հրեհը տարածվեց մյուս քաղաքներում: Վերջիններիս կայազորներն ապստամբեցին:

Պրեստեսը հրատարակեց մի մանիֆեստ, վորի մեջ այսպես եր շարադրում հեղափոխության նպատակները.

ՊՐԵՍՏԵՍԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ ԲՐԱԶԻԼԻԱՆ ԺՈՂՈՎՐԴԻՒՆ

«Հասել ե հանդիսավոր ժամը, յերբ մենք կոչված ենք ողնելու աղջային մեծ գործին: Արդեն չորս ամիս Սան Պաուլույի հերոսները կռվում են քաջարար, վորպեսզի տապալեն ատելի կառավարությունը:

Հյուսիսից մինչև հարավ ամբողջ Բրազիլիան ջերմորեն ցանկանում է, վորպեսզի՝ հաղթանակեն Սան Պաուլույի հեղափոխականները, վորովհետև նրանք պայքարում են հանուն այն սիրո, վոր տածում են դեպի Բրազիլիան, վորովհետև նրանք պահանջում են գաղտնի քվեարկություն, պահանջում են, վորպեսզի ընտրությունների ժամանակ հարգվի ժողովրդի կամքը, — վորպեսզի կոնֆիսկացիայի յենթարկվեն այն հսկայական կարողությունները, վոր կառավարության անդամները կռւապեկել են պետական դաշտարանի հաշվին, վորպեսզի կառավարությունն ավելի շատ հոգա աշխատավոր ժողովրդին ողնելու մասին, վորպեսզի Բրազիլիան լինի ուժեղ և միասնական. պահանջում են աղասի 1922 թվի ապստամբության հերոսներին և տապալել իեռնարդեսի կառավարությունը...»

Այժմ բրազիլյան հարավի պարտ և անկախ ժողովուրդը մեծ տրաղիցիաների ժողովուրդը մի մարդու պես վոտքի յե յելում: Քայցականչելով՝ «Ժամանակ և վերջ ունեց խրազիլիական արյուն թափելուն: Ժամանակ և տափակել վառավարությանը, վոր հարգի ժողովրդի կամքը»: Այդ վտանդից խուսափելու միակ յեղանակն է, վորպեսզի յերեք տարուց հետո անդիլիական կառավարությունը չվերցնի մեր մաքսատները և հարուստ հողերը: Այսոր ապստամ-

բում են Սանտ Անժելույի, Սան Լուիսի, Սան Բորդի, Իտակույի և Ռւբութվայնայի, Սանտա Աննայի, Ալեքսեյի, Սան Պետրիտոյի, Ժավուարանի և Բաժեյի բալոր զորամասերը. այսոր, նույն նախատակով վոգեորված, վոտքի յեն յելում Պալմեյրայի, Նոր Վյուրտտեմբերդի, Իֆույի, Սանտ Անժելույի, Սան Նիկոլաույի, Սանտ Յագոյի և Քինչե Պէլուտաս ամբողջ սահմանամերձ դոտու հեղափոխական դյուլացիները: Բնակչությունը կարող է հանդիսաւ լինել. կարգը կպահպանվի:

Բրավիլիայի հեղափոխական կառավարության անունից՝ կապիտան Լուիս-Կարլոս Պրեսես»:

Դեկտեմբերի վերջում կովողների ուժերը հետեւար կերպով եյին դասավալորված.

Սերրա Ժերալ լեռնային ռայոնում, աջ թեսում գործում եյին ժուարես Տալորայի և Լեռնել Ռոշի զորամասերը: Պրեսեսն առաջանում եր ճախ թեսում, Ռուբութվայի արիերի և արքենտինյան¹⁾ սահմանի յերկարությամբ: Բեռնարդուսի կառավարությունը, Պրեսեսի զորքերի ապստամբությունից խիստ անհանդստացած, դեպի հարավ ամբողջ դիվիլիաներ ուղարկեց: Գիսավոր շտաբն ոտարերկրյազին-վորական միսսիաների հետ միասին «ապստամբների խաղաղացման» պլաններն եր մշակում: Գործողությունները զեկավարում եյին յելուպական և Հյուսիս-ամերիկական հրահանգիչ-սպաները: Հակահեղափոխական զորքերի գլուխ եյին կանոնած հայտնի, փորձված գեներալները: Պրեսեսի դեմ զործի գրաւեցին զորեղ հրետանին, զբահապատճեն ու ինքաթիւնները:

1) Արքենտինան պետություն է Հարավային Ամերիկայում:

Բայց Պրեսեսը, վորը քիչ զորք (մոտ յերկու հազար հոգի), թույլ հրետանի և փոքր քանակությամբ զնդացիրներ ուներ, կարողանում եր այդ բոլոր պակասությունները լրացնել ճարտար ու համարձակ մանյովրներով, տեղանքը հիանալիորեն դիտենալով, իր զորամասերի հոկայական խանդավառությամբ: Պրեսեսի ուղմական դիտելիքները հաջողությամբ զուգացվում եյին պարտիզանական հեղափոխական պատերազմների զործնական փորձի հետ և այդ եր նրա առավելությունը Բեռնարդեսի զորքերի հանդեպ:

Շուտով՝ նրա դաշնակից համարյա բոլոր սպաները, վորոնք դուրս եյին յեկել բուրդուական միջավայրից, դադարեցրին սպայքարը և փախան արտասահման: Պրեսեսը, մնալով իբրև ջոկատի գլուխ, շարունակում եր քաջարար պահել ուղմաճակատը 10 հազար կառավարական զորքերի դեմ:

Որեցոր պակասում եր նրա մարտիկների թիվը: Թըշնամիներն ողակում եյին նրան և այդ ողակը հետզհետե ավելի յեր սեղմվում: Այդ ծանր բոպեյին նա մի նամակ ստացավ մարզալ իսիդորոյից, պառւիստների ապստամբության զեկավարից, վորը գտնվում եր արտասահմանում, Արգենտինայում:

«Այսպես ուրեմն, թանկագին Պրեսես, — զրում եր մարշալը, — շատ ջոկատներ ջարդվել են ու գաղթել, և վոր ավելի վատ ե, զրկվել են զենքից: Մնում ե միայն ձեր զորասյունը, վորի գրությունը, դատելով ձեր նամակից, վողքալի յե... Տվյալ պայմաններում ձեզ մնում ե կամ գաղթել կամ կովի բռնվել պարտության մեծ շանսերով, կամ, վերջապես, անցնել դեպի հյուսիս, ձգտելով կապվել Սանտա Կատարինայի հետ... Յեթե միայն վորևէ անսպա-

սելի բան տեղի չունենա, մնում է ընդունել, վոր հեղափոխությունն անհաջողության է մատնվել»:

Բայց հենց այդ եր, վոր Պրեստեսը չեր ուղիւմ ընդունել: Նրա համար հեղափոխությունը դեռ նոր եր սկսվել: Փայլուն կերպով ճեղքելով թշնամու ողակը, նա իր գորասյան հետ հասավ Աւրուդվայ գետը, այսուղից—Բարբական և վերջապես, Ֆոս Իդուասու: Այդ հերոսական յերթը (600 կիլոմետրից ավելի), վոր ուղեկցվում եր հըսկայական կորուստներով և զրկանքներով, միայն սկիզբն եր «Անպարտելի զորասյան» հռչակավոր արշավանքի, վորը հետագայում շարունակվեց համարյա յերեք տարի, 25 հազար կիլոմետր տարածության վրա¹:

Զորասյան վոտաբրբիկ, քաղցած ու կիսամերկ հերոսներն արիաբար ճանապարհներ եյին բաց անում անանցելի, կուսական անտառում: 1925 թվի մարտին յերկու Հազարից միաց միայն 800 հոդի... Բայց կենդանի մնացածները բոլորն ել համակված եյին հաստատուն՝ մի վճռականությամբ՝ պայքարել և վորդքան կարելի յե չուտ միանալ պատկաների հեղափոխական ջոկատի մնացորդների հետ:

Յերկարատե ճիշերից հետո, վերջապես, նրանց հաջողվեց ճանապարհ բանալ իրար հյուսված ծառերի միջով և նրանց առջև բացվեց լայն, կանաչ մի դաշտ: Զի նստեղով, Պրեստեսը և իր ուղեկիցները շարունակեցին իրենց ճանապարհը:

Ճանապարհին Պրեստեսը յերկրորդ նամակն ստացավ ժարշալ Խոխորոյից, վորն արդեն տեղեկություններ եր առաջել զորասյան հերոսական պայքարի մասին: Խնչակի լուրուկ փոփոխություն նամակի տոնում: Միթե նա, ժարշալը չեր, վոր քիչ առաջ վհատությամբ զրում եր

Պրեստեսին, թե «Հեղափոխությունն անհաջողության և մատնվել»:

«Չորսայան առաջնորդին և հրամանատարին վողջույն և ընկերական համբույր եմ ուղարկում: Յես խոսքեր չեմ գտնում, վորպեսի արտահայտեմ ուրախության, հիաց մունքի և խանդակառության զգացումները, վոր մեր բուլորի մեջ առաջացրեց ձեր նշանավոր արշավանքը, վորը ծրագրվել ու կատարվել ե պայծառ հանդստությամբ ու հերոսական համառությամբ: Հիմա յես խորապես համոզված եմ հաղթանակի նկատմամբ: Հիմա դըրությունն այսպես ե. պառվիստներն ունեն 300 հազար փամփուշտ՝ հետեւազորի համար և շատ քիչ արկեր՝ հրետանու համար: Դրամարկղում — 20 կոնտո¹): Պառվիստների մոտ կաընդամենը 1500 հրացան, վինգորները և շատ սպաներ կիսամերկ են և բոկոտն: Պարենի պաշարն արդեն չի բավականում: Դրա փոխարեն զորքի տրամադրությունը հիանալի յե: Թշնամին բարոյալքվել ե և չի հարձակվում: Յես կարգադրեցի մեր աղքատիկ պաշարներից ձեզ բաժին հանել առավելագույն չափով հնարավորը, — դրամ և ուղամամթերք... Խսիդորս կոպես»:

Այդ ժամանակ Պրեստեսը մշակեց ամբողջ Բրագիլիայի միջով անցնելու վիթխարի մի արշավանքի պլան: Նա ուզում եր դրանով հեղափոխականացնել ժողովրդական մասսաներին իր հոկայական հայրենիքի ամենախուլ անկյուններում:

Ահա թե Պրեստեսն ինչպես եր շարադրում իր պլանը մարզալ Խսիդորոյին ուղղված նամակում. «Այն 800 հոգին, մարզալ Խսիդորոյին ուղղված նամակում. «Այն 800 հոգին,

1) Կոնտոն 1000 միլրեյս ե: Այժմյան կուբոսը — 50 դումար:

վորոնց յես կարողացա բերել, 600 կիլոմետր յերթ կատարելիս ապացուցեցին, թե նրանք ինչի յեն ընդունակ, ապացուցեցին, վոր տոկունությունը հեղափոխականի լավագույն հատկություններից մեկն ե: Հեղափոխական պատերազմը Բրադիլիայում, նրա ամեն մի տերիտորիայում պետք է մանյերվային պատերազմ լինի: Դիրքային պատերազմը վայել և ավելի շուտ կառաջարական բանակին, վորի տրամադրության տակ կան զինազործարաններ, զբանահատարաններ և բավականաչափ թվով անդրազետ զինվորներ, վորոնց կարելի յեռուզարկել մեր զնդացիների գեմ: Հաղարից պակաս զինված մարտիկներով և 4 հազար ձիերով յես կարողացա բաց դաշտում անցնել թշնամու 10 հազարանոց բանակի միջով: Յեթե զինել և ուղղմաժթերքով ապահովել իմ զորացունը, ապա յես հույս ունեմ— և այս չի լինի չափից դուրս ուղտիմիզմ— շարժվել դեպի հյուսիս և ամենակարճ ժամանակամիջոցում Պարանայից անցնել Սահ Պատուլու, այնուհետեւ ուղերօրվել գեղի Ռիոդեանեյրո, — գուցե Մինաս-Ժերայնի վրայով: Կառավարությունն ի վիճակի չի լինի խանզարելու մեր հաղթական շարժմանը»:

Այդ ժամանակ Պրեստեսը կատանդուվաս ուայոնում յեղած ճեղվածքից հետո փախած պառլիստական մի քանի մարտիկներից իմացավ, վոր նրանց ռազմաճակատում դրությունը հուսահատական է։ Մարտի 30-ին պառլիստական գորամասերը սկսեցին շտապ նահանջել դեպի Պարանա գետի գիծը (գեպի Մենդես նավահանդիլստը)։ Առանց ժամանակ կորցնելու նա շտապեց դեպի Ֆոս Իդուասու, ողնելու ուժասպառ պառլիստներին։

ԲՐԱՋԻՒԹԱՅԻ ՄՐՑՈՒՄ

1925 թվի ապրիլի 12-ին Պրեստեսը ժամանեց Ֆոռ Ի-
գուաստու և նույն օրվա յերեկոյան մասնակցեց բոլոր հե-
ղափոխական ջոկատների արտակարգ ուազմական խորհր-
դակցության :

Այստեղ տուածին անդամ հանդիպեցին պառլիստական շահատների և Պրեստեսի գորքերի բոլոր հրամանատարները: Ենիւր Հրդակցության ժամանակ պարզվեց, վոր պառլիստ-ների դրությունը չափազանց ծանր է: Համեմատաբար մեծ, 420 կիլոմետր տարածությամբ ուղղմանակատում, վոր ձգվում եր Սորորոյից մինչև Ֆոս Իզուասու, մնացել եր հյանանությունները, վոր զաղունի կապ ելին պահում պրե-գիտենա Բեռնարդեսի գործակալների հետ, համառորեն չե-ցին թույլ տալիս հիվանդներին և վիրավորներին անցկաց-նել սահմանային Պաշտամագություն: Մարտիկների շարքե-րում մեծ հուղում և վհաստություն եր տիրում: Շատ սպա-ներ աղխտացիա ելին մզում, թե ոկետք ե դագարեցնել պայքարը, անձնատուր լինել թշնամու «վողորմածության»: Քայլ Պրեստեն այդ մասին լսել անդամ չեր ցանկանում:

— Իմ մարտիկները չեն դադարեցնի պայքարը, — կը ու
բականապես հայտարարեց նա, — նույնիսկ յեթե դուք մեզ
թողնեք:

Նա առաջարկեց մի համարձակ պլան, վորս ըստուագոյն առաջմական խորհրդի անդամների մեծամասնության կողմէից :

Ներս պլանն այսպես էր. բոլոր հեղափոխական շուրջ ները պետք է միանան և Պարտիայից անցնելով ոտար (Պա-

բագվայի) տերրիտորիան, այսուհեց ռէուրս դան և մտնեն
Մատուռ—Գրոսսու—կենտրոնական Բրազիլիայի սակավա-
քնակ տափաստանները: Այսպիսով զրասյունը նորից կը-
տանա գործողությունների աղատություն և մի անդամից
կազմակի հետապնդումից:

Պրեստեսն ընդգծեց, վոր յեղած տեղեկությունների
համաձայն, իրենց վրա յե գալիս կառավարության 15 հա-
զարանոց զորքը՝ դեներալ Ռոնդոնի համանատարությունը:
Ժամանակ կորցնելն անմտություն կլիներ:

— Յեթե նրանք մոտենան Պորտո Մենտեսին, մենք
կընկնենք յերկու կրակի մեջ, — բացականչեց Պրեստեսը:—
Հարկավոր ե ինչ կերպ ել լինի, կանխել նրանց:

Բոլոր զորամասերը շտագ վերակազմվեցին իրեն մեկ
զորասյուն՝ 1-ին հեղափոխական դիվիզիա, վորի վեռան
անցավ գեներալ Միգել Կոստան: Պրեստեսը գրավեց զորա-
սյան շտարի պետի պոստը:

Պրեստեսի առաջարկը կորուկ դիմալրության հանդի-
պեց թիրահավատների, վախկուների և բենարդեսի ծա-
ծուկ կողմնակիցների կողմից: Այդ մարդիկ ամենուրեք
վայնատուն եյին բարձրացնում, վոր իրը թե Պրեստեսն
«ամօթաբար իսախտում ե ոտարերկրյա տերրիտորիայի
անձեռնամխելությունը», իրը թե նա զենքը ձեռքին հար-
ձակվում ե Պարագվայի թույլ, բարեկամական ժողովրդի
յերկրի վրա:

Բայց Պրեստեսը հաստատապես շարունակում եր իրա-
գործել իր պլանը, վոր ընդունված եր շտարի կողմից:
Խիստ, անանց անտառում շտապ կարգով ձանազարհ եք
բացվում, վորով հեղափոխական դիվիզիան սկսեց հետ

քաշվել դեպի Պորտո Մենդես: Այդ մոմենտին նրա բռնած
ուազմաճակատը կրծատվեց մինչև 60 կիլոմետր:

Լոյոլայի եսկադրոնին հանձնարարվեց թշնամուն քա-
շել դեպի ֆոս իդուստու, վորպեսզի քողարկվի դիվիզի-
այի շարժումը գետի Պորտո Մենդես:

Լոյոլան հաջողությամբ կատարեց առաջադրանքը՝
բայց հետո չկարողացավ միանալ ընկերներին և ստիպված
յեղալ փախչել արտասահման: (Յերկու տարուց հետո այբ-
քաջ սպան մասնակցեց հեղափոխական մի նոր ասկտամ-
բության, վոր բանկվել եր Ռիու Գրանդի գու Սուլում՝
1926 թվին, —և ընկավ մարտում):

Պրեստեսը մի նամակով գիմեց Պարագվայի սահմանա-
յին իշխանություններին, պարտավորվելով ամենախիստ
կերպով հետեւ իր զինվորների վարչեն և պահպանել տե-
ղական բնակիչների գույքի անձեռնամխելությունն ու ա-
զատությունը: Եյապես այդ ամբողջ վախն ավելորդ եր,
վորովհետեւ Պարագվայի ա'յն մի փոքր կտոր հողը, վորով
պետք եր անցնել, ամայի եր, ճահճու և գրեթե անքնակ:
Պարագվայի սահմանային իշխանություններից թույլտվու-
թյուն ստացվեց:

Բենարդեսի համանատարությունը զարմանքից կար-
ծես կայծակնահար յեղավ, վոր Պրեստեսի դիվիզիան այդ-
պես հանկարծակի անցել եր գետից գետի Պարագվայի ա-
վոր: Գեներալ Ռոնդոնն արդեն նախաճաշակում եր հակ-
թանակը, չկասկածելով, վոր «Լկտի խոռվարաները»
ստիպված կլինեն անձնատուր լինել, և հանկարծ — ինչպի-
ուի՝ հիսաթափություն:

— Մենք ջարդեցինք այն շիշը, ուր մեզ քշել եր Ռոն-
դոնը, — կատակում եր Պրեստեսը: — Բայց հարգելի գենե-

բալը մոռացել ե, վոր լավ հարվածով կարելի յի ձիւ
ջարդ ու փշուր անել:

Հուսահատված Ռոնդոնը կառավարության ուղղած հե-
ռադրական գեկուցում սրտնեղությամբ հազորդում եր,
վոր «Կեղափոխական հիքը յոթը դլուխ ունի. մեկը կըտ-
րում ես, մյուսն անվնաս ե»:

Պարագվայի սահմանն անցնելը սկսվեց ապրիլի 29-ին:
Հետ չեր այդ ամայի, անջուր տերիտորիայով անցնել 125
կիլոմետր մինչև Մարակաժու լեռնաշղթան, վոր ծառայում
եր իրրե հյուսիսային սահման Պարագվայի և բրազիլիական
Մատու-Գրոսու նահանգի միջև։ Հարկավոր յեղակ բո-
լոր ձիերը և յեղջյուրավոր անասունները թողնել բրազիլ-
ական ավտոմ:

Քաղցած, ծարտվից տանջվող մարդիկ դնում եյին վո-
տով, ծանր բեռներն ուսերին; Զիերի փոխարեն լծված,
նրանք համբերությամբ քարշ եյին տալիս թնդանոթները և
արկերով բեռնված սայլերը։ Զինվորներն ու սպաները
քայլում եյին վոտարորիկ, պատառութած հագուստով,
յերկար մորուքներով, ոլուխներից կախված եյին յերկար
մազերի խճողված հյուսերը։ Միայն մի քանի անշտահաս
կամավորներ չունեյին բեղ ու մորուք, վոր նրանց մեծ
ցավ եր պատճառում...

Պրեստեսն այդ ամրող ճանապարհը վոտով անցավ և
հաճախ ողնում եր թնդանոթները քարշ տալու։ Իր վրանը
և ձին նա տվեց վիրավորվածներին, իսկ ինքը քնում եր
զետնի վրա, բաց յերկնքի տակ։

Մարտիկների վոտները յերբեմն թաղվում եյին ճահ-
ճուտներում։ Ծանծաղ դետերը նրանք սովորաբար վոտով
եյին անցնում։ Մարտիկների և հրամանատարների մերկ

վոտները ծածկված եյին բշտիկներով, սպիներով, վերքե-
րով։ Զնայելով քաղցին, ծարավին և հոգնածության, այդ-
քաջ մարդիկ կատակներ եյին անում և ամենագվար բուգե-
ներին առույդ և ուրախ տրամադրություն եյին պահպա-
նում։

Չորսայան կաղմում կային մի քանի կանայք, վորոնք
արշավանքի հենց սկզբից ուղեկցում եյին իրենց ամուսին-
ներին, յեղայրներին և հայրերին։ Նրանք բոլորը կամա-
վոր կերպով մասնակցում եյին ծանր արշավանքին և ճա-
նապարհին տանում եյին վիրավորների զենքերը։ Այդ ան-
վախ ընկերուհիները, վորոնք պատրաստ եյին ամեն մի
զրկանք կրելու, կովում լցնում եյին հրացանները, ողնում
եյին թնդանոթները նշանի վրա ուղելիս, սնունդ եյին
պատրաստում, վլացք անում և կարկատում պատառութած
սպիտակեղենը, կազում վերքերը, ամեն ըուպե վտանգի
յենթարկելով իրենց կյանքը, ցուցաբերելով կամքի արտա-
սովոր ույժ, հնարամտություն, անձնուրացություն և հե-
րոսություն։

Ապրիլի 30-ին զորայան ավանդարդն իջավ Մարակա-
ժույի լանջերով, վորոնք խիստ անտառներով են ծածկված,
և անցնելով գետը, նորից մտավ Բրազիլիայի սահմանները։
Մարդիկ գետն անցան մակույկներով, ձիերը— լողալով։
Պրեստեսը հրամայեց բոլոր թնդանոթները թողնել Պարագ-
վայի տերիտորիայում, վորովհետեւ սպասվելիք մարտա-
կան գործողությունները զորասյան տեղափոխություննե-
րի կայծակնային արագություն եյին պահանջում։

Սակայն մի քանի որից հետո Պրեստեսը խորապես ցա-
վեց, վոր բրազիլիական թնդանոթները թողել ե ոտար,
ուեակցիոն կառավարության տերիտորիայում։ Հավաքելով


մարտիկների մի խումբ, նա վերադարձավ սահման։ Նրանք
իրենց մարտկոցը գտան հենց այն տեղում, ուր թողել է-
յին։

Հոգնած, ցնցոտիապատ մարդիկ լծվեցին ձիերի փոխա-
րեն և քարչ տվին թնդանոթները։ Պրեստեսն աշխատում
եր բոլորի հետ հալասար։ Նրանք ամեն ըստե վտանգի հ-
յին յինթարկում երենց կյանքը. բավական եր, վոր թըն-
դանոթի անիվը սայշաքեր լեռնային արահետից, —և թնդա-
նոթը կդժուկեր ներքե, քարչ տալով հետեից քայլողներին։
Մինչեւ լուսաբաց թնդանոթներն արդեն բերվել եյին բրա-
զելյան տերիտորիան և այնտեղ թողնվել խիտ անտառում։

Լայն բացվեցին Մատտու-Գրոսսույի հարավի կանաչ
տափաստանները։ Արևմուտքում կապույտին եյին տալիս
Ամամբայի ցածրադիր, անտառապատ լեռները։ Բարձր ու
խիտ խոտաբույսերում մարդիկ տեղավորվեցին հանդսուա-
նալու։ Նրանց տանջանքները կարծ ժամանակով վերջացել
եյին։ Այստեղ կային բազմաքանակ անտառներ, վայրի
ձիերի ամբողջ ջոկեր։ Անտառները լիքն եյին վայրի թըն-
չուններով ու կենդանիներով, ուտելու պառուններով։

Գիշերները զորասյան ճամբարի մոտ, մթին ու խուլ
տեղերում հաճախ զավաճանական կրակոցներ եյին ճայ-
թում։ Այդ բանդիտներն եյին զործում, վորոնք վարձված
եյին տեղական իշխանությունների կողմից։

Ցուրաքանչյուր որը նոր զժվարություններ եր բերում։
Պրեստեսի զորասյունում փոքրողի և տատանվող տարրերը
քայքայիչ ագխատացիա եյին մղում։ Պրեստեսի համար ա-
ռանձնապես ծանր հարված եր մի ամբողջ եսկաղբոնի
դասաւերությունը, — այդ եսկաղբոնը վերադարձավ Պարադ-
վայ և դրանով բացեց ճախ թեւ։



Հոգնած, ցնցոտիապատ մարդիկ լծվեցին ձիերի փոխարեն
և քարչ տվին թնդանոթները։

Զնայելով առաջին ճակատամարտերում յեղած կորուստ-ներին, զորացունը հաջողությամբ առաջ եր շարժվում: Հրամանատար Միլել Կոստան ուղղում եր վճռական ճակա-տամարտի բռնվել կառավարական դորքերի հետ, բայց Պրեստեսը նրան հակառակը համոզեց:

— Մենք չպետք ե ոխիկ անենք, — պնդում եր Պրես-տեսը: — Մեր փամփուշտները չափազանց քիչ են: Մենք պետք ե պահպանենք կենդանի ույժը — մարդկանց: Յեթե ճակատամարտը տանուլ տանք, ապստամբությունը կխոր-տակի: Մեր նպատակը բոլորովին այլ ե, — մենք պետք ե անընդհատ հրահրենք հեղափոխության բոցը և այն տարա-ծենք Բրագիլիայի ամբողջ տերիտորիայում:

Պրեստեսը հսկայական ակտիվություն եր ցուցարե-րում: Թվում եր, թե նա դանվում ե ամենուրեք: Պրեթե ամեն որ նա իր ֆամհարզի հետ յերկար, հոգնեցուցիչ ճա-նապարհորդություններ եր կատարում շրջակայքում, նպա-տակ ունենալով հետախոտզել այն, ամենեին չվախենալով, վոր կարող ե ընկնել թշնամու ձեռքը: Յերբեմն նա յերկար ժամանակով անհայտանում եր և ընկերները սկսում եյին սաստիկ անհանդատանալ: Յերբ նա, վերջապես, յերեսում եր, ընկերները կշամբում եյին նրան, բայց Պրեստեսը հանդիսա պատասխանում եր.

— Իղուր եք դուք հուղվում: Դուք վախենում եք, վոր յես իհանդիպեմ Եեռնարդեսի զինվորներին: Այստեղ ի՞նչ սպասափելի բան կա: Չե՞ վոր այդ խարված մարդիկ նույն-պես ընկերներ են: Յես իհարկե կկարողանամ նրանց հետ լեզու դանել: Նրանք ինձ ձեռ չեն տա:

Պրեստեսը միշտ յելնում եր հետեւյալ դրույթից. «Բրա-գիլիայում հեղափոխական պատերազմը — այդ անընդհատ

շարժում է»: Անհրաժեշտ էն հեծելազորի թեթև ու աբակ՝ կայծակնաթափ շարժումներ: Դրա համար պետք եր ունենալ մատղաշ, դիմացկուն ու կայտառ չատ ձիեր: Յեւ ա-դրեստեսի զորացունը սկսեց հեծելազոր «կաղղմակերպել»: Փոքրիկ ջոկատները դնում եյին յերկը խորքը, վայրի ձե-յեր վորապու և անձահարելու. համար: Փորձված հեծե-լազորայինները ճարտարությամբ նետում եյին ողազա-րանը, վարպետորեն սանձահարելով ամենաանսանձ հովա-տակներին և մատակ ձիերին:

Այդ ջոկատները հաճախ 150–300 կելոմետրով հեռանում եյին զորացյունից: Նրանք հսկայական տարածություններ եյին անցնում, թշնամուն մոլորեցներով զորացյան տեղի նկատմամբ: Ճանապարհին նրանք այցելում եյին դյուքերն ու Փագկնդները (կալվածքները), ամեն տեղ լուր տանելով այն մասին, վոր դավիս են ազատարանները, վոր մոտ ե հատուցման ժամը բոլոր բռնակալների և վաշխառուների համար, վորոնք առնջում են ժողովրդին: Ճարպիկ հեծե-լազորայինների այդ անրանելի ջոկատները, վորոնք կարծեա թե առած թոշում եյին մի նահանդից մյուսը, սկսեցին հուզել ժողովրդի յերկակայությունը: Պրեստեսի զորացյան մարտիկների և հրամանատարների անունները թանկ եյին դասնում բրագիլյան ժողովրդի համար և նրանց, վորպես հերօսների պատվին լեզենդներ ու յերգեր եյին հյուսվում:

Հունիսի 23-ին զորացյունն անցավ Գոյաս նահանգի սահմանը, — այդ նահանգը ներկայացնում ե ալեձե, բարձ-րազիկ մի վայր ջրային յերկու մեծ սիստեմների — Ամա-զոնի և Պարանայի ջրաբաշխում: Այստեղ զորացունը նո-րից հսկայական դժվարությունների և փորձությունների հանդիպեց:

Հակառակորդն ուներ հսկայական առավելություններ—
քրետանի, զբահապատներ և ալմուսորանալորտ։ Պրեստեսի
դորամասերը խրամատներ փորեցին Մինեյրուս քաղաքի
մերձակայքում, բաց տեղում։ Հակառակորդի արկերն ընկե-
նում եյին անողոք ճշտությամբ։ Հրետանային անընդհատ
կրակն անհնարին դարձրեց խրամատներին ջուր և անունդ
մատակարարելը։ Զորասյան հերոս մարտիկներն ընկնում
եյին մեկը մյուսի հետեւից։

Լին գնդի լեյտենանտներից մեկը վորոշեց թշնամուց
զրավել զբահապատները, վորոնք մեծ վնաս եյին պատճա-
ռում զորասյանը։ Իր դասակով նա դրոհի նետվեց և ըն-
կավ, բայց նրա մնացած ընկերներին այնուամենայիլ հա-
ջողվեց շարքից գուրս բերել յերկու զրահապատ։ Տեսնելով,
չոր կորուստները հսկայական են, Պրեստեսի շտաբը հրա-
ման տվեց նահանջելու մասին, վորակեսդի փրկի մարդկանց
և ռազմամթերքը։

Գիշերային խավարում սկսեցին նահանջել։ Լեռներով
անցնելիս Պրեստեսի ձին ընկալ հորի մեջ և Պրեստեսը լուրջ
վնասվածքներ ստացավ։ Մի քանի որ անընդհատ շարու-
նակվում եր տանջալից նահանջը թիուտների, ճահճների
և անտառների միջով, լեռնանցքներով, վոլորապտույտ
կածաններով։

Բարեհաջող կերպով անցնելով Սերրա դաս Դիլիզոնեսի
ջրաբաշխի հյուսիսային կողմը, զորասյունը ժամանակավո-
րապես աղատվեց հակառակորդի հետապնդումից։

Շուտով յերեացին Ռիու Բոնիստ քաղաքի լույսերը։
Տեղական աշխատավոր բնակչությունը, իմանալով, վոր
իր մոտ և դալիս Պրեստեսի զորասյունը, սրտադին ընդու-
նելություն կազմակերպեց։

Առավոտյան քաղաքում տարածվեց սենսացիոն մի լուր,
թե կեսորից հետո բանտից աղատելու յեն կալանավորնե-
րին։ Յերբ Պրեստեսը շտապ կարգով պահանջեց կալանա-
վորների բալոր գործերը և սկսեց քննել դրանք, պարզվեց,
վոր շատերը տասը տարի և դրանից ել ավելի նստած են
առանց վորեւե հանցանքի։ Այսպես, բանտում նստած եր մի
նեղը, վորի դեմ սպանության կեղծ մեղադրանք եր հա-
րուցված և վորին արդարացրել եյին յերդվյալ տաենա-
կալները։ Չնայելով դրան, դատավորը նրան դատապարտել
եր յերեսուն տարվա բանտարկության։ Այդ նեղը միջոց-
ներ չուներ, վորպեսզի պաշտպան վարձեր։

Արդեն տասնմեկերորդ տարին եր, վոր նա նստած եր
բանտում։ Նա կմախքի յեր նման և բանտում ծերացել եր,
մաղերը սպիտակել եյին։ Այդպիսի անմեղ կալանավորները
շատ եյին, և Պրեստեսի հրամանով նրանք բոլորն ել աղատ-
վեցին բանտից։ Կալանավորների աղատվելուց հետո ժողո-
վուրդը հավաքվեց դիմավոր հրապարակում, վորտեղ,
Պրեստեսի կարգադրությամբ խարույկների վրա այրվեցին
չունեվոր քաղաքացիների տալիք պարտքերի ու հարկերի
ցուցակները։

Խոշտանդման միջնադարյան գործիքները, վորոնք գըտ-
նվեցին բանտում, ժողովուրդը նետում եր բոցավառվող
խարույկների մեջ։

Այդ և մյուս զբաված քաղաքներում զորասյունը
լույս եր ընծայում իր հեղափոխական թերթը, «Ո Լի-
բերտադոր»։ Վոր նշանակում ե «Ազատարար»։

Թերթը, միտինդները և պրոկամացիաները խիստ
նպաստեցին Պրեստեսի զորասյան ժողովրդականության ա-
ճին։

1925 թվի ողոստոսի 6-ին Բրեժենյո պլանտացիայի մոտ տեղի ունեցավ նոր ընդհարում Գոյասի վոստիկանության միջնակատի հետ, բայց Սիկեյրա կամուսը, վոր Հերադրձել եր արտասահմանից և դարձել Պրեստեսի զառասյան հրամանատարներից մեկը, վոստիկաններին այնա զգալի պարտություն պատճառեց, վոր նրանք հասկճեալ ահանջեցին: Նույն որը՝ զորացյունն իջավ Պարանան գետի նոր, ընդարձակ հովիտը: Մանր քարերով ծածկված, խիստ թե քլանջով 800 մետր իջները շատ հողնեցուցիչ եր: Զիերին զգուշությամբ տանում եյին սահմերից բռնած: Վիրավորիներին պատվաբակներով եյին տանում: Լաստերով անցնում եյին գետերը, վորոնցով կարառված և Պարանանի հսկայական հովիտը:

Պրեստեսն ընտրեց 80 հողի ամենահուսալի մարտիկներ և նրա հրամանով հեծելազորային այդ փոքրիկ ջոկառը Փոռանա Ալբերտոյի հրամանատարությամբ շտապ ուղելվորից Սան Ֆրանսիսկու գետի ափը, վորպեսզի պարզի, թե արդյոք կարելի յե գետի վրայով անցնել Բայա նահանգի տերիտորիան: Պրեստեսը հույս ուներ, վոր Բայայում զորացյանը կմիանան բազմաթիվ նոր կամավորներ, վորովհետեւ նա գիտեր, վոր Բայայի ժողովուրդը հեղափոխականորեն և տրամադրված:

Բայան անսպառ հարստություններ ունեցող տերիտորիա յեր: Պրեստեսն այստեղից կարող եր սպառնալ կառավարական զորքերին, վորոնք գտնվում եյին ըրջակա նահանգներում— Մինաս-Ժերայն, Բապիրիտու Սանտու, Գոյաս,— և ամբողջ հյուսիս-արևելքին: Գտնվելով Բայայում, զորացյունը կարողանար անհամար կոլիներ մղել, յեթե զենք և ռազմամթերք ստանար:

Բայց զգույշ Պրեստեսը դեմ եր գետն անցնելուն, նա վախենում եր, վոր զորացյունը կմնա Սան Ֆրանսիսկույի և ովկիանոսի ափի միջև:

Կամավորների գալու հույսերն այստեղ չարդարացան: Այնուամենայնիվ Բայա ընկնելն անհրաժեշտ էր. հեղափոխական շտարի ստացած զաղանի զեկուցավերը հաղորդում էր, վոր Բայայի հարավում, պայմանավորված կետում մի վոմն «Բարեկամ» զորացյանը կհանձնի շատ զենք և ռազմամթերք, վոր արտասահմանից բերել են մարշալ Խիդորոյի զինակիցները:

Ոգոստոսի 19-ին, գիշերը ժան Ալբերտոն Սան Ռոման նավահանգստային քաղաքի ռայոնում մոտենում եր Սան Ֆրանսիսկու գետի ձախ ափին: Աստղազարդ գիշերից աղջամուղջում յերեսում եյին բարկասները և շողենավի ծընելույղները:

Իջներով ձիեյերից, ջոկատը դանդաղ և զգույշ չարժվում էր գեպի ափը: Ժոան Ալբերտոն հանդիպող գյուղացիներից մեկից իմացավ, վոր նավահանգստում կանգնած շողենավին ու բարկասները լեփ-լեցուն են Բեռնարդեսի կառավարության զորքերով: Գետանցը հսկում եր Բայայի վոստիկանության մի զումարտակ:

Զցանկանալով քաղաքում կույր բոնվել, Ալբերտոն վորոշեց թշնամու վրա հարձակվել գիշերով, ջրի վրա, վորպեսզի նրան հանկարծակիի բերի: Բայց նրան չհաջողվեց իրականացնել իր մտադրությունը, վորովհետեւ վոստիկաններն իրար անցան ու նետվեցին գեպի զենքերը: Ալբերտոյի ջոկատը ստիպված յեղավ ճակատամարտի բռնվել: Ճակատամարտը տեղի մի քանի որ: Վերջապես, Ժոան Ալբերտոն

հասկացավ, վոր գործը տանուլ եւ տված, և ջոկատի հետ
վերապարձավ զորասյուն¹⁾:

Իմանալով այդ անհաջողության մասին, Պրեստեսը վո-
րոշեց չմնալ այդ յերկրներում և անհապաղ շարժվել դե-
պի հասարակածը, Բրազիլիայի Հյուսիս-արևելյան մասը:
Նա հաստատապես հավատում եր, վոր այնտեղ իրեն կո-
ժանդակեն պլանտացիաների բազմաթիվ աշխատավորները,
վորոնք պատապում են անտանելի, կիսաստրկական աշխա-
տանքից:

Զորասյունը դարձավ դեպի Հյուսիս: Սեպտեմբերին
սասաթիկ հորդ անձրևներ սկսվեցին: Զիերի սմբակները
թարգում եյին ճահճային հողում: Նույնիսկ չեր հաջողվում
ջուր յեռացնել, վորովհետեւ չկար չոր վառելիք: Այնուա-
ճետև անձրևները մի փոքր դադարեցին: Բայց հիմա եր
խարույկներից անտառային հրդեհներ սկսվեցին:

Յուրաքանչյուր գիշեր զորասյան ճանապարհը լուսա-
վորվում եր կարմրավուն ցոլքով: Մառերի կատարներից
ամպերի նման բարձրանում եյին ծիսի կարմիր քուլաները:
1925 թվի սեպետմբերի 7-ին յերկրորդ անդամ մտան Գո-
յաս և ճամբար կազմեցին Սան Դոմինգուս քաղաքի մոտ:
Հրաման տրվեց, վոր մարտիկներն իրենց կարգի բերեն,—
լողանան, լվանան ու կարկատեն հաղուստը:

Ճամբարը հետաքրքիր տեսարան եր ներկայացնում.
վոմանք կարում եյին, մյուսները լվանում, վոմանք մախա-
թով ու մոմած թելով զինված, նորոգում եյին իրենց պա-

1) Հետազայում (1930 թվեց) Ժոան Ալբերտոն ստոր կերպով դա-
փանանեց ժողովրդի գործին: Լինելով Ռիո-դե-ժանյեյրի վոստիկա-
նության պետ, նա գնդակահարում եր գործադրութավոր բանվորներին:

տառոտված վոտնամանները, վոմանք ել միջատներ եյին
կոտորքում: Առանձնապես նեղում եյին ամեն տեսակ չնա-
ճանանձերը. դրանք այնպես եյին կպչում մարմնին, վոր հա-
մարյա անկարելի յեր անջատել...

Ճանապարհին հայտաբերվեց և լիկվիդացիայի յեն-
թարկվեց իտալացի մի սոլայի, լեյտենանտ Ֆերի դավա-
դրությունը: Նա ազիտացիա յեր մզում զորասյունում գըտ-
նվող իր ընկերների մեջ, համոզելով նրանց՝ սպանել Պրես-
տեսին և կոստային, վերցնել զորասյան դրամը և փախչել
արտասահման:

ԱԹԱՁԻՆ ՀԱՀՈՂ ԱԽԹՅՈՒՆԵՐԸ

Պրեստեսի և նրա հեղափոխական զորասյան փառքը
կանխեց նրանց: Սեպտեմբերի 12-ին Պոսսե քաղաքի (Գո-
յաս նահանգ) մուտքում նրանց սպասում եյին հաղթական
կամարները՝ վողջույնի մակարդրություններով: Տոնականո-
րեն զուգված բազմությունը, վորի մեջ գերակշռում եյին
նեղերը, ցնծությամբ դիմավորեց, զորասյունը: Թնդացին
պղնձե վողերը, ջաղը նվազեց խլացուցիչ «բատուկեն»¹⁾:
Գրակները վերե եյին թռչում: Ամենուրեք փայլում եյին
ժպտացող, սեամորթ դեմքերը:

Նույն որը հրապարակավ վառվեցին հարկային ցու-
ցակները: Խարույկի վրա եյին նետվում դատական հաստ
գործերը, փայտե թակիչները, վորոնք գործադրվում եյին
զանցառություն կատարած աշակերտներին պատժելու հա-
մար: Հարուստ վաճառականների վրա ուազմատուղանք

1) Բատուկե— պար:

Դրվեց : Մի քանի մարդիկ ազատվեցին բանուց : Բայց հենց դրանով ել սահմանափակվեցին զորացյան հեղափոխական ձեռնարկումները :

Այդ ժամանակաշրջանում Պրեստեսի քաղաքական պահանջները գեռ խիստ չափավոր ելին : Շտաբում Պրեստեսի ընկերները դեմ ելին նրանց ծրագրի հեղափոխական և դեմոկրատական պահանջների հետապա ընդլայնման . նրանք ըստ Եյության ձգուում ելին սահմանափակել շարժման թափը, վախճանալով, վոր այն կընդդրկի աշխատավորների լայն մասսաներին :

Այդ դժամի չափով բացատրվում եր նրանով, վոր հեղափոխական զորացյան հրամանատափությունն իր կազմով և քաղաքական համոզմունքներով բավական խայտարգետ եր . այսուղ կային դեմոկրատական ինտելիցենցիայի, բնակչության մանր-բուրժուական խավերի ներկայացուցիչներ և կալվածատիրական խոշոր ընտանիքներից դուրս յեկածներ, վորոնք առայժմ ոժանդակում ելին հեղափոխական շարժման : Նրանք բոլորը քաղաքական պահանջների նկատմամբ ավելի հեռու չելին գնում, քան Բեռնարդեսի կառավարության տապալումը և դեմոկրատական բնույթի մի քանի աննշան ուժորմների կենսագործումը, վորոնք չելին շոշափում ունեվոր դասակարգերի և բյուրոկրատիայի արմատական շահերը : Որինակ, վորին-դնդապետ Ժուար Տավորան, պառուխտական ազստամբության նախկին մասնակիցը, աղդակցությամբ սերտ կապված եր կաթոլիկ յեկեղեցու իշխանների և հյուսիս-արևելքի Փեղաների հետ : Փոխ դնդապետ Ժուարես Տավորան արտահայտում եր բուրժուազիայի տրամադրությունները, բուրժուագիայի, վորը դժուհ եր այն արտօնություններից, վորոնցով ոգտը-

վում ելին կալվածատեր-Փեղաները : Տավորան ատում եր Բեռնարդեսին և մայրաքաղաքի ու Սան Պաուլուի ճարպակալած : «սուրճի արխատոկրատներին» : Բայց ինքն իրեն զոհել, իր կյանքը տալ հեղափոխության, ժողովրդի համար, — այսպիսի մտադրություն նա իհարկե չուներ : Տավորայի նման մարդկանց ուժեղ ճնշման տակ չափավոր ծրագիր մշակվեց : Այդ ծրագիրը հետեւյալ կերպ և ձևավորված պարզաբնությունից մեկի անունով դրված նամակում :

«Մենք շարունակում ենք մեր արշավանքը Բրազիլիայի միջով : Միանգամայն հնարավոր ե, վոր այս արշավանքը տեսի անորոշ, յերկար ժամանակ, և համարձակվում ենք հավաստիացնել կառավարությանը, վոր նրա համար դժվար կլինի մեզ հաղթահարել : Մեզ անվանում են «Հայրենասիրությունից զուրկ ավանտյուրիստներ» : Բայց մենք դեկավարվում ենք բնա՛վ վոչ թեթևամիտ հակումով դեպի արկածները, այլ բարձր լիդեալով, վորի համար մեր այնքան թանկացին ընկերներն արդեն զոհել են իրենց կյանքը... Մենք անկեղծորեն ցանկանում ենք խաղաղություն և վոչ թե պատերազմ : Ահա մեր որինական պահանջների մինիմումը, վորոնց բավարարելուց հետո մենք վարկոնք դենքն գենքը .

1) Վերացնել մամուլի վերաբերյալ որենքը :

2) Մոցնել դադտնի քլիեարկություն ընտրությունների ժամանակի :

3) Ամնիստիա կալանավորներին :

4) Պաշարողական դրության անհապաղ վերացում» :

Նրանք այնքան ել շատ բան չելին պահանջում, — ամնիստիա, մամուլի ազատություն և դադտնի ընտրություն.

ներ: Նրանք նույնիսկ չելին ել մտածում շոշափել բրադիւ-
յան բուրժուամբիւնատերերի և խոչոր կալվածատերերի
մասնավոր սեփականությունը...

Բայց նույնիսկ այդ համեստ պայմաններն ել անընդու-
նելի եյին բեռնարդեսի կառավարության համար: Կատա-
ղած ռեակցիոններն ավելի ու ավելի բարձրածայն պա-
հանջում եյին տեսնել ժողովրդական հերոսի և նրա զորա-
սյան դատաստանը:

Բայց վորքան շատ եյին ատում կառավարող դասա-
կարգերը Պրեստեսին և նրա զորասյունը, այնքան նա ավե-
լի մեծ սեր եր վայելում աշխատավորների կողմից, վո-
րոնք զորասյան պայքարում տեսնում եյին իրենց աղասա-
գըրման սկիզբը:

Պյարաններում զորասյունը դնում է Տոկանտենսի աջ
ափով: Նրան գիմալորեց սեամորթ, կիսամերկ մարդկանց
մի բազմություն: Նրանց ձեռներում կային նիղակներ,
մաղերին կապված եյին վետուրներ և զանազան զարդա-
րանքներ: Եոլոր նշաններից յերկում եր, վոր դրանք թա-
փառաշրջիկ, ռազմասեր հնդիկներ են: Մի մարտիկ, վոր
կարոլինայից եր, բացականչեց. «Զգուշացեք, դրանք մար-
դակեր շավանտներն են: Մեր յերկուներում դրանցից սոս-
կալի վախենում են և դրանց անինամ կոտորում»:

Բայց Պրեստեսը լրջորեն առարկեց.

— Դատարկ բան է: Հնդիկների «մարդակերությունը»
հնարել են այն չինովնիկները և ստրկավաճառները, վորոնց
համար այդ ձեռնոտու յէ: Այդ լեդենդը նրանց ոգնում է
սպանել կամ ստրուկ դարձնել աղաստ հնդիկներին:

Նիղակներով զինված մարդիկ փակեցին ճանապարհը,
չարունակելով ամբողջ ժամանակ փափսալ: Սկզբում դժվար

ել հասկանալ, թէ նրանք ինչ են ուզում: Բայց ահա նը-
րանց բազմությունից դուրս յեկան յերկուսը: Նրանցից
մեկը վիքուն ծանրակշուռթյամբ հայտնեց իր ով լինելը.
«մայոր Անտոնիո»: Այդ մի բրոնզադեմ մարդ եր ծղոտե-
գլխարկով, շապիկով ու շավարով, ըստ յերկույթին
թարգմանիչ:

Ցույց տալով յերկրորդին — ծանրաբարո, բարձրահա-
սակ և մկանոտ ծերունուն, նա ասաց, վոր ծերունին իրենց
ցեղի առաջնորդն է, և կոտրատվող լեզվով բացատրեց:
վոր այստեղ ներկա յեն հնդկական յերկու ցեղերի—ակուե-
շավանտների և ժամանակակից պատգամավորները:

— Հնդիկներն այնքան շատ բան են լսել «մեծ առաջ-
նորդ Պրեստեսի» մասին, վոր մինչեւ նրան չուենեն, չեն
հանդսուանա, — ասաց նա:

Նրանց ցանկությունը բավարարվեց: Տեսնելով Պրես-
տեսին, հնդիկները հանդիսավոր կերպով վողջունեցին նը-
րան և կանգնեցին կիսաշրջանաձեւ: Այսուհետեւ ցեղերի առ-
ուաջնորդը մի յերկար, տաք ճառ արտասանեց, ժեստեր
անելով և վոտները ցաւկոտությամբ խիելով գետնին:
«Մայոր Անտոնիոն» այսպես թարգմանեց առաջնորդի խոս-
քերը:

— Գեներալ, առաջնորդն ասում է՝ քրիստոնյաները
շատ կարոկլոներ!1) են տարել, կարոկլոներին տանը չեն
թողել: Նրանք սպանում են կարոկլոներին — Ռոնդոնը չար
է, նա թքել է կարոկլոների վրա: Կարոկլոն խնդրում ե—
ձի տուր, բահ տուր, մուսկետ տուր, հին չոր տուր:

Խոսքերը վերաբերում եր հենց այն գեներալ Ռոնդոնին,
վորը Պարանայի ափերում կուվում եր հեղափոխական պա-

1) Կարոկլո— հնդիկների տարածված մականունն է:

ուլիստների դեմ: Բրազիլյան կառավարությունն այդ մարդուն եր վատահել Բրազիլիայի բոլոր հնդիկ ցեղերի դեկանավարությունը, իսկ կառավարական մամուլը միաբերան դուշաբանում եր նրան «մեծ ծառայությունների և հազվագյուտ աղնվության համար»: Ինչպես յերևում և հնդիկների և Պրեստեսի զրույցից, այդ ձնշված ու կողովտված մարդիկ մեծ փոքր այլ» կարծիք ունեցին Ռոնդոնի մասին, վորը հնդիկ ցեղերին «գեկավարելիս» խոչոր կապիտալ եր դիդել:

Հեղափոխական զորացյան հրամանաւուրներն իրենց պատասխան— ճառերում չնորհակալություն հայտնեցին հնդիկներին՝ նրանց վողջույնի և վստահության համար: Նրանք աշխատեցին հնդիկներին վորքան կարելի յե պարզ բացառքել իրենց պայքարի նպատակներն ու խնդիրները: «Հանդիսավոր մասը» վերջանալուց հետո հնդիկները շրջապատեցին մարտիկներին: Ժեսունը անելով, ժպտալով, արտահայտչորեն թիթիացնելով նրանց ուսերին, հնդիկներն ամեն կերպ աշխատում եյին նրանց նկատմամբ արտահայտել իրենց խորը համակրանքը և բարեկամությունը: Յերկար ժամանակ նրանք չեյին կարողանում բաժնիկ զորացյունից, վորին ուղեցեցին դրեթե մինչև կարովին:

Նոյեմբերի 9-ին Միքատոր փոքրիկ քաղաքի մոտ գյուղացի-պարտիզանների յերկու փոքրիկ ջոկատներ Մանոյել Բենարդինոյի գլխավորությամբ միացան Պրեստեսի զորացյանը: Պարտիզանները զինված եյին վինչեստրներով: Մանոյել Բենարդինոն, Սեարայի բնակչը, նրանց մեծ մեծ հեղինակություն եր վայելում: Այդ մի խելոք, յեռանդուն և չնորհալի գյուղացիական առաջնորդ եր: Բենարդինոն վողերությամբ ագիտացիա յեր մղում իշխանու-

թյունը զրավելու, կալվածատիրական հողերը գյուղացիներին բաժանելու համար: Նա զյուղացիների հետ խոսում եր պարզ, հականալի լեզվով և արագությամբ նվաճում եր նրանց համակրանքը: Գյուղացիները նրան անվանում եյին «անտառների Լենին», թույլերի և ձնշվածների պաշտպան: Բենարդինոն և նրա ընկերները քաջարար կովում եյին կառավարական զորքերի դեմ, մեծ ծառայություն մատուցեցին Պրեստեսի զորացյանը:

Տեռնարդինոյի պիհնակը ցույց ե տալիս, թե Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության դաշտակաները վորքափ խորհն եյին թափանցել Բրազիլիայի ժողովրդական մասսաների դիտակցության մեջ:

Պրեստեսը և նրա քաջարի մարտիկներն ու հրամանաւուրները ժողովրդին պատկերանում եյին իրը ինչ-վոր հեղինակային հսկմներ:

Մարդիկ ամենալուրջ տեսք լնդունելով պատմում եյին, վոր իրը թե Պրեստեսը և նրա ուղմիկներն ուտում են «կենդանիների միայն առջևի թաթերը», զբանից ել նըրանք այդքան արագ են շարժվում: Մի գյուղացի, տեսնելով Պրեստեսին, ապշած մնաց: Նա Պրեստեսին պատկերացնում եր իրը գերբնական մի հսկա: «Յես լսել եյի,— հայտարարեց այդ գյուղացին Պրեստեսի զինվորներին,— վոր ձեր առաջնորդն ունի մի մեքենա, վորը մի ակնթարթում շատ և շատ զնդակներ ե ձուլում: Ասում են, թե ձեր դին-փորները հրաշքով, առանց վորեւ թոփչքային մեքենաների հաղարավոր լորներ¹⁾ են թոչում»:

Հյուսելով լեզենդներ ու յերգեր ի պատիվ այդ հերոսների, ժողովուրդը զովերգում եր իր սեփական, թագնը-

1) Լյո, գեղուա— 6 կիոմետր:

կած հեղաղոխական ույժը, իր իսկ զայրությը մնչողների
դեմ:

Ամբողջ ճանապարհին բնակչությունը ցնծությամբ եր
դիմավորում զորասյանը: Փոքրիկ գյուղերում և կալմածք-
ներում չափահաններն ու յերեխաները ջերմորեն վողջու-
նում եյին նրանց, հավաքվում եյին ճանապարհին, մրգեր
և այլ ուտելիք բերում: Առանձնահատուկ ուշադրություն
եր դարձվում վիրավորվածներին և հիվանդներին: Կանայք
պուտուկներով թարմ կաթ եյին բերում, տաք սուրճ եյին
խմացնում վիրավորվածներին և հիվանդներին, յերկար
զրուցում եյին նրանց հետ:

Ամեն մեկն անպայման ուղում եր տեսնել Պրեստեսին:
Մարտերում խիստ նոսրացած զորասյան մեջ անընդհատ
ժանում եյին նոր կամավորներ— դիխավորապես մուլատ-
ները, հնդիկներն ու նեղերը, վորոնք թողնում եյին
պլանացիաների տաժանակիր աշխատանքը:

— Իմ անունն է Զե Վիուվո, — ասաց Պրեստեսին մի
մուլատ, — Յես աղքատ եմ, նույնիսկ հրացան ել չունեմ:
Բայց յես ունեմ ուժեղ ձեռներ, արագավազ վոտներ, սուր-
աչքեր: Բացի կյանքից, ուրիշ վոչինչ չունեմ ձեզ առա-
ջարկելու: Վերցրե՛ք այն:


Զե Վիուվոյի նման շատ մարդիկ եյին դալիս Պրեստե-
սի մոտ: Պրեստեսը նրանց համար որինակ եր ծառայում,
թե ինչպես պետք ե անձնվիրաբար զոհվել ժողովրդի հա-
մար: Զորասյան հրամանատար Միդել Կոստան հետզհետե
յերկրորդական տեղ եր բռնում,— վոչ թե այն պատճառով,
վոր այդ քաջ ու փորձված մարդը վատ եր, այլ այն
պատճառով, վոր ժողովուրդը Պրեստեսի մեջ տեսնում եր
իր մարդուն— ժողովրդական առաջնորդին և տրիբունին:

Հրամանատարական կաղմից նա յեր, վոր բոլորից ավելի
մոտիկ եր մարտիկների մասսային և նրանց մեջ հսկայա-
կան հեղինակություն եր վայելում: Նա լոկ միայն սպա-
կան վեղինակություն, այլև լնկեր եր, զինվորների
չեր, ինչպես Միդել Կոստան, այլև լնկեր եր, զինվորների
չեր, ինչպես Սիրիկ գոստակարով, վորը հրաշքներ և կատա-
խնչպես հանճարեղ զորավարով, վորը հրաշքներ և կատա-
խնչպես կամարեղ զորավարով, վորի ու սրի գեմ:

Մարանյանի քաղաքներում մարտիկների վրա ծաղկե-
ներ եյին թափում: Կանայք նրանց կարմիր շարֆեր եյին
նվիրում: Տեղական բանվորական թերթի տպարանն
անվճար լույս ընծայեց զորասյան «Ազատարար» թերթի
հերթական համարը: Զորասյան միտինդները հսկայական
հաջողություն ունեյին և նրանցից հետո սովորաբար շատ
կամավորներ եյին ցուցակագրվում:

Բոլորովին այլ եր բնակչության վերաբերմունքը դե-
պի կառավարական բանակն ու վոստիկանությունը: Բրա-
զիլյան ժողովուրդն ատում եր Յեռնարդեսի կառավարու-
թյան պաշտոնյաներին, սպաներին և վոստիկանության:
Ժողովրդի ատելությունն ուժեղանում եր նաև նրանով,
վոր կառավարական բանակի հրամանատարների մեծամա-
վոր կառավարական բանակի հայտագործներ եյին: Այդ-
նությունը հայտնի սրիկաներ և հանցագործներ եյին: Այդ-
մասին առանց քաշվելու գրվում եր պաշտոնական փաս-
տաթղթերում:

Ահա, որինակ, ինչ եր դրում պարաիբյան վոստիկա-
նության պետը, վոխովնդապետ Առբրեյրան նահանգի
պրեզիդենտին. «Թույլ ավելի զեկուցելու ձերդ գերազան-
ցության, վոր Գերբրո Սիրիկնոյի գնդի սպաներն իսկական
խայտառակություն են մեզ համար: Լեյտենանտ Վիսենտե
Գալոն անձնական ծախսերի համար պահանջեց հազար



Մարանյանի քաղաքներում մարտիկների վրա ծաղիկներ ելին
թափում.

միլլրեյս։ Սպա Պերեյրան նույնպիսի գումար կորզեց մեր
պլանտատորից։ Այն հայտնի բանդիտը, վոր սպանել եր
մեր վոստիկանության պետ Գոմեսին, բանակային ցուցակ-
ներում յերեան և յեկել «կապիտան Սոսուտ» անվան տակ։
Կապիտան Կալիկստոյի ամբողջ 7-րդ վաշտը 90 տոկոսով
բազկացած և հանցագործ տարրերից։

Ահա թե ովքեր ելին Պրեստեսի դեմ յելած ռեակցիոն
բանակի սպաները։ Մի՞թե զարմանալի յե, վոր ժողովրդա-
կան մասսաների համակրանքն ամբողջովին հեղափոխական
զորացյան կողմն եր, վորը բոլորին աղջեցնում եր իր անոռ-
բինակ աղնվությամբ և խիզախությամբ։

Բրազիլիայի դյուլացիական մասսաների բուռն ատե-
լությունը զեպի պաշտօնական իշխանությունները՝ արտա-
հայտվում եր զվարարության պարտիզանական շարժմամբ։
Գյուղացիների շատ թե քիչ խոչորաթիվ խմբեր ապստամ-
բում ելին իրենց կալվածատեր-Փեոդալի դեմ և զենքով
միջոցներ ելին գտնում իրենց գոյությունը պահելու հա-
մար։ Նրանց մեջ առավելագույն հռչակ եր վայելում Լամ-
պեոնը¹⁾, վորը նշանակում ե «ջահ»։ Նա ավելի քան 10
տարի հաջողությամբ պայքարում եր իրեն հետապնդող
զորքերի դեմ։

Պարտիզանները հաճախ հարձակվում ելին հարուստ
հողատերերի և առևտրականների վրա, նրանցից մթերքներ
ելին զրավում և զրանք բաժանում ավանների և դյուզերի
աղքատացած բնակիչների միջև։ Տեղական բնակչության
ոժանդակությունը կառավարության զորքերին և վոստի-

1) Վերջերս մի դավաճան Լամպեոնին մատնեց բրազիլյան վոս-
տիկանության և Լամպեոնը մահապատճեն յենթարկվեց։

կանությանը դրկում եր պարտիզաններին բռնելու հնարա-
վորությունից : Լամպեռնի գլխի համար դրամական պարզե-
նքը նշանակված, բայց կառավարության ձեռքը վոչինչ
չընկալ : Վոստիկանական ջոկատները դաժան բռնություն-
ներ եյին գործադրում գյուղացիների դեմ, վորոնք կասա-
կածվում եյին Լամպեռնին համակրելու մեջ . այդ ջոկատ-
ները գյուղացիներին արտաքսում եյին հողից և վառում
նրանց բնակարանները :

Պրեստեսի աճող ժողովրդականությունից վախեցած
պրեզիդենտ Բեռնարդեսը դիմեց . . . Լամպեռնին : Նա վեր-
ջինիս խոստացավ փող, ներում և մեծ աստիճաններ (!),
ինչ վոր Լամպեռն ուղենար, միայն թե նրան ոգներ «Ճըն-
շելու ատելի Պրեստեսին » :

Բայց Լամպեռնին չեր կարելի գտնել : Պրեզիդենտի և
նրա վարձկան վոհմակի առաջարկին նա պատասխանեց
մերժումով :

Դուրս գալով կարոլինայից, զորայումը դարձավ դեպի
արևելք և դնում եր Խիլո Բալլաս դետի, Պարնախայի վը-
տակի հովիտով : Կառավարությունը շտապ կարգով զորքեր
կենտրոնացրեց ովկիանոսի ափում :

Ֆորտալեզում զորքերը գիշեր ցերեկ ափ եյին դուրս
գալիս և մեկնում եյին դեպի Մարանյան : Պրեստեսի խոր-
հուրդով զորայան շտարը վորոշեց դիտմամբ կանդ առնել
Մարանյանում և Պիառոյիում, վորապեսի թշնամուց ավելի
շատ ուժեր քաշել դեպի այնտեղ : Իրականում Պրեստեսը
բոլորովին մտադիր չեր այնտեղ մնալու : Նա վաղորոք վո-
րոշել եր շարունակել յերթը դեպի արևելք, դեպի ովկիա-
նոսի ափը :

Պրեստեսն այդ մանյովը ձեռնարկեց նրա համար,

Վորապեսի վախեցնի թշնամուն և կանխի գորայան հետա-
գա առաջարժման ալանի վիժման հնարավորությունը :
Դրա համար նա հիմքեր ուներ : Նա սկսեց կասկածել, վոր
զորայան շարքերում լրտեսներ և կառավարության դոր-
ծակալներ են թագնված :

Որինակ, մի՞թե կասկածելի չե, վոր կառավարությանը
հայտնի յեն դառնուում շտարի գաղտնի պլանները, չնայելով
շտարի ամբողջ նախազգուշության : Խնչո՞վ բացատրել կըր-
յուտերի հանկարծակի ձերբակալությունը : Այդ ընկերոջը
գաղտնի հանձնարարություն եր տրված . նա մեկնեց գեպի
հյուսիս, վորապեսի կապ հաստատի տեղական իշխանու-
թյունների այն ներկայացուցիչների հետ, վորոնք դժգոհ ե-
յին կառավարությունից : Բայց ինչ-վոր մի մատնիչ Մա-
րանյանի իշխանություններին շտապ հեռագիր տվեց կրյու-
գերի մեկնելու մասին : Դեռ չհասած Գրաժանու քաղաքը,
Կրյուգերը բռնվեց և բանտ նետվեց :

Ժուարես Տավորայի և յուաների վարքը Պրեստեսի
մեջ կասկած առաջացրեց : Նրանք գտպում եյին Պրեստեսի
յեռուն եներդիան, յուրաքանչյուր հարմար դեպում հա-
մոզում եյին հրաժարվել վճռական գործողություններից :
Կարոլինա ժամանելուց հետո, որինակ, ժուարես Տավորան-
և Լին գումարտակի հրամանատար Կորդեյրոն հեռագիր
տվին պրեզիդենտ Բեռնարդեսին, հաղորդելով, վոր զորա-
յունը գրավել ե քաղաքը, քաղաքավարությամբ խնդրելով,
վոր նա «փոխի իր անհաջող վերաբերմունքը, հրաժարվի
ատելությունից և վրեժից» : Այդ յելույթի համար նրանք
վոչ վոքի կողմէից լիազորված չեյին :

Դեկտեմբերի 3-ին կատարվեց մի դեպի, վորը կարող
եր խիստ վողբալի վախճան ունենալ, յեթե չիներ Պրես-

տեսի արիությունը, տակտը և սառնասրությունը։ Այդ
որվա յերեկոյան Պրեստեսին հաղորդեցին, թե Բենիսիո
դու Սանտասի եսկադրոնի դինվորները՝ ներխուժել են Տամ-
բարի մոտ գտնվող գյուղը և այնտեղ անկարդություններ
են անում։

Վորպես տարբերություն զորասյան մարտիկների հիմ-
նական մասսայից, Բենիսիոն և նրա հայրենակիցները՝ զին-
վորականներ չենին։ Իրանց ամբողջ վարքով նրանք ցույց
ելին տալիս, վոր վոչ մի կարգապահություն չեն ուղարկ
ճանաչել։ Իրենց բանդիտական արարքները նրանք բնորո-
շում ելին իրու «աղամարդության», «Ճարպիկ խիզախու-
թյան» արտահայտություն։

Պրեստեսն անկարգապահներին կանչեց իր մոտ և խիստ
նկատողությունից հետո՝ նրանց հրամայեց հանձնել զենքե-
րը։ Բայց նրանք չընթարկվեցին հրամանին, պատշաճնե-
րից հանեցին ատրճանակները և սպառնական տեսքով դը-
րանք ուղղեցին Պրեստեսի վրա։

— Զինաթափել դրանց, — հանդիսու հրամայեց Պրես-
տեսը զորասյան մի քանի սպաններին և շարքայիններին,
վորոնք ներկա ելին այդ տեսարանին։ Կարգապահությունը
խախտողները մի ակնթարժում դինաթափիվեցին և ձերա-
կալվեցին։

Քեներալ Կոստան սաստիկ զոյլացավ։ «Նրանք արժանի
պատիժ կստանան» — հայտարարեց նա։ Բայց Պրեստեսը
վորոշեց այլ կերպ վարվել։ Հետեւալ որը նա մոտեցավ
այն չենքին, ուր նստած ելին ձերբակալածները, և ի
զարմանք բոլորի հրամայեց նրանց աղատել։ Բենիսիոն դը-
րիկոր կանգնած եր Պրեստեսի առաջ։

— Անհապաղ պատրաստիր եսկադրոնը թեային մարշ

համար, — կարձ հրամայեց Պրեստեսը։ Յերկու ժամեց
հետո յես կլինեմ ձեզ մոտ։

Զնայելով բարեկամների բոլոր նախազգուշացումներին,
Պրեստեսը Բենիսիոյի եսկադրոնի մամբարը գնաց առանց
պահակների, միայն իր պատվիրատարի ուղեկցությամբ։
Անվեհեր կերպով անցնելով եսկադրոնի գլուխը, նա մեր-
կացրեց սուրը և «դեպի առաջ» դուռալով, սլաքավ կանաչ
հովհատում։ Նրանք կատարեցին հեծելազորային ուժու-
թյուրը 24 ժամ տևեց։

Պրեստեսը իր վարքով կարսղացավ դեպի իրեն այնպի-
սի հարգանք ներչնչել անկարգապահներին, վոր սրանք հի-
մա անտրառունջ լուսմ ելին նրա ամենախիստ նկատողու-
թյունները։

Հեղափոխական գիտակցական կարգապահությունը
հաղթանակեց։ Պրեստեսի սահմանած կարգերի չնորհիլ
վորքիկ զորասյունն այլելի ուժեղ և միահամուռ եր, քան
Բեռնարդեսի զորքերի խոչսր զորամասերը։

Այս պատճառով կառավարական զորքերը, վորոնց զե-
կավարում ելին փորձված զեներալները, հեղափոխական
զորասյան հետ կուվելիս հաճախակի պարտություններ ելին
կրում։ Բայց ամենից առջեցրեցիչը կառավարական մի ջո-
կատի հանկարծակի, խուճապային փախուստն եր Ուրու-
սուփի մերձակայքում։

Ուրուսուփի կայազորը բաղկացած եր 1500 հիանալի
զինված զինվորներից։ Նրանց տրամադրության տակ կար
մի քանի չորսնավ։ Պարնամիքա գետի յերկու ափերում ու-
ժեղ ամրություններ և խրամաներ ելին կառուցված։

Յեղ այսուամենայնիվ, չնայելով այդ բոլոր առավե-
լություններին, բավական եր, վոր զորասյան մի վորքիկ

ՀԵԾԵԼԱՊԱՐԵԿԸ 1925 թվի դեկտեմբերի 7-ին հանդիպելը Փայուռքի հրամանատարության տակ զտնվող կայազորի առաջապստին, — վորպեսզի հակառակորդի բանակում առնասելի խուճապ առաջանար : Առաջին իսկ կրակոցների ժամանակ ամբողջ կայազորը գլխապատճռ փախավ ուր վոր պատահեր : Չնայելով, վոր Պրեստեսի մարտիկները դեռ 12-15 կիլոմետր հեռու ելին Ռէրուսութիյից, Բեռնարդիստների խուճապային փախուստը շարունակվեց ամբողջ դիշերը, մինչև առավոտ, իսկ արշալույին դորասյան ալանդարդը գրավեց Ռէրուսութին:

Կառավարական ջոկատի փախուստը բոլորովին անբացատրելի յեր : Հետաձայում, յերբ Գայովին հարցաքննում ելին այդ խուճապի պատճառի մասին, նա հավատացնում էր, վոր իր թե «ամբողջ գիշերը կռվել և բաղմաթիվ հեղափոխական գորքերի հետ» : Մընչեւ ճշմարտությամբ հայտնի յեր, վոր ամբողջ գիշերվա ընթացքում միակ «մարտական եսիզոդը» յեղել և փոխհրաձգություն գորաւայան մի փոքրիկ հեծելապարեկի հետ :

Մահացու յերկյուղի մատնված դերիները պատմում ելին . «Ձեր կարմիրները դեմքերի նման սլանում ելին դեպի առաջ, սուր դաշյունները ձեռներին : Նրանք անխոցելի յեն և նրանց հետ կռվելն անողութ ե» : Փաստն այն ե, վոր Ռէրուսութիվ . «պաշտպանները» Պարնախրայի աջ ամփով փախչում ելին նապաստակների նման, — վոմանք վոտով, վոմանք ձիյով . փախչում ելին աշնքան արագ, վոր Ժոան Ալբերտոյի եսկաղըրոնը, հետապնդելով նրանց և անցնելով դետը, նույնիսկ . . . չեր կարողանում նրանց հասնել :

Իմանալով, վոր թշնամին արդեն թողել և Ֆլորիանում և նահանջում ե դեպի Ամարանտա (յերկու քաղաք Պիտ-

ուիի նահանգում), դորասյան մի ջոկատ Սիկեյրա կամպոսի դեկավարությամբ կիեմաղոսում կարեց նրա ճանապարհը և դեկտեմբերի 18-ին շեշտակի հարձակմամբ կոտորեց կառավարական մի ջոկատի հարյուր զինվորներին : Յերկյուղի մատնված, նրանք փորձեցին գիշերն իջնել դետի վրայով, բայց կիեմաղոսում յենթարկվեցին Պրեստեսի դորասյան դրոհին և վերջնականապես ջարդվեցին : Ճիմագորասյան տրամադրության տակ բազմաքանակ զենք ու կամմիուշտ կար : Նրա առջև բացվել եր աղատ ճանապարհ դեպի Տերեղինա (Պիտույի նահանգի մայրաքաղաքը) :

ԱՆՀԱՀՈՂԹԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԽԶԲԷԼ

Տերեղինայի հարուստներն անհանդստությամբ դիմավորեցին նոր, 1926 թվականը : Նրանց քիչ հոգսեր և հուզումներ չպատճառեցին Պրեստեսը և կարմիր շարփ կրող նրա մարտիկները : Սարսափահար բռնականերին ու շահագործողներին դրությունն ավելի ահարկու յեր թվում, քան իրականում եր :

Նրանց հիշողության մեջ վառ պատկերացան 1839 թվի իրադարձությունները, յերբ ամբողջ Մարանյանը բռնկված եր նեղրերի, ստրուկների և զյուղացիների ահեղ ապստամբությամբ, — վորոնց համբերությունը սպառվել եր դատավորների և վոստիկանության դաժանության շնորհել : Այն ժամանակ Բրազիլիայի հարուստները դողում ելին հենց միայն «Բալթյո» («Զամբյուղագործ») անունը լսելիս, ինչուս անվանում ելին Մանոյել Ֆերրեյրին, ապստամբության առաջնորդին :

Աղնվականության կալվածքները սրի ու հրի մատնվե-

շին: Հրդեհների ցոլքում, գնդակների սուլոցի և թնգանո-
թաճության դպրոցի տակ կաշխառում և Մարանյանի այլ
գրավածք քաղաքներում ստրուկները, վորոնք աղատությունն
ելին նվաճել, ցնծությամբ յերգում ելին. «Ո՞ւր են սպի-
տակները: Այլևս չկան սպիտակներ: Արդեն չկան տերեր»:
«Բալայատայի» հիշտակը շարունակում եր ապրել ժողո-
վրդական մասսաներում: «Ո՞վ դիտե, գուցե հիմա հասե՞լ
ե մեր գատատանի ժամը»— դողալով մտածում ելին քա-
զաքէ հարուստները և կայազորի պետը:

Մի ճակատամարտում կառավարական զորքերը գերի
վերցրին Պրեստեսի հրամանատարներից մեկին— Տավորա-
յին: Արդեն զերի Տավորան, պայմանավորվելով Տերեղինա
քաղաքի նահանդապետի հետ, հետևյալ նամակը գրեց
Պրեստեսին.

«Պրեստես,

Արդյոք չի՞ կարելի Տերեղինայի անպաշտպան բնակ-
չությանն աղատել զինված ընդհարման վտանգից: Դու ի..
հարկե համառում ես, թե յես վորքան ջերմորեն կցանկա-
նայի, վորպեսզի դուք փորձեյիք ինձ աղատել գերությու-
նից: Այնուամենայիվ, այս հիմալի քաղաքի բնակիչների
բարորության համար յես պատրաստ եմ զոհել իմ աղա-
տությունը: Յես, ընկերներ, վստահ եմ ձեր մեծահոգու-
թյան նկատմամբ և հույս ունեմ, վոր դուք կդադարեցնեք
պաշտրումը և կհրաժարվեք քաղաքը դրոհելուց»:

Այս նամակը հանձն առավ տանել յեպիսկոպոս Սելե-
րինոն, վորը կառքով ժամանեց նատալ և տեսակցություն
ունեցավ զորայան զեկավարների հետ:

Պրեստեսը բավարարեց Տավորայի դիմումը: Զորաս-

այունը, կատարելով իր արշավանքը, մի կողմ թողեց Տե-
րեղինան¹⁾:

Իհարկե այստեղ Տավորայի ինդրանքը դեր չեր խա-
ղում. Պրեստեսի վճիռը թելավրված եր շատ ավելի խորը
պատճառներով: Զորասյունն ամենից առաջ զենքի ու փամ-
փուշաների կարիք եր զգում: Այնքան ել հույս չկար հրո-
սելով գրավել Տերեղինան—լավ ամրացված այդ քաղաքը—
առավել ևս հետաքայում պահպանել այն: Այնու-
հետեւ ևս ամենադլամանալորն եր— դյուղացիական մաս-
սաներն առայժմ խիստ թույլ արձադանքեցին Պրեստեսի
կոչին:

Զորասյան համար լավագույն ժամանակներում նրա
մեջ կար հազիվ 1400 հոդի (ներառյալ բաղմաթիվ վիրա-
վորվածներին և հիվանդներին, վորոնց ամբողջ ամիսնե-
րով քարշ ելին տալիս պատղարակներով, վախենալով,
վոր նրանք կընկնեն դաշնան բեռնաբդիստների ձեռքը):

Բայց Պրեստեսը չեր վհատվում: Նա ընկերներին հպար-
տությամբ մատնացույց եր անում հաջողությամբ անցած
հակայական ճանապարհը, Այս կուխից մինչեւ Նատալ—
7260 կիլոմետր: Պրեստեսը հույս եր դնում գլխավորապես
ովկիանոսային ափի խոշոր քաղաքների վրա, ձգտելով
արագ համար այստեղ: Այնտեղ, Ռեսլիֆի քաղաքի— Պեր-
նամբուկու նահանդի մայրաքաղաքի Մջակայքում լեյտե-
նանտ Կետո կամպելոն հեղափոխությանը համակրող մի

1) Զորս տարուց հետո Տավորան բացահայտ կերպով դուրս յե-
կալ Պրեստեսի դեմ, իսկ 1935 թ.— ժողովրական ճակատ դեմ: Տավորան մասնակցեց զեմոկրատական շարժման դեմ ուղղված դաժան
զատաստանին, հայտարարելով, վոր թեև ինքը «Կողմանակից և բուր-
ժուական հեղափոխության», բայց կոմունիզմի սկզբունքային հակա-
ռակորդն ե:

խումբ զինվորների, բանվորների և գյուղացիների հետ ապստամբություն եր բարձրացրել և իր ջոկատով դալիս եր միանալու Պրեստեսին:

Արդյունաբերական խոշոր կենտրոն և նավահանգստացին քաղաք Ռեսիֆին շաքարի արդյունաբերության կենտրոնն է: Ռեսիֆիի հաջող գիրքը նրան դարձրել և ձգողական մի կետ նավերի համար, վորոնք գալիս են աշխարհի բոլոր ծայրերից: Բրազիլիական ափի վոչ մի մասը չունի այդպիսի կարևոր ստրատեգիական նշանակություն: Այս կեսն ամենից մոտիկ ե Յելբուզային և Աֆրիկային: Բացի դրանից, Ռեսիֆին ավելացնու ուղիների կենտրոնն ե — վորոնք Բրազիլիան կազում են ԱՄՆ և Յելբուզայի հետ:

Ռեսիֆիի 450 հազար բնակիչներից մոտ 100 հազարն ապրում ե վողորմելի հյուղերում, վորոնք կառուցված են ճահիճներում, քաղաքի շուրջը: Ռեսիֆիում կան քանի հազար այդպիսի հյուղեր և դրանց բնակիչները ցնցող աղքատության մեջ են գտնվում: Այդ չքավորության դոյլության միակ աղբյուրը ձկնորսությունն է:

Ռեսիֆիի չքավոր ձկնորսները դաժանորեն շահագործում են կապիտալիստական դիշատիչների կողմից, վորոնք զավթել են ովկիանոսի ափի յերկրները: Այդ կիսամուրացիկ ձկնորսները համարձակ են և խիզախ: 1911 թվին նրանք դուրս յեկան դարշահոտ ճահիճներից, դրավեցին զենքերը և տապալեցին կառավարությունը, իսկ պանծալի «34-րդ» բոկոտն դումարտակը» նահանգապետին հարկադրեց կանացի զգեստ հազնել և փախչել:

Հեղափոխականորեն տրամադրված չքավորություն կան մյուս ովկիանոսային նավահանդիստներում — Սան Պալմաորում, Մասկոյում և այլն:

Բայց այնտեղ հասնել հեշտ չե: Թվում եր, թե հաջողությունն արդեն դավաճանել և Պրեստեսի զորասյան քաջ մարտիկներին:

Սեարայում զորասյունը մոտիկ եր հասարակածին:

Ահա նա — Սեարան, «Բրազիլիայի բոցեղեն վառարանը»: Սա Բրազիլիայի ամենայերաշտու նահանգն է: Նրա տերիտորիայի յերեք քառորդ մասը գրեթե կլոր տարին բոլորովին զուրկ և ջրից:

Զորասյան մարտիկներն ուժասպառ եյին լինում, բայց շարունակում եյին համբերատարությամբ գնալ գեղի արելք: Ճանապարհի յերկու կողմերում ձգվում եյին բարկ, այրված տափաստանները, մանր, այլանդակ թիւտաներով և սերկեվիլի ծառերով: Այդ ժամանակ վտակների մեծ մասը չորացած եր: Խմելու համար ստիպված եյին վերցնել լճակների, ճահիճների կանգնած, նիսված ջուրը: Ամենուրեք ծուխ եր բարձրանում վառվող անտաներից և թփերից: Մարդկանց հենց վոտների տակ, մերթ այստեղ և մերթ այնտեղ զալարվում եյին կրակի լեզուները, վորոնք վառում եյին խոտն ու թփերը:

Տաք ողիալիքները խիում եյին քայլողների դեմքերին: Մարդիկ կնճոռութում եյին, կարծես նրանց առջև բացվել եր հսկայական, բոցեղեն մի վառարանի զոնակը: Բայց Պրեստեսի զորասյան շարժման համար ել ավելի մեծ դժվարություններ եյին ստեղծում տեղական կալվածատերապլանտատորները:

Խուճապով բռնված, նրանք բաղմաթիվ հեռագրերով ոմբակոծում եյին մայրաքաղաքը, աղերսելով, վոր անհապաղ ուղղմական ողնություն ցույց տրվի: Պրեստեսը հայ-

ուարարվեց «աստծո, ընտանիքի և քաղաքակալրթության») թշնամի»: Նրա զլիսի համար դրամական խոշոր գումար խոստացվեց: Գործի դրվեցին ռազիոն, հոգևորականության աղիտացիան և այլն, Պրեստեսի զորասյան հերոսներին առատավորելու և զրաբարելու համար: Վաճառված ռեակցիոն մամուլն ամեն տեսակ հերյուրանքներ եր թխում, կեզտ չպատելով հեղափոխական հերոսների վրա:

Պրեստեսի զորասյան թշնամիների ողակն ավելի և ավելի յեր սեղմվում: Զորասյան դեմ մորիլիզացիայի յենթարկվեց 10 անդամ ավելի զորք, քան ուներ Պրեստեսը, — նահանջների ամբողջ վոստիկանությունն ու ժանդարմերիան, ինչպես նաև վարձու բանդաները, վորոնք զինված և յին ձեռքի նունակներով և ավտոմատ հրացաններով: Կառավարական զորքերի հրամանատարությունը լողունդ նետեց՝ «Գիրիներ չվերցնել», — այլ կերպ ասած՝ հրամայում եր տեղն ու տեղը կոտորել նրանց:

Դիտենալով հեղափոխական մարտիկների անսահման խիզախությունը, սեակցիոն սպաները վերադասում եյին զորասյունը սեղմել ողակի մեջ և ապա նրան հաղթահարել սովամահ անելու միջոցով, սեղմելով նրան Սերբա Պիրեյ-րա լեռնաշղթայի՝ Սերբայի արեելյան սահմանի ուղղարեծ պատին: Վոսկե ուսագիրավոր սրիկաները յերազում եյին այլ պատի մոտ զնդակահար անել քաջարի զորայունը:

Դրությունն անյելք եր թվում: Բայց Պրեստեսը, ինչպես միշտ, գտավ յելքը: Լեռնաշղթան անմատչելի յեր:

1) Քաղաքակրթությունը հասարակական զարգացման, կուլտուրայի բազմ աստիճանն է:

Բայց այն պետք եր վերցնել: Այդ միակ յելքն եր ստեղծ: Ված դրությունից: Հարկավոր եր տիրանալ Պերեյրայի բարձունքներին, նախքան այնտեղ կհասնելին թշնամիները:

Եեվ ահա Պրեստեսը մարտական հրաման ովեց՝ գրոհելով գրավել Սերբա Պերեյրան: Փետրվարի 3-ին, իիտ աղջամուղջում մարտիկները սկսեցին բարձրանալ ուղղարերձ լանջը: Մարդիկ իրար հետեւից քայլում յյին վոլորապառյտ լեռնային կածաններով, ոդժվարությամբ պահպանելով իրենց հավասարակշռությունը: Զիերը տանուց եյին սահմանական ձերից բոնած: Վիրավլորներով բեռնված պատղարակները տանում եյին ձեռներով, վախենալով դրանք վստահեցին, վորոնք հաճախ սայթաքում եյին:

Մարդիկ գնում եյին, կառչելով ժայռերի սուր քարերից և փշոտ թփերից, զնում եյին առանց գիտենալու, թե իրենց ինչ է սպասում առջելում, լեռան գաղաթի մոտ: Շղթաները սողում եյին գեղի վերև, չխախտելով կարգը և փոխադարձ կապը, պատրաստ լինելով ամեն բոպե հականարգած տալու թշնամուն: Հանկարծ վերեկց, ավանդարդի կողմից, վորի հրամանատարը ժոան Ալբերտոն եր, կրակոյներ լսվեցին:

— Մի՞թե թշնամին արդեն կանխել և մեղ ու զրափի, գագաթը, — անհանդստացած մտածում եյին զորասյուն մարտիկները, խավարում շտապ դեպի վեր մագլցելով նեղ, սլկուն արահետներով: Հանկարծ հրաման լսվեց.

— Ճանապարհ տվեք գնդացիրներին: Մի կողմ անցեք:

Զինվորներն իրենց հուժկու ուսերի վրա վերև բարձրացրին զնդացիրները: Շուտով բռնկվեց տաք կորիքը: Եեռնարդիստներին իսկապես վոր կարողացել եյին բարձրանալ գաղաթը: Նրանք ընդամենը 60 հոդի եյին: Նրանք վոչ մի

կերպ չեյին սպասում, վոր այստեղ բարձունքում կհանգիպեն զորասյանը և փախան, թողնելով ութը սպանված և բաղմաթիվ վիրավորվածներ։ Զորասյունը կորցրեց միայն մի հոդի։

Սեարան մնաց լեռների մյուս կողմում— արևմուտքում։ Զորասյունը դուրս յեկավ ծուղակից և ազատվեց մահացու վտանգից։ Բայց առջեռում նրանց քիչ ճախորդություններ չեյին սպասում— անջուր անապատ, անհամար թշնամիների դարաններ։

Ահա նրանք գտնվում են Պարաիրա նահանգում— լերկ, ալեճն վայրերում, վորոնք դեղնել են արեի ճառաղայթներից։ Թշնամին ժամանակավորապես նրանց հանդիսատ թողեց։ Նա վորոշեց սպասել, մինչև վոր տապը, ծարավը, քաղցը և հողնածությունը վերջնականապես թուլացնեն այդ տորկուն մարդկանց։ Ճանապարհին յերբեմն հանդիպում եյին տեղական բնակիչները, վորոնք թափառական կյանք եյին վարում։ Նրանք վատ եյին հաղնված, մոայլ եյին, լուսկոյց։ Սոսկալի տեսք ունեյին— մաշկ և վոսկորներ։

Նրանք կիսաքաղց են ապրում։ Վայրի մեղք են հավաքում, «զրահակիրներ»¹⁾ վորսում։ Ամենաանհրաժեշտ սննդամթերքները պարաիրցիք ձեռք են բերում քաղաքներում, փոխանակելով իրենց հավաքած բուրավետ դեղաբույսերի կեղեվը։ Գիշեր-ցերեկ նրանց տանջում և ծարավը, վորով-էտե ամբողջ շրջանում ջուր չկա...


1) «Զրահակիրը» կենդանի յե յերկար դնչով և առջնի կարճ թաթերով, վորոնց սուր ճանկերը հարմարեցված են հողում փոսեր փոքրու համար։ «Զրահակիր» և կոչվում այն պատճառով, վոր ունի վոսկրյա թիթեղներից կաղմված վահան, վորը նրան պաշտպանում և դիշատիչների հարձակումներից։

Փետրվարի 9-ին, վերջապես, հասան Պիանկու քաղաքը։ Հողնատանջ մարտիկները հույս ունեյին այստեղ հագեցնել իրենց ծարավը և քաղցը, բայց նրանց հյուրասիրեցին արծիճե գնդակներով։ Կրակում եյին պատուհաններից, դռներից, ցանկապատերի հետևից։ Թշնամին դարանակալել երաներում, բանտի մեծ շենքում, յեկեղեցում։

Յերեք ժամվական վայրեց գաջողվեց քաղաքից դուրս մղել թշնամուն— 60 վոստիկաններին և հարյուր վարձկան բանդիտներին, վորոնք գտնվում եյին Արիստիդ Ֆերեյրա դա կրուս քահանայի հրամանատարության տակ։

Այդ կովում վտանգավոր վերք ստացավ կամավոր, մուլատ Զեւլիուլոն, վոր դորասյան մեջ եր մտել Մարանյանում։ Նրա յերկու վոտներն ել վիրավորվել եյին և կաթվածահար յեղել։ Հետաղայում նա զորասյանն ուղեկցում եր սպատգարակի վրա պառկած, ապա հենակներով։ Նա խնդրում եր, վոր իրեն ոգտադործեն վորպես ժամապահ։ Հաճախ կարելի յեր այդ անվոտ պահակին տեսնել գիշերով խիստ անտառում, դետնին նստած, հրացանը ձեռքին և հենակները կողքին։ Այդ մուլատն արթուն եր իր պոտում, նա հանգիստ կերպով հայտարարում եր. «ԶԵ՞ վոր յես կարող եմ հարկավոր բոսկեյին տանդապ բարձրացնել։ Նշանակում ե յես պետք եմ ինչ-վոր դործի համար»։

Նրա նմանները շատ եյին զորասյունում։ Այդ բոլոր մուլատները, նեղերը, հնդիկները, փորթուգալացիները կովում եյին քաջարար։ Փողովրդական այդ փոքրիկ բանակը իր հաջողություններով պարտական եր վոչ միայն իր չնորհալի գնդապետ Պրեստեսի ուաղմական ճարտարության, այդի յուրաքանչյուր առանձին մարտիկի բացառիկ խիզախության և հեղափոխության դործին նվիրված լինելուն։



Մարդիկ գնում եյին, կառչելով ժայռերի սուր քարերից
և փշոտ թփերից.

Այդ մարդիկ— բանվորները, ձկնորսները, հովվաները, գյուղացիները դիտեյին, վոր պայքարում են ազատության համար, բռնակալությունը տապալելու համար, պայքարում են, վորակեազի ժողովուրդն ազատ շունչ քաշի, — և այդ դիտակցությունը նրանց ույժ եր տալիս:

Ահա, որինակ, Զե Բիգոդեն— Պիառոյի կամավորը, վորը յերեք տարվա ամբողջ արշավանքի ընթացքում իր մեջքի վրա աղնվորեն ու արխարար տանում եր զորասյան արխիվը: Բարձրահասակ, նիհար, ջուտ, յերկար և կախ ընկած բեղերով այդ մուլատը, Զե Բիգոդեն իր համեստ, բայց կարևոր աշխատանքը կատարում եր մեծագույն վորդիվությամբ և անձնուրացությամբ: Վոչ մի զետ, անապատ, լեռնաշղթա կամ ճահիճ չեյին կարող կանդնեցնել նրան, վոչ մի հրաձգություն չեր կարող այդ մուլատին ստիպել թողնել թանկարժեք բեռը, վորի համար նապատրաստ եր տալ իր կյանքը: Զե Բիգոդեն իր արխիվը հասցրեց մինչև Բոլիվիայի սահմանը:

Ահա մեկ ուրիշը— Սլֆրեդ Վիեյրան, վոր զորասյան մեջ եր մտել կարոլինայում: Պերնամբուկու մտնելիս նա ժահացու վիրավորվել իր: Մեռնելիս նա ասաց իրեն մոտեցող գեներալ Միգել Կոստեյին.

— Գեներալ, յես մեռնում եմ խորապես բավարարված, վորովհետեւ յես պաշտպանում եյի իմ հայրենի յերկրի աղասությունը:

Սեարայի արեւադյան սահմանից արդեն անցել եյին 828 կիլոմետր: Փետրվարի 12-ին զորասյունը մտավ Պերնամբուկու նահանգի սահմանները: Այստեղ հորդ անձրևներ սկսվեցին: Բոլոր զետերը, նաև ամենածանծաղ դետերը վարարեցին և մեծ ճահիճներ առաջացրին: Ճանապարհները դրեթե անանցելի դարձան:

Այդ յերկրներում անձրեների ժամանակաշրջանը սկսում է փետրվարի կեսին կամ վերջին և ամենափոքրիկ առվակներն աղմկալից գետեր և զարձնում: Կարկաչուն, պղտոր ջրերն ափերից տանում են այնտեղ դարսված բամբակի հակերը և բրնձով լցված պարկերը, քար ու քանդ են անում դյուղացիների խրճիթները, արմատից պոկում դարավոր ծառերը: Գյուղացիների համար այդ հեղեղումները վոչ պակաս սարսափելի յեն, քան յերաշտը: Բույսերը փտում են, հայց նամանում է: Ջիռ լծասարքը ժանդում է, թամբերը փչանում են, ամեն ինչ անպետքանում է: Գյուղացիների կարիքավորությունն ու քաղցն ավելի յեն սաստկանում:

Հենց այդ ժամանակ Պերնամբուկույում ծաղեց քաղաքային չքավորության հեղափոխական ազստամբությունը:

Ազստամբները— մանր արհեստավորներն ու բանվորները, հացթուիները, ձկնորսներն ու նավաստիները— ժաբուատոնում (Ռեսիֆիի մոտ) դրավեցին զինապահեստը, զորանոցները, փոստը և հեռադիրը: Նրանք դրավում եյին ժամանող բոլոր գնացքների չողեքարշերը: Շարժումը ծավալվում էր, սպառնալով Ռեսիֆիին— յերկրամասի դիսավոր քաղաքին:

Ազստամբությանը մասնակցեցին նաև կոմունիստները, վորոնք պատկանում եյին Բրալիլիայի յերիտասարդ կոմկուսության կազմակերպություններին, վոր հենց նոր եյին ստեղծվել այդ յերկրամասերում: Ազստամբությունը վատ եր նախալպատրաստված և զուրկ եր քաղաքական հաստատն զեկավարությունից:

Բանվորները թույլ եյին կազմակերպված և նրանց գլխավոր մասսան գտնվում եր անարիստական, ոեփորմիս-

տական և կաթուլիկական կազմակերպությունների ուժեղ աղղեցության տակ: Բրալիլիայի կոմունիստական կուսակցությունը դեռևս չափազանց թույլ եր, նա դեռևս չուներ հեղափոխական մասսայական պայքարի վորեակ փորձ և այս պատճառով չեր կարող դիմավորները այդ ազստամբությունը և այն դեպի առաջ մղել ուժեղ ձեռքով:

Ազստամբները մեծ հույս եյին գնում Պրեստեսի գորասյան ոժանդակության վրա: Կոմունիստները շատ լավ գիտեյին, վոր Պրեստեսի առաջադրած լողունգները և մեկ պլենիդենտը մյուսով վորխարինվելը— այդ մի չնչին մասն ե այն ամենի, ինչ վոր հարկավոր ե բրալիլյան ժողովը՝ դիմավորին: Բայց նրանք հասկանում եյին, վոր հայրենիքի պղային վերածնության համար ամենից առաջ անհրաժեշտ ե տապալել ատելի կառավարությունը, վորը հանդիսանում է հուռծության վրա կարեւոր ե ստեղծել յերկրի բոլոր առաջավոր մարդկանց, աշխատավորների և ինտելիցիենցիայի ուժեղ միություն: Այս պատճառով Ռեսիֆիի կոմունիստները յեռանգով պայքարում եյին Պրեստեսի գորայանն ոժանդակելու համար և վերջինին ամեն կերպ պաշտպանում եյին բոլոր հարձակումներից և դրապարտչական հերյուրանքներից:

Պրեստեսին չհաջողվեց հասնել Ռեսիֆի և ովկիանոսի ամիսի մյուս խոչոր նավահանդիստները: Ժաբուատոնի ապօտամբությունը բավական արագ ճնշվեց:

Իմանալով այդ մասին, Պրեստեսը վերջնականապես վորոշեց գառնալ դեպի հարավ: Նա վերադարձավ իր առաջվա պլանին— անցնել Սան Ֆրանսիսկու գետը և մտնել Բայայի սահմանները:

Ուժասպառ լինելով քաղցից ու ծարավից, հոգնած

մարտիկները դարձյալ գնում եյին շիկացած, անջուր տափաստանով, տանելով իրենց բոլոր հիվանդներին ու վիրավորվածներին: Այնուհետև Պրեստեն այլևս վոչ վոքի թույլ չեր տալիս բուժման համար մնալ ճանապարհին, վորովհետեւ յիրեք հիվանդ ընկերներ, վորոնք թողնվել եյին Պոստում, տեղական բնակիչների խնամքին, սպանվել եյին գաղանացած բեռնարդիստների ճեռքով: Պիանկո քաղաքում Պարաիրի վոստիկանները գերինեցին քշեցին զերեզմանոց և նրանց ստիպեցին իրենց համար զերեզմաններ փորել:

Անցնելով աղեղնաձև մի հսկայական ուղի (522 կիլոմետր) ամայի տերթիսորիքաներով, դժվարամատչելի դյուզական ճանապարհներով և մեծ ճահճներով, Պրեստեսի դորասյունը հասավ Սան Ֆրանսիսկոյի ափը:

Թ Ա Կ Ա Ր Դ Ա Ւ Մ

Այնտեղ, ուր զորասյունը մոտեցավ Սան Ֆրանսիսկոյի ճախ ափին, գետը զառնում է զեսպի արևելք, աստիճանաձև թափվում ներքեւ, կազմելով Պառլո Աֆֆոնսոյի սքանչելի ջրվեժը: Սա աշխարհիս ամենամեծ ջրվեժներից մեկն է: 1) Այն իրավմար անվանված է «Բրազիլիայի Հրաշը»: Զորայան մարտիկները դժայլվեցին մոռայլ ու վեհասքանչ տեսարանով: Շուրջը ծառեր և գունագեղ բուսականություն չկար: Միայն տեղ-տեղ, ժայռերի լերկ լանջերում յերեսում եյին խղճուկ, ցածլիկ, այլանդակ թփերը:

Բայց առանց նավակների ինչպես անցնել այդ հսկայական գետը: Շատ կարով առանձնացվեց լավագույն

1) Պառլո Աֆֆոնսոյի բարձրությունը 81 մետր է, Նիտրայի—48 մետր, ափը կական վեկտորիա ջրվեժի—101 մետր:

լուկորվների մի դասակ, աջ ափում հետախուզություն կատարելու համար: Երանք արդեն պատրաստվում եյին աղուանշանը լսելուն պիս նետվել գետը, յերբ հանկարծ մոս վազեց սերժանտ Ալվարոն և ուրախալի: Լուր հաղորդեց, թե անտառում թագցրած մի մակույկ ե զտել: Եղարտոն այդ մակույկով անցառ մյուս ափը և բերեց մի մեծ նավակ՝ ութը հոգու համար: Յերկրորդ անգամ գնալիս հաջողվեց զետես կողմից բերել յերկու հիմնալի բարկա:

Ջերը, վորոնք հսկայական ճանապարհ եյին կտրել, ուժապատ եյին յեղել և այլևս անպետք եյին: Երանց փոխադրելու միջոցներ չկային: Պրեստեսը կարգադրեց բոլոր ձիերը թողնել ափում:

Փետրվարի 26-ին, առավոտյան, ամբողջ գորայունը գտնվում եր գետի աջ ափում, Բայայի տերթիսորիայում: Գետն անցել եյին դիշերով, արագ ու հաջող: Հեռվից լըսվում եր ջրվեժի հումկու մոնչոցը... Բայա մտավ ընդամենը 1200 հոգի:

Բայայի ամբողջ հյուսիսային մասը ներկայացնում է մեծ, ալեճն «Սերտոն» բարձրավանդակը, վորը յեղումած և մոայլ լեռներով: Գրեթե անկյանք այդ քարքարոտ վայրը կարծես ավերված լինի ինչ վոր մի հրեշավոր կատարութից: Այստեղի բուսականությունը բաղկացած է տարուրինակ ձևեր ունեցող բույսերից, վորոնք ծուռումուր են, ուռուցիկ, փշապատ: Ճանապարհորդ Մարցիուսը, վոր մի ժամանակ այցելել եր այս յերկները, խորապես ապշած լինելով իր տեսած պատկերից, «Սերտոնի» բուսականությունն անվանեց «Սարսափելի անտառ»:

Հիբավի, սարսափելի յերադիլյան գյուղացու վիճա-

կը: Աւժասալատ լինելով կալվածատիրական ճնշման ծանր բեռի տակ, նա տառապում է կլիմայի անտանելի պայմաններից: Որը որին նա ահարկու աղետ—յերաշտ է սպառում:

Թուչունները չվում են հեռավոր յերկրներ: Անթիվ ու անհամար միջատները նեղում են նրա հողնատանջ անտառներին: Քարերի միջից լավում է բօժոժավոր ոճերի չարադրւշակ Փշոցը: Գիշերը սուսուրանան (հովաղի մի տեսակը) գաղտաղովի մոտենում և հոտին և հափշտակում գտններն ու արջառները: Վատ սննդի հետևանքով դյուդաիցների մեջ տարածված է հավկուրությունը: Գիշերը նրանք վոչինչ չեն տեսնում: Հյուծված յեղները, վոր ուրիշականների յեն նման, դիակների պես ընկած են գետնին:

Գալիս ե յերաշտը, և վոչնչանում է ամեն ինչ, — բուռականությունը, անասունները: Գյուղացուն մնում ե միայն մի յելք— փախչել ուր վոր հնարավոր ե, որական այն մի յելք— փախչել ուր վոր հնարավոր, կուսական ապրուստ վորոնել, գնալ Ամազոնի հեռավոր, կուսական անտառները, ստրկական աշխատանք կատարելու կառւչությանուացիաներում, կամ դեպի ովկիանոսի տիերը, կի պլանտացիաներում, կամ դեպի ովկիանոսի ամենից հաճախ Սան Պաուլուի սուրճի պլանտացիաները: Փախստականների խմբերը, փախչելով յերաշտից, փոշոտ հանապարհով գնում են հեռու վայրեր, տանելով իրենց վագրմելի իրեղենը:

Այս ժամանակ, յերը չքավորները ծանր աշխատում են քաղցած մեռում, նրանց տերերը, անասնավաճառներն ապրում են ովկիանոսի ափին դժոնվող փարթամ վիլաներում: Նրանցից շատերը յերբեք չեն տեսել իրենց գյուղացիներին, բայց հանդիսատ ապրում են նրանց հաշվին, վայելում կյանքը: Կապալավարձը մուծվում է ձմեռված վեր-

ջում և տիրոջ (կալվածատիրոջ) ներկայությունը սպարապետի չե:

Այսուես եյին այդ յերկրամասը և այն մարդիկ, վորոնց մեջ ընկալ Պրեստեսի զորայունը: Գյուղերի յերետասարդությունն աղահությամբ ականջ եր գնում զորայան կամալորների հեղափոխական ճառերին:

Վոտով գնալ անկարելի յեր: Գտնվեց որդիգինալ մի յելք գուրս գալու ստեղծված դրությունից: զորայունն իր ճանապարհին հանդիպեց ավանակների մի յերամակի, և մարտիկները հեծան դրանց:

Լինում եյին բաղմաթիվ զլարճալի տեսարաններ: Գետերի կամրջակներով անցնելիս կամակոր եշերը վոչ մի կերպ չեյին ուղում առաջ գնալ: Զարկավոր եր լինում դիմել փորձված միջոցին— քաշել եշի պոչից, վորով նա անպայման վաղում ե դեպի առաջ:

Զվարթ և կենսուրախ կամավորները չեյին վհատվում, լինչպիսի պայմաններում ել վոր լինեյին: Ամենածանր բուպեններին նրանք ծիծաղում եյին ու կատակում:

Բայայում զորայանը խորը հիասթափություն եր սպասում. վորոշված տեղում զենք չդտնվեց: Այն անանուն «բարեկամը», վորը նրան պետք ե զենք ու ռազմամթերք հասցներ, անհետ չքացել եր...

Զորասյունն արդեն մոտենում եր Մինաս-Ժերայես մարզի սահմանին,— այն ամենահարուստ յերկրի, վորտեղ առատությամբ կա յերկաթ ու մանդան, վոսկի և ալմաս և վորի մասին սառւմ են.

«Մինաս-Ժերայես— այդ վոսկի սիրտ և յերկաթն հոկայական կրծքում»: Մեծ եր այն ճանապարհը, վոր զորաբայունն անցալ Բայայում— 2200 կիլոմետր: Բայց այն

ժամանակ, յերբ առաջավոր մասերն արդեն հասել ելին Գրան-Մողոլ լեռնաշղթայի հյուսիսային ճյուղերին, Պրես-տեսը հրաման տվեց (1926 թվի ապրիլի 23-ի գիշերը) ան-հապաղ հետ դառնալ: Նրա համար պարզ եր դրության ամբողջ լրջությունը:

Նա վաղուց արդեն յերկյուղ եր կրում և բազմիցո նա-խազգուշացնում շտարի իր ընկերներին, վոր այդ վայրերը կարող են նրանց համար թակարդ դառնալ: Նա վախենում եր, վոր դորասյունը կաեղմի դեսի և ովկիանոսի ափի միջև և անկարող կլինի աղատվել թշնամու հետապնդումից:

Հիմա նրա յերկյուղն արդարացավ: Բոլոր կողմերից գալիս ելին թշնամու բանակները: Պրեստեսը բռնված հե-ռագրերից իմացավ, վոր Բեռնարդեսը դրամական խոչոր գումար և առաջարկում զորասյան յուրաքանչյուր հրամա-նատարի դիմուի համար: Բեռնարդեսը «շտապ և խիստ դաշտ-նի» հեռադրեր եր ուղարկում իր զորքերի շտաբին, վերջի-նիս հանդիմանում անվճռականության և դանդաղկուու-թյան համար:

Գեներալ Տոուրինյոյի զորքերն ուղարկվեցին Սան Ֆրանսիսկույի ափերը, դեպի ուր այդ ժամանակ զնում եր զորասյունը: Բեռնարդեսի հրամանատարությունը յենթա-դրում եր, վոր Պրեստեսը կիորձի անցնել Սան Ֆրանսիս-կուն: Այս պատճառով թշնամին այնտեղ եր կենտրոնացնում իր բոլոր ուժերը:

Պրեստեսին ել հենց այդ եր հարկավոր: Նա գիտմամբ սկսեց ընթանալ դեպի արևմուտք, վորպեսզի թշնամու ու-շադրությունը գրավի այդ ուղղությամբ: Բայց, գեռ դե-տին չհասած, զորասյունը հանկարծ մի անդամից դարձավ դեպի հյուսիս և մի մեծ պառյատ կատարելով, նորից մը-

տնիլ Բայա: Այդ արագ ու համարձակ մահյովը բոլորս վեն մոլորեցրեց թշնամուն:

Պրեստեսին հաջողվեց այստեղ սերտ կապ հաստատել տեղական բնակիչների հետ: Նրանցից Պրեստեսը ճշգրիտ տեղեկություններ եր խմանում կառավարական դրագերի բոլոր շարժումների մասին, և դրա չնորդիվ նա կարո-դացավ խուսափել՝ իրեն հետապնդող թշնամու զորամասե-րից:

Զորասյունն ընթանում եր թշնամու զորամասերին զուլահեռ և նրանց միջև, բայց հակառակ ուղղությամբ: Հենց այն ժամանակ, յերբ բեռնարդիստները շտապում ելին դեպի հարավ, հետապնդելով հեղափոխականներին, — վեր-ջիններս աննկատելի անցնում ելին դեպի հյուսիս:

Մի անգամ Պրեստեսին հաջողվեց իր ջոկատով անցնել թշնամու յերկու զորասյունների արանքով, — վորոնք միմ-յանցից հեռու, ելին ընդամենը յերեք ժամվա հետիուն վո-ճանապարհով, իսկ հիշյալ զորասյուններն այդ մասին վո-չինչ չգիտեյին: Պրեստեսի հօկիչ պահակները, վորոնք թաղնված ելին թշնամուց, հետեւում ելին նրա զորասյու-ների բոլոր շարժումներին և իր ժամանակին լուր հաղոր-դում հեղափոխական շտաբին:

Զորասյան ուղին նորից ընկնում եր դեպի հյուսիս: ամենուրեք նեղվելով Բեռնարդեսի վարձկանների բանդա-ներից, զորասյան մարտիկներն արագացնում ելին իրենց քայլերը, հույս ունենալով, վերջապես, հասնել Սան Ֆրան-սիսկու դետի ցանկալի ափը:

Նրանք դեպի Սան Ֆրանսիսկու դետի անցարանն ելին պնում «Ալմասի հանքեր» լեռնային ռայոնի արևելյան մա-սի յերկարությամբ: Բայան վաղուց ի վեր հոչակամձ եր

իր վոսկով և ալմասներով։ Այստեղ ալմասի հանքերը հայտնադորձվելուն պես սկսվեց «ալմասային տենդը»։ Ամբողջ աշխարհն իմացավ հրաշալի «կապույտ ալմասների» և «սև աղամանդների» մասին։

Սերբա Դիամանդինայից դեպի հարավ-արևելք բարձրանում է Սերբա Սինկորա լեռնաշղթան։ Պրեստեսի զորայունը 1926 թվի մայիսի 4-ին հասավ այդ լեռնաշղթայի ստորոտը։

Այն հովիտը, վորտեղ կանդ առան հողնած ուղևորները, հանդիսաւ և քուն եր տրամադրում։

Շուրջը լուսվյուն եր։ Հետզհետե ավելի յեր մթնում։ Շատ ձիավորներ իջան ձիերից և պառկեցին կանաչ խօսի վրա։ Հնչեց Պրեստեսի ձայնը։

— Վե՛ր կացեք։ Մէնչև առավոտ մէնք պետք ե անցանենք այս լեռնաշղթան։ Հանգստանալ դեռ շուտ ե։ Մի՞թե չգիտեք, վոր թշնամին դալիս ե բոլոր կողմերից։ Բեռնարդեսն ուղում ե, վոր մեղ բոլորիս մինչև վերջին մարդը կոտորեն։ Բրաղիլյան բանկն առատաձեռնությամբ աջ և ձախ փող ե բաժանում բանդիտական շայկաներին կաշառելու համար։ «Ամեն գնով խեղդե՛լ ապստամբությունը»— այս ե կառավարության հրամանը։

— Մութն ե, — ամբոխի միջից դոչեց մեկը, — վոչինչ չի յերևում։

Իսկապես, գիշերն արտասովոր կերպով խավար եր։ Յերկնօում — վոչ մի աստղ։

— Վոչ մի բոպե չի կարելի կորցնել, — ասաց Պրեստեսը և հրաման տվեց — վաշտերի հրամանատարներ, մումեր բաժանեցեք բոլորին։

Ահա բռնկվեցին առաջին լույսերը։ Քայլողների ձեռնե-

րում կային յերկար մոմեր արմավենու մեղբամոմից։ Յերկարաձև, ծուխ արձակող լույսերը յերերվում եյին ողում։ Կամավորները լեռնային արահետով քայլում եյին զգույշ։ Ճիերը տանելով սանձերից բռնած։ Շնչառությունը դժվարանում եր, սուր քարերը կարում եյին մարտիկների վոտները։ Լեռնալանջում բազմաթիվ պայծառ կետեր եյին յերեվում, կարծես այն աստղալից յերկինք լիներ։ Ականատեսների պատմելով՝ այդ մի արտասովոր, Փանտաստիկ տեսարան եր։ Անցնելով Սերբա Սինկորայից, Պրեստեսի զորայունը շարունակում եր արագությամբ ընթանալ գեալի հյուսիս։

Դրությունն որեցոր վատանում եր։ Յուրաքանչյուրը որ ընկնում եյին զորասյան մարտիկներն ու հրամանատարները, վորոնց ծածուկ սպանում եյին կալվածատերերի վարձած բանդիտները։ Առջեւում դեպի Սան Ֆրանսիսկույթի ցանկալի ափը նբանց ուղին ձգվում եր անծայրածիր, անցանալու անապատով։ Այդ ճանապարհը կրում եր «գախան ճանապարհ» արտահայտիչ անունը։

Գունազեղ կանաչը, վոր տափաստանում յերեացել եր հորդ անձեւների ժամանակ, արդեն դեղնել եր։ Հարկավոր եր լինում կացիններով ճանապարհ բաց անել բարձր ծառաբների և ճյուղերի մեջ, վորոնք ծածկված եյին սուր փշերով։ Լիանաների (գալարուն բույսերի) պինդ ցանցերում խճճվում եյին մարդկանց վոտներն ու ձիերի սմբակները։ Առանձնապես ծանր եր գիշերով զնալը։

Հորիզոնում յերեաց գետի փայլուն մակերեսույթը։ Վերջապես, ահա Սան Ֆրանսիսկուն։ Ափում կանդնած եյին տնակները, ծխնելույղներից ծուխ եր բարձրանում։ Այդ Սկնառ-Սե փոքրիկ քաղաքն եր։ Բայց զորասյան հոգ-

նախանշ մարդկանց գառնություն պատճառեց այն, վոր դեռք վրա յերեսում ելին մեծ նավերի սիրություններ; կառավարական մի խումբ ռազմանախիք հսկում ելին դեռը:

Այսպես ուրեմն, զորասյունը գտնվում է թակարդում: Իրավացի յեր Պրեստեսը, վորն անդադար կրկնում եր. «Արդյոք Սան Ֆրանսիլույի հսկայական աղեղը չի լինի այն պարանը, վորը կիսեղի մեղ»:

Պրեստեսն արագությամբ հրաման տվեց— նորից մանել անտառի խորքը, մեծ պառյութ կատարել, առա վերադասնալ դեռի դեռը ու նորից փորձել անցնել այն: Հոգնատանշ մարտիկներն անվերապահորեն կատարեցին նրա հրամանը:

Մե անդամ Պրեստեսը լսեց, թե ինչպես կամավորներից մեկն ապացուցում եր, վոր գետն անցնել յերբեք չի հաջողվի: Պրեստեսը մոտեցավ խոսողին և բոլորի ներկայությամբ ասաց նրան.

— Ասում ես չի՞ հաջողվի: Դեռ, մի անդամ ընդմիշտ հիշեր, վոր մեզ համար անկարելի վոչինչ չկա: Յեթե հարկավոր լինի, մենք կանցնենք Ամազոնի ամբողջ մարդը հաղարավոր մղոններ, վորոնք ծածկված են կուսական անտառով, ընդհուպ մինչեւ Պերու, Կոլումբիա կամ Վենեսուելա:

Պրեստեսի հանգստությունն ու հաստատակամությունը վստերում ելին զինվորներին: Նրանք խորապես սիրում ելին Պրեստեսին: Նրանք պատրաստ ելին Պրեստեսի հետ ամեն տեսակ զրկանքներ կրելու:

Գորասյան ուսեասի պաշարը զրեթե սպառվել եր, չկար վոչ սուրճ, վոչ շաքար, վոչ աղ, վոչ ծիսախոտ, վոչ ալյուր: Հագուստը և վոտնամանները պատառտվել ելին: Յերբեմն գնում ելին մինչեւ գոտիառեղերը ջրի մեջ (ապրի-

լի վերջում Սան Ֆրանսիլուն վարարում է և հեղեղում չըջակայը), բայց այդ անվեհեր մարդիկ յերգում ելին, կատակում և ծիծաղում:

Պրեստեսը նրանց հետ բաժանում եր բոլոր ձախորդություններն ու զրկանքները, քաջակերում եր թույլերին ու ծիծաղում փոքրողինների վրա: Նա հաճախ կրկնում եր.

— Իմացիք, վոր հեղափոխական պատերազմը, դա անընդհատ շարժման պատերազմ է: Դեսի առաջ:

Յերբ զորասյունը հասավ Մոնակ Ալեգրե, այնտեղ դըրությունը թեթևացավ: Ճանապարհին դյուզացինները քարցած կամավորներին պարեն, կաթ և մրգեր ելին մատակարարում: Ույժ առնելով, Պրեստեսի կամավորները քայլում ելին կանաչ մարգագետիններով և անտառներով:

Հունիսի 17-ին Մոնտե Ալեգրեյի բնակչությունը սիրալիք կերպով ընդունեց Պրեստեսի զորասյունը: Նվազում եր որկեստը, վողջույնի ճառեր ելին արասանվում: Պոմբարում ի պատիվ զորասյան իսկական տոն կազմակերպվեց:

Հերոսական զորասյան շարժման լուրը հսկայական հետաքրքրություն և համակրանք եր առաջացնում աշխատա. վորների մեջ: Ամենուրեք, ուր անցնում եր զորասյունը, նա ստանում եր բազմաթիվ նամակներ, վորոնք նրա մարտիկներին հայտատիացնում ելին աշխատավոր բնակչության սիրո և նվիրվածության մտսին:

Ահա բնորոշ մի նամակ, վոր Պրեստեսը նորից Պերնամբուկույի միջով անցնելիս ստացել եր կեյմազոս դյուդի բնակիչներից.

«Մեր հոչակալոր բարեկամ, դեներալ Պրեստես,

Ուղարկում ենք սրտագին վողջույն և յերջանկություն հնք ցանկանում ձեզ և բոլոր նրանց, ովքեր ձեզ հետ միտ-

սին պայքարում են մեր իրավունքների համար, վորոնցից մենք արգեն վաղուց զրկված ենք: Մենք չառ և շատ տարիներ ապրում ենք ստրկության վիճակում, բռնակալների իշխանության տակ... Պերնամբուկույի այս վոքքիկ դյուռ դում շատերը խիստ կուղենային անձամբ ձեզ հետ ծանոթանալ... Սրտանց զրկում ենք ձեզ: Կեցցե Հեղափոխությունը»:

Սենտո Սեյից հեռանալուց մի ամիս հետո հեղափոխական զորացունը նորից մոտենում եր Սան Ֆրանսիսկույի ափերին, 32 որում անցնելով մի հսկայական տարածություն— 1470 կիլոմետր:

Այս անդամ գետանցը վոչ վոք չեր հսկում: Առափնյա դյուռում հաջողվեց մի քանի մակույկ գտնել: Այդ ժամանակ գետի վրա յերևացին առևտրական մի քանի նավեր, վորոնք բեռնված եյին անասուններով: Հաջողվեց դրավել դրանցից մեկը և ոդապործել գետն անցնելու համար, վոր սկսվեց հուլիսի 2-ի յերեկոյան և վերջացավ 3-ի առավոտյան: Զորացյան փոքրաթիվ ձիերը նույնպես փոխադրվեցին գետի մյուս ափը: Հակառիկ ափում վառվեց մի մեծ խարույկ, վորը բոցվածում եր ամբողջ գիշերը, լուսավորելով զորացյան ճանապարհը, զորացյան, վորն ուրախությամբ լողում եր գեպի Պերնամբուկույի ափը:

Մի բուռն քաջարի հեղափոխականներն աղատվեցին թակարդից:

“ԱՆՊՐԵՏԵԼԻ ԶՈՐԵԱՅՅԱՆ” ԱՐՃԱՎԱՆՔԻ ՎԵՐՋԻ

«Վոչ վոք դեռ մեզ չի պատմել այդ եղիքական արշավանքի բոլոր մանրամասնությունները: Բայց

միլիոնավոր գյուղացիներ պահպանում են նրա վերաբերյալ ավանդությունը: Իսկ մենք դիտենք միայն այն, վոր Բրազիլիայի վառ արևը հազար հինգ հարյուր անդամ ծագել ե այդ հերոսների վրա, վոր նըրանք թվով մեջ, վոր մարդկանց մի մասը մեռել ե այն վուշու մեջ, վոր մարդկանց մի մասը մեռել ե այն պատճառով, վոր ստամոքսները դատարկ են յեղել, իսկ մյուսները մեռել են տենդից, վոր այն վոլորապտույտ արահետները, վորոնցով անցնում եյին նըրանք, պատառութել են նրանց հազուստը,— և նրանք քայլում եյին կիսամերկ, հրացանները ձեռներին: Այն գյուղերի բնակիչները, վորտեղից անցել են նըրանք, ապստամբում եյին, որհնում նրանց, ու յերբեմն թվում եր, վոր Պրեստեսի բանակը կարող ե հաղթահարել նույնիսկ մահը, վորովհետև զոհվածների տեղ դալիս եյին ուրիշները»... (Ֆիլիպ Զորդան) ¹⁾:

...Անցավ յերկու և կետ ամիս: Հետ մղերով բաղմաթիվ թշնամիների գրոհները, Պրեստեսի քաջ զորացյունը հետաքարձ ուղղությամբ անցավ յերեք նահանդ— հարավային Պիտույին, Գոյասը և Մատու-Գրոսուն— և մոտենում եր Կոլինին, տակվարյան շրջանի գլխավոր քաղաքին: Զորակույնին, տակվարյան շրջանի գլխավոր քաղաքին: Զորասյան մարտիկների դրությունը խիստ ծանր եր, բայց նըրանց վճռականությունն ու ենտուղիազմը բնա՛վ չեյին պակասել:

Այդ ժամանակ զորացյունում մնացել եր ընդամենը 800 հոգի, վորոնցից միայն 600-ն եյին մարտունակ: Հրա-

1) Տե՛ս «За рубежом» Ժուլիուս, 1936 թ. դեկտեմբեր:

յաններն ու ատրճանակները հնացած սիստեմի եյին։ Ամենից սարսափելին փամփուշտների պակասությունն եր։ Դըրա պատճառով զորասյունը ստիպված եր խուսափել թըշնամու հետ ընդհարվելուց։

Յերկու և կես տարվա պայքարից հետո զորասյան հրամանատարության առաջ ծառացավ մի հարց՝ ի՞նչ անել հետաձգում։ Հրամանատարության կարծիքով այդ հարցը լուծելու իրավունք ուներ միայն մի մարդ։ Այդ մարդն եմ իրացիայում գտնվող մարշալ Խորդորո Լուսեան եր, Սան Պաուլոյում յեղած հեղափոխական ապստամբության նախաձեռնողը։

1926 թվի սեպտեմբերի 24-ին 80 մարդուց բաղկացած մի ջոկատ Սիկեյրա էամպոսի գլխավորությամբ անջատվեց ընկերների հիմնական մասսայից և ամայի ճահճուաների վրայավ շարժվեց դեպի հարավ, դեպի Արգենտինայի սահմանը։ Արգենտինայում նրանք պետք ե այցելելին մարշալին և նրանից հրահանդներ ստանային։ Զորասյան մնացած մասը շարունակեց ընթանալ դեպի Հյուսիսարևմուտք, դեպի բոլիվյան-բրազիլյան սահմանը։

Դեկտեմբերին զորասյունը գտնվում եր «կոռւնիի զետի» արմասի հանքերի ուայոնում։ Պարզվեց, վոր խզվել և կապը մի վաշտի և զորասյան հիմնական մասսայի միջև։ Այդ վաշտի դրությունը չափազանց ծանր եր։ Նա ընկերներից բաժանված եր ավելի քան հարյուր կիլոմետր տարածությամբ։ Մարտիկներն արդեն դիմադրել եյին իրենց դեմուղարկված պահնորդների մի քանի կատաղի գրոհներին։ Հրամանատարը հավաքեց զինվորներին և բացահայտ կերպով նրանց բացատրեց ստեղծված դրությունը։

Անչափահաս թուժամբ, վոր գտնվում եր զորասյունում,

հուզմունքով եր լսում նբան։ Նրա խիզախ սիրալ վաղուց արդեն առիթ եր տննչում սիրապործություն կատարելու հանուն հեղափության և աղասության։ Թոժան ընդամենը տասյերեք տարեկան եր։

Զորասյունում կային մի քանի տղաներ—մուլատներ և նեղրեր։ Նրանցից վոմանք յեկել եյին հարավից, մյուսները միանում եյին ճանապարհին, թողնելով դաժան տերերին և ծանր, ստրկական աշխատանքը։ Դեռ Գոյասում զորասյան չարքերը մտավ փոքրիկ, դանդրահեր նեղր Ալդոն։

Այս յերկուոտ տղան ապրում եր Փեղալի մի կալվածքում, ստրկի վիճակում։ Փոքրիկ Ալդոն միշտ պատառությամբ շորերով եր, կեղտոտ, քաղցած, մարմնի վրա միշտ ունենալով ծեծի, աքացիների հետքեր։ Նրան ստիպում եր մին աշխատել առավոտից մինչև զիշեր և նույնիսկ թույլ չեյին տալիս զուրս զալ կալվածատան գարպասից։ Կառավարիչը հաճախ ստում եր այդ փոքրիկ նեղրին, վոր հնրահամար բարերարություն են արել», վոր նա պետք ե «զիշեր ցերեկ աստծուն աղոթի իր սինյորի համար, վորը նորան ապաստան ե տվել»։

Զորասյունում, նոր բարեկամների մեջ փոքրիկ Ալդոն առաջին անդամ սովորեց ծիծաղել, առաջին անդամ իմացավ, թե ինչ ե նշանակում աղատ լինել...

Դժբախտ Ալդոն մեռավ վողբերգական մահով։ Պիանկոյի մոտ բեռնարդիստների ձեռքն ընկան մի ամբողջ խումբ դերիներ, վորոնց թվում Ալդոն։ Սպիտակ բանդիտները դազանարար տանջեցին և սովանեցին նրան...

— Թույլ տվեք ինձ զնալ, իմ կապիտան, — վողեվորությամբ բացականչեց փոքրիկ թոժանը։ Յես կդանեմ մերոնց։ Հանգիստ յեղեք, յես այդ կանեմ։

Մի քանի րոպեյից հետո թոմասը նստել եր դորշ հովատակը, վորը շարունակ փորձում եր ծառա լինել: Բայց համարձակ, իր հասակի համեմատությամբ ուժեղ տղան հիանալի կերպով կարողանում եր վարվել տաքարյուն ձիւների հետ: Տղան թունդ մտրակեց իր հովատակին, ասպանդակեց ու սլացալ դեպի հեռուները:

Թոմասը թռչում եր կտրատված, անհարթ վայրով. վորը ծածկված եր խիտ թփուտով: Նա ամբողջ թափով սլացավ թչնամու պոստի կողքից: Ողում սվավացին մի քանի գնդակներ, վորոնք, բարեբախտաբար, չդիպան թոմասին: Թոմասը թռչում եր ինչպես մըրիկ: Նրա մատաղ սիրտն ավելի և ավելի ուժեղ եր խիում և լի յեր հզարտությամբ, վոր ընկերների փրկությունն իրեն են վրտահել:

Ճանապարհին նողան անցավ մի քանի արագընթաց, վուլորապտույտ գետեր և սկսեց բարձրանալ լեռները, վորոնք ծածկված ելին անտառով...

— Թե ինչ արեց փոքրիկ թոմասը, այդ մասին սկերճա- խոս կերպով պատմում եր զորասյանն ուղղված հրամանը. «Հրաման № 29, 31 գեկտեմբերի, 1926թ.

Թոմաս Ակինոն, Պիտույի նահանգի բնակիչը, 13 տարեկան, պատկանում է այն տղաների թվին, վորոնք իր կամանորներ մտել ելին զորասյան կաղմի մեջ: Թոմասը զինվորների հասարակ ողնականից դարձավ իսկական հերոս, առաջ քաշվեց իր ընկերների միջավայրից, շնորհիվ իր արտասովոր քաջության: Նրա վարքը հիացմունք եր պատճառում զորասյան ամբողջ սպայական կաղմին:

Դեկտեմբերի 3-ին փոքրիկ թոմասն առանձնահատուկ քաջություն ցուցաբերեց: Նրան հաջողվեց կազ հաստատել

յերկու վաշտերի միջև, 108 կիլոմետր տարածության վրա, 12 ժամվա ընթացքում, թշնամու գրաված տերիսորիա- յում: Այս անգնահատելի ծառայությունը մի ավելորդ անգամ հաստատում ե, թե ինչպիսի բարձր բարոյական հատկություններ ունի փոքրիկ թոմասը, վորն այս պատճառով արժանի յեցի յեֆրեյտորի կոչման, վորպիսի կոչումը նրան տրված է այսորվանից»:

1927 թվի հունվարի 10-ին զորասյունը մտավ նոր մարդ: Այստեղ, ընդհուպ մինչև Բոյլվիայի սահմանը, ճպվում են անծայրածիր ճահիճները: Այս ճանապարհն ամենից հոգնեցուցիչն ու ամենածանրն եր ամբողջ արշավանքի ընթացքում: Ընկնում եյին վերջին ձիերը, վորոնք վերջնականապես հյուծվել ու քայքայվել եյին: Շատ զինվորներ գնում եյին յեղներին նստած, անասունների մի մասն ոգտագործվեց պատճարակները և բեռները փոխադրելու համար:

Շուտով ամբողջ զորասյունը վուտով եր գնում: Յեղներն ոգտագործեցին սննդի համար: Նույնիսկ մի պտղոց աղ ել չկար, վորպեսզի աղ անեյին միար: Պարենի ամբողջ պաշարը սպառվեց, և մարդիկ սկսեցին թուլանալ քաղցից: Մի քանի հոգի մեռան: Մնացածները, հափաքելով վերջին ույժերը, շարունակում եյին քայլել, հաճախ մինչև գոտի կատեղերը ջրի մեջ: Վոտնաման վոչ վոք չունել:

Գիշերում եյին սովորաբար այնպիսի տեղերում, ուր համեմատաբար չոր եր և ուր հաջողվում եր խարույկ վառել: Գիշերը միլիոնավոր մոծակները նեղում եյին մարդկանց: Սեպտեմբերա դետից մինչև Կաբասալ մարտիկները մտիպված յեղան անտառում ճանապարհ բաց, անել 200 կիլոմետր տարածությամբ: Ճահիճների միջով այս ամբողջ դժվարին ճանապարհը նրանք անցան ութն որվա ընթացքում:

Այստեղ, այս հսկայական ճահիճներում, այս ծանր պայմաններում առանձնապես ցայտուն կերպով արտահայտվեց զորայտն մարտիկների և հրամանատարների արդիությունն ու անձնությունը։ Զորասյան առաջնորդներ Պրեստեսը, Միջել Կոստան զինվորների հետ ելին։ Երանք լուռ տանում ելին քաղցի տանջանքները, աշխատում ելին բոլորի հետ հավասար, կամքի մեծ ույժ ելին ցուցաբերում և հեղափոխական գիտակցության, քաջության ու կարգապահության որինակ ելին ցույց տալիս մը նացածներին։

1927 թվի վետրվարի 3-ին զորասյունը ճամբար կաղմեց Բոլիվիայի¹⁾ սահմանի մոտ և սպասում եր մարշալ Իսիդորոյի պատասխանին։ Նա յերկար չսպասեց։ յերկու ժամեց հետո այսուեղ ժամանեց Մորեյրա Լիման, վորը Պրեստեսին հաղորդեց մարշալի հետեւյալ հրամանը։

«Դիմանալ միայն յերկու ամիս, նոյեմբերի 23-ից սկսած։ յեթե այդ ժամանակ հարավում դրությունն այնքան անբարենպաստ լինի, վոր այլևս իմաստ չունենա առանձնացած դորձելը, — դադիւցեք արտասահման և աշխատեցեք անցնել Ռիու Գրանդի դու Սուլ, վորպեսզի այստեղ շարունակեք պատերազմը։»

Յերկու ամսվա ժամկետը, վոր նշանակել եր մարշալը, արդեն լրացավ։ Պրեստեսը վորոշեց մի քանի որ ել սպասել, մինչև վոր վերադառնա ուշացած Միկեյրա Կամպոսը, ապա անցնել սահմանը։

Շուտով ժամանեց Միկեյրա Կամպոսը։ Նա պատմեց մարշալ Իսիդորոյի հետ ունեցած դրույցի մասին։ Մարշա-

լը նրան ասում եր, «Զեր զորասյունը գերազանցեց իմ բոլոր սպասելիքները։ Յես նրան անվանում եմ «Զորասյուն-փյունիկ», վորովհետև նա նման է առասպելական Փյունիկ թուշունին, վորը հավերժ վերածնվում է բոցից։ Վոչ վոք իրավունք չունի ձեղանից ավելի մեծ զոհեր պահանջելու։ Տվյալ պայմաններում պատերազմը շարունակելն անողուա ինքանզություն լլիներ»։

Փետրվարի 4-ին բոլիվիական կայազորի պարետի հետ միասին կազմվեց մի ակտ՝ սահմանը կամավոր կերպով անցնելու և ցուցակով զենքերը հանձնելու մասին։ Թույլատրվեց յուրաքանչյուր տասը մարդու համար թողնել միայն մի վիճակուր՝ ինքնապաշտպանության համար։

Զորասյունը Բոլիվիայի սահմանապահներին հանձնեց 90 մասուդեր, 4 գնդացիր և մոտ 8000 փամփուչ։ Բոլիվիա ժամանեց ընդամենը 620 հոգի։ Դա այն ամենն եր, ինչ վոր մնացել եր զորասյունից։ Ճանապարհին մեռածների համար սահմանի մոտ յեղբայրական գերեզման կառուցվեց։ Գերեզմանի վրա ծաղկներ ցանեցին և այն խնամքով ծածկեցին աղդային դրոշակով։

Այնուհետև զորասյունն անցավ բոլիվիական սահմանը։

Այսպես վերջացավ «Պրեստեսի զորասյան» անորինակ հերոսական արշավանքը, վորը սկսվեց Սան Պաուլույում 1924 թվի հուլիսի 5-ին և վերջացավ 1927 թվի փետրվարի 4-ին։

Ոտար յերկուում դանվող Պրեստեսը չկտրեց կապն իր զորասյան մարտիկների հետ։ Նա հոգատարությամբ կադմակերպեց հիվանդների բուժումը։

Ապշեցուցիչ են այն սերն ու նվիրվածությունը, վոր զորասյան հիվանդ մարտիկները տածում ելին դեպի Պրես-

1) Պետություն և Հարավային Ամերիկայում։

տեսը; Մեռնելիս նրանք միայն մի բան եյին խնդրում—իրենց տեղափոխել նրա սենյակը. «Պրեստեսի անկողնում մեռնելլ» նրանց ավելի հեշտ ու հանդիսա եր թվում: Միքանիսները հրաժարվում եյին դեղ ընդունելուց, պահանջելով, վոր ինքը, Պրեստեսը գա:

Արդեն յերկու որ Պրեստեսը չեր քնել, բայց իմանալով հիվանդ մարտիկների ցանկությունը, յեկալ: Ի՞նչ կա վոր, նա հաճույքով կկատարի նրանց խնդիրը: Պրեստեսը շիշն ու գդալը ձեռքին հերթով մոտենում ե հիվանդներին: Նա խոսում ե ամեն մեկի հետ, կատակում, ամեն մեկի համար մի առանձին փաղաքական խոսք ե դտնում: Մարդիկ աշխուժանում են, նրանց ինքնազդացումը բավական լավանում ե: Նույնիսկ ծանր հիվանդը կիսաբաց աչքերով, ճիղ թափելով, դանդաղ շուռ ե գալիս սիրված առաջնորդի և բարեկամի կողմը: Նրա բորբոքված հայացքը ցույց ե տալիս, վոր նա պաշտում ե իր առաջնորդին:

Պրեստեսը հսկայական եներգիա յեր ցուցաբերում, աշխատանք դտնելով իր արշավակից ընկերների համար: Նա չհանդստացավ, մինչև վոր նրանք բոլորը տեղափորվեցին: Իր առողջությունը վատ վիճակում եր, բայց նրա համար անձնական գործերը միշտ հետին տեղ եյին բռնում:

ԿԱՐԼՈՍ ՊՐԵՍՏԵՍԻ ԳՈՐծՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԵՏԱՊԸ

Դանկելով ոտար յերկրում, Պրեստեսը սաստիկ կարիքի մեջ եր:

1928 թվին բրագիլիական «Կորրեյո դա Մանյան» («Առավոտյան սուրհանդակ») առաջադիմական թերթը նրան

առաջարկեց լինել իր ներկայացուցիչն Արգենտինայում և Ռուսակայում: Համաձայնության դեպքում Պրեստեսը միաժամանակ պետք է ստանար հազար դոլար և բարձր ոռոգիկ:

Բայց Պրեստեսը հրաժարվեց: Իրեն հասուն շիտակությամբ նա այդ մասին դրում եր իր բարեկամներից մեկին. «Ես գերադասում եմ մնալ անհայտ, հնարավորին չափ խուսափելով աղմուկից, վոր անխուսափելիորեն կստեղծվի իմ անվան շուրջը: Դուք գիտեք, սիրելիս, թե ինչպիսի դժվարությունների հետ կապված կլիներ իմ աշխատակցությունը մայրաքաղաքի, Ռիոյի թերթին»: Այսուհետեւ Պրեստեսը զրում եր, վոր նա չի կարող և չի ցանկանում թաղցընել իր հեղափոխական հայացքները:

Հայրենիքում մնացած բարեկամների հետ նրա կամը չեր կտրվում: Նա հսկայական հարգանք և սեր եր վայելում բրագիլյան ամբողջ ժողովրդի կողմից: Բրագիլյայի ամենահեռավոր անկյուններից նա հարյուրավոր նամակներ եր ստանում, վորոնց մեջ իր նկատմամբ սեր և խորը հավատ եր արտահայտվում:

«Մենք, բրագիլիացիներս, քո մեջ տեսնում ենք մեր հույսի ասպետին, — գրում եր նրան անհայտ մի մարդ, — հերոսին, վորը նույնիսկ պարտության բոլեյին կարողացավ պահպանել իր իդեալների անփոփոխ մաքրությունը... բարյական անխորսակելի մեծությունը: Մենք քո մեջ տեսնում ենք անբիծ պետական գործիչներ և փայլուն հերոսին, — մեր ամբողջ ժողովրդի սիմվոլը, նրա բոլոր յերազանքների մարմնացումը; Դրա լավագույն ապացույցը հանդիսանում ե քո նկատմամբ յեղած կատաղի ատելությունն ոտարերկրյա կապիտալիստների կողմից, վորոնք շահա-

դործում են մեր հսկայական, հրաշալի, արդավանդ հայրենիքը»:

Այն ժամանակ Պրեստեսի ստացած բաղմաթիվ նամակը ներից չափազանց հետաքրքիր ե պաշտոնաթող մի մայորի, ծերունի հաշմանդամի սրտաբուլլի նամակը.

«Վորդյա՛կ իմ, յե՞ս շատ լավ եմ պատկերացնում, թե քեզ համար վորչափ ցավալի յե հեռու գտնվել սիրած հայրենիքից և այն ամենից, ինչ վոր թանկ ե քեզ համար... Դու ստարության մեջ տանում ես հիմանդություններն ու կարեքը. դու այդ ամենը տոկունությամբ տանում ես դեպի քո յեղբայրները տածած սիրո պատճառով: Բայց հավատացած յեղիր, վոր քո անունն արտասանում են հազարավոր մարդեկ, վորոնք քո մեջ տեսնում են հերոսական դրասյան խիզախ առաջնորդեին, վորը չի արատավորել իր պատիվը:

Քո անունը, վոր փառքով ե պսակված, կհավերժանապատմության եջերում, կոպակաբանայի լեգենդային հերոսների անուններին հավասար: Վորդյա՛կ իմ, յես 72 տարեկան եմ: Իմ զառամյալ հսանկը և մեր հայացքների դասակարգային ընդհանրությունը թույլ են տալիս քեզ վորդի անվանել: Դու քո ազնիվ գործերով ժողովրդի սրտում տպավորեցիր «Ազատություն կամ մահ» վեհ խոսքերը: Ժողովուրդը սպասում ե այն վեհ որվան, յերբ նա կկարողանաըստ արժանույն մեծարել քեզ: Ընդգւնիր հին զինվորի դիրկն ու համբույրը»:

Բոլիվիայի մի փոքրիկ քաղաքում, իր սենյակի առանձնաբանում Պրեստեսը շատ եր կարդում ու պարապում: Նա փորձում եր հասկանալ իր ժողովրդի դժվարությունների պատճառները, հասկանալ քաջարի դողովութիւնում անհաջողու-

թյունների պատճառները: Նա կարդաց բազմաթիվ պատմական և տնտեսական դրքեր, նա ուսումնասիրեց Մարքսի, Ենգելսի, Լենինի յերկերը: Նրա վրա առանձնապես ուժեղ տպավորություն գործեց Լենինի՝ «Խմալերիալիզմը վորպես կամպալտալիզմի բարձրագույն ստաղիա» դիքը:

Մինչև վլադիմիր Իլյիչ Լենինի հանճարեղ աշխատության հետ ծանոթանալը Պրեստեսը շատ բան չեր հասկանում:

Պրեստեսը հետզհետե ավելի յեր համոզվում, վոր Բրազիլիայի բոլոր դժբախտությունների համար հանցավոր են տիրող դասակարգերը— կապիտալիստները, խոչոր կալվածատերերը— հողի սեփականատերերը, հարուստ պլանտացիոններն ու բանկիրները, վորոնք հայրենիքն աշ ու ձախ ծախում են ստարերկրյա կապիտալիստներին: Նա տեսնում էր, թե ինչպես Բրազիլիայի բանվորներն ու գյուղացիները տանջվում եյին քաղցից, միևնույն ժամանակ բուրժուազիան, սուրճի բարձր գները պահպանելու համար, իր շահույթները փրկելու համար ծովը թափեց յերկու միլիոն պարկ սուրճ և միլիոնավոր պարկեր ել այրեց:

Կոմունիզմի մեծ գաղափարներն ավելի և ավելի եյին խորանում Պրեստեսի գիտակցության մեջ: Նրա նախկին «բարեկամներից» մի քանիսին, հեղափոխական շարժման մեջ պատահական ուղեկիցներին, սարսափեցրեց այդ, և նրանք հեռացան Պրեստեսից: Դրա վոտարեն նա մի անգամից հազարավոր նոր բարեկամներ դուավ աշխատավոր ինտելիգենցիայի մեջ և իրեն հարազատ բրազիլյան ժողովութիւն աշխատավորների լոյն շրջանում:

Ահա մի նամակ, վոր այն ժամանակաշրջանում Պրեստեսը ստացել եր իր նախկին մի մարտիկից: Նամակում այդ

ընկերը յերդվում է, վոր հավատարիմ և նրան, և արհամարանքով է խոսում լիբերալների մասին.

«Յես, ձեր նախկին մարտիկներից մեկը, յերդվում եմ, վոր հավատարիմ եմ ձեզ, վորտեղ ել վոր գտնվեմ. յերդվում եմ պաշտպանել ձեզ, ինչպես միշտ պաշտպանել եմ: Մեր արշավանքից հետո յես բնակվում եմ Բելեմում, ուր իբր սանիտար ծառայում եմ ծովային հիվանդանոցում: Վոչ մի բոպե ձեզ չեմ մոռանում: Միշտ պատրաստ եմ, վորպես զինվոր, լինել ձեր արամադրության տակ, վորով հետև յես յերբեք լիբերալ չեմ յեղել: Յես համոզված եմ, վոր միայն դուք եք ընդունակ Բրազիլիան փրկելու»:

Բրազիլիայի զանազան ռայոնների հասարակական կազմակերպությունները ջերմ կոչերով դիմում եյին Պրեստեսին և առաջադրում նրա թեկնածությունը՝ սենատոր ընտրվելու համար: Պելոտաս քաղաքի «Յերիտասարդ ազատարների ընկերությունը» հաղորդում եր նրան. «1930 թվի մարտի 1-ի ընտրությունների ժամանակ մենք ուրախությամբ տեսանք, վոր ձեր պանծալի անունն ավելի քան 10 հազար քվե ստացալ»:

Ռիու Գրանդի դու Սուլում ընտրողները դրում եյին Պրեստեսին, վոր ժողովուրդը նրան համարում եր պահծականի տրադիցիաները շարունակողը, վոր բազմաթիվ մարդիկ ձայն են ավել հոգուտ նրա թեկնածության՝ սենատոր ընտրվելու համար:

1930 թվի վերջում, յերբ Պրեստեսը դեռ գտնվում եր ոտար յերկրում, Բրազիլիայում իշխանությունն անցավ լիբերալներին՝ Վարդասի դլիսավորությամբ: Վարդասն իշխանության դլուխ անցավ՝ ոգտագործելով ժողովրդական պատաժությունը, վոր ուզգված եր ուսակցիոն պրեզիդենտ

Վաշինգտոն Լուիսի (Բեռնարդեսի հաջորդի) դեմ: Վարդասը ժողովրդին խոսացավ դեմոկրատական լայն ռեֆորմներ¹⁾ կատարել, վերաբաշխել հողերը և աղջայնացնել ուժարեկրյա մի քանի ձեռնարկությունները: Նրա համախոհներից մեկը (Մինաս Թահանդի պրեզիդենտը) հետեւյալ լիտի խոստովանությունն արագ: «Յեկեք, — ասաց նա, — շուտով հեղափոխություն կատարենք, թե չե ժողովուրդն ինքը կատարի այն»:

Հետաղյում Վարդասը կիրառում եր նույն ռեակցիոն քաղաքականությունը, ինչ վոր նրա նախորդը:

Պրեստեսի բարեկամները—Միգել Կոստան, Խսիդորոն, Սիկեյրան, Ժոան Ալբերտոն և 1930 թ. հեղաշրջման մյուս կազմակերպիչները նրան կտրականապես կոչ եյին անում վերադառնալ Բրազիլիա՝ պաշտպանելու Վարդասի լիբերալ կառավարությունը: Պրեստեսը վերջնականապես հրաժարվեց վորեւե ոժանդակություն ցույց տալ Վարդասի կառավարության և աշխատել լիբերալների հետ միասին: Պրեստեսը բացահայտ կերպով արտահայտում եր իր համակրանքը կոմունիզմին և չեր թաղցնում, վոր մտադիր ե անցնել պրոլետարական հեղափոխության համար մարտնչողների բանակը:

Նրա թշնամիներն ոգտվեցին դրանից և մամուլում կամպանիա մղեցին, մեղադրելով Պրեստեսին «հայրենիքին դավաճանելու» մեջ: «Պրեստեսը դավաճանաբար թողեց ընկերներին, վորոնք նրան հավատում եյին ինչպես առաջնորդի»— ճշում եյին այդ ռեակցիոնները:

Պրեստեսը յերկար մտածեց՝ նախքան կվճռեր խղել

1) Բարենորդումներ:

կապն իր բարեկամների հետ և միանդամից դառնալ դեպի ձախ, պրոլետարական հեղափոխության կողմը։ Նա արեց այն ամենն, ինչ վոր հնարավոր եր, վորպեսզի ազգեր նրանցից մի քանիսի վրա և համոզեր, վոր հետևեն իր ու փեսակին։

Նա Տավորային գրում եր. «Լինելով քո բարեկամը և հին ընկերը, թախանձագին խնդրում եմ քեզ առավելադույն որեկտիվությամբ կարգալ իմ մանիֆեստը¹⁾ և լավ մտածել մեր ժողովրդի փորձությունների՝ իմ մատնանըշած պատճառների մասին։ Դու պետք է փոխես քո մակերեսային հայցքը քաղաքականության նկատմամբ և խորապես հետամուտ լինես մեր յերկրի դժբախտությունների խսկական, անտեսական պատճառներին»։

Նա գրում եր մարշալ Խոխորյովին. «Դուք շատ լավ եք հասկանում, թե յես ինչպիսի պայքար եմ մղել, նախ քան վորոշել եմ հանդես գալ իմ յերտությով։ Յես ստիպված եյի արտահայտվել բացահայտ կերպով ու անկեղծորեն և ընտրություն կատարել մի կողմից իմ համոզմուքների և մյուս կողմից իմ լավագույն ընկերների բարեկամության ու հարգանքի միջև։

Ցեղ Պրեստեսն ընտրություն կատարեց։ Նա մտավ կոմունիստական կուսակցության մեջ։ Այնուհետև նա իրեն ամբողջովին նվիրեց ժողովրդական մասսաների կաղմակերպման իր հայրենիքի վերածնության և ազատագրման համար։

Վարդասի կառավարությունը վոչ մի լավ բան չտվեց

1) Այդ մանիֆեստում Պրեստեսը կարականապես մատնանշում եր, վոր իմպերիալիզմը Բրազիլիայի և նրա ժողովրդի բոլոր դժբախտությունների պլանավոր պատճառն է։

աշխատավորներին և բնակչության գեմովը առատական խավերին։ 1934—1935 թ. թ. դործադուլ արին ավելի քան մեկ և կես միլիոն բանվորներ, բողոքելով աշխատանքի անտանելի պայմանների դեմ, մանավանդ ոտարերկրյա ձեռնարկություններում։ Ամբողջ յերկրում, քաղաքների փողոցներով քայլում եյին բազմամարդ ցույցերը, վորոնք դատավետում եյին լիմպերիալիզմի թալանչական քաղաքականությունը։ Զանազան վայրերում դյուզացիական հուզումներ ոկազեցին։ Համալսարաններում և դպրոցներում տեղի եյին ունենում աղմկալից ժողովներ, վորոնք վերջանում եյին վոստիկանության հետ յեղած ընդհարումներով։

Բանակում և նավատորմիղում լուրջ հուզում սկսվեց։ Վարդասը դիմեց բողոքի գաղանային, Փաշխստական ճնշըման ամենալավան մեթոդներին։ Նա ամեննեին չեր արդելում բրազիլյան Փաշխստական կազմակերպության («Ինտեգրալիստներ») աճող դործունեյությունը, կազմակերպության, վոր ծագել եր 1931—1933 թ. թ. իտալական «սև շապկագորների» որինակով։ Միենալուն ժամանակ Վարդասի վոստիկանությունը դադանային բռնություններ դործագրեց հեղափոխական բանվորների դեմ։ Կոմկուսակցությունը գտնվում եր խորն ընդհատակում։

Բրազիլյան ժողովրդի առաջ ցցվեց Փաշխստական բըռնացման ահեղ վտանգը։

Այդ վտանգի հանդեպ համախմբվեց այն ամենն, ինչ վոր յերկրում լավագույնն եր, աղնիվ և առաջադիմական։ Միասնական հակաֆաշխստական և հակախմբերիստական ճակատի անդնդատ աճող շարժումն ընդգրկեց բրազիլյան ժողովրդի ամենատարբեր խավերին։ Յերկրում ու եցոր աճում եր Վարդասի դավաճանական քաղաքականությունների պլանավոր պատճառն է։

թյան դեմ ուղղված դժբոհությունը, հաճախ ընդունելով բացահայտ մասսայական յելույթների ձևեր։ Բրագիլիայի աշխատավորները և բնակչության ամենազեմոկրատական խավերը ստեղծեցին ժողովրդական ճակատ և իրենց բաղմաթիւ կազմակերպությունների միջցով համախմբվեցին և 1935 թվի հունվարին կազմեցին մի միություն, վորը կոչվեց Աղքային-աղատագրական ալյանս (միություն)։ Բոլորի ընդհանուր ցանկությունն այն եր, վոր այդ հակառակացածական աղղային կազմակերպությունը դիմավորեր հոչակալոր, սիրված ժողովրդական հերոս, «Հույսի Ասպետ»— Լուիս Կարլոս Պրեստեսը, վորը դոմիլում եր ուսար յերկրում։

ԱԶԴԱՅԻՆ—ԱԶԱՏՄՐԱԿԱՆ ԱԼՅԱՆՍ (ՄԻՈՒԹՅՈՒՆ)

Բրագիլիայի աղքային-աղատագրական ալյանսը միավորեց մեծ քանակությամբ դեմոկրատական, հակախմակերիսալիստական և հակաֆաշիստական կազմակերպություններ։ Ալյանսի մեջ մտան բանվորական բոլոր կազմակերպությունները, լիբերալների կուսակցության ճախ թեր, բուրժուազիայի գեմոկրատական մասը և անարխիստները։ Գիտնականները, պրոֆեսորները, փաստաբանները, բժիշկները, իրավաբանները, ինժեներները, պետական պաշտոնյանները, նույնիսկ մի քանի կաթոլիկ քահանաներ հարեցին աղատագրական ալյանսի ծրագրին։

Ալյանսի «Առավոտ» լրագիրը ձեռքից ձեռք եր խլվում։ Ալյանսը մեծ աղղեցություն ձեռք բերեց։ Ալյանսին հարեցին՝ գեներալ Միքել Կոստան, «Անպարտելի զորացյան»

նախակին հրամանատարը, վոր 1930 թվին պաշտպանում եր վարդապահն։

Յերեք և կես ամսից հետո յերկրի 25 նահանգներում ալյանսի կազմակերպություններ ստեղծվեցին։ Բոլոր քաղաքներում, բոլոր խոշոր ձեռնարկություններում, յերկանթուղիներում, դպրոցներում և համալսարաններում, ուղմանայիներում և բանակի զորանոցներում— ամենուրեք յերևան յեկան ալյանսի բաժանմունքներն ու կոմիտեները։ Բանակում ալյանսին հարեց միջին և ստորին սպայության մասսայական կազմակերպությունը։

Հսկայական միտինգներում հաղարավոր մասսաների ընդհանուր ցնծության ներքո Պրեստեսն ընտրվեց ալյանսի նղատվալոր նախագահ։

Ստրկության վոչնչացման տարեղարձին, 1935 թվի մայիսի 13-ին Ռիո-դե-Ժանեյրոյի մեծ հրապարակությունում կայացավ բաղմահաղար միտինգ։ Հրապարակը լեկ-լեցուն եր ժողովրդով։ Հաղարավոր նեղրեց և սպիտակամորթներ, բանվորներ, զինվորներ, ուսանողներ և ինտելիգենտներ հաճախական քում ելին Լուիս Կարլոս Պրեստեսի նամակը։

Ժողովրդական հերոսի նկատմամբ սերն այնքան մեծ եր, վոր յերբ նամակ կարդացողը բացեց այն, վորպեսզի կարդա, բոլորը վայրկենապես վերցրին ուլսարկները։ Տեղեց լոռություն։

«Յես միանում եմ աղքային-աղատագրական ալյանսի», — դրում եր Պրեստես։

Կարդացողը լոեց, տեսնելով, վոր հաճախական աղղեցում և վորպես ալեկոծ ծով։ Ելի՛ մի քանի վայրկյան, և հնչուն, հատու խոսքերը նորից լսվեցին հրապարակում։

«Յես միանում եմ աղքային-աղմտաղլրական ալյանսին, վորպեսդի նրա շարքերում պայքարեմ այն բոլոր մարդկանց հետ միասին, ովքեր չեն ուզում ծախվել իմպերիալիզմին, ովքեր ուզում են պայքարել Բրագիլիայի աղքային աղատագրության համար, Գեուղալական բոլոր մնացուկները վոչչացնելու համար, բրագիլյան ժողովրդի դեմոկրատական իրավունքները պաշտպանելու համար։ Մեզ սպառնում ե ֆաշիստական բարբարոսությունը։ Մուտենում ե վճռական պայքարի ժամը։ Այս պատմական մոմենտում Աղքային-աղատագրական ալյանսը պետք է կազմակերպի մասսաներին և նրանց սուաջնորդի դեպի կոփի։ Յուրաքանչյուր ազնիվ բրագիլիացի խորապես համոզված ե, վոր աղքային աղատագրությունն անհնարին ե առանց ոտարելիրյա պարտքերը չեղյալ հայտարարելու, առանց իմպերիալիստական ձեռնարկությունները կոնֆլիկտացիայի և աղքայնացման յենթարկելու, առանց բրագիլիայից արտաքսելու, իմպերիալիստական կապիտալի գործակալյաներին։ Մտե՛ք Աղքային-աղատագրական ալյանսի մեջ։

Յես բոցաշունչ կոչով դիմում եմ բոլոր նրանց, ովքեր Բրագիլիայում պայքարում են, վորպեսդի փակեն ֆաշիստական դիկտոտուրայի ճանապարհը, ովքեր ուզում են, վորդրավի խոշոր կալվածատեր-ֆեոդալների հողը։ Միացե՛ք պայքարելու ընդհանուր նպատակի համար։»

Ահա բրագիլյան ալյանսի ծրագիրը.

- 1) Վոչչացնել ոտարելիրյա պարտքերը։
- 2) Վոչչացնել այն պայմանագրերը, վորոնք կնքված են իմպերիալիստների կողմից և հակասում են Բրագիլիայի շահերին։
- 3) Աղքայնացնել հասարակական կարեորագույն հիմ-

նարկությունները և այն իմպերիալիստական ձեռնարկությունները, վորոնք չեն յենթարկվի աղքային-հեղափոխական կառավարության որենքներին։

4) Մտցնել ութմամյա աշխատանքային որ, սոցիալական ապահովագրություն և ծերերի սոցիալական ապահովությունն և այլն։ Ավելացնել ուսաւ աշխատավարձը։ Հավասար վարձատրություն հավասար աշխատանքների համար։ աշխատավարձի մինչմումի յերաշխիք և բանվորական որենադրության այլ ձեռնարկումներ։

5) Պայքար աշխատանքի ստրկական և ֆեոդալական պայմանների դեմ։

6) Անվարձ եքսպրոլիտացիա այն հողերի, վորոնք պատկանում են իմպերիալիստներին և խոշոր, ուսակցիոն հողային սեփականատերերին, վորոնք պայքարում են Բրագիլիայի աղատագրության դեմ։ այդ հողերի, նաև ջրային ուսոււրաների բաժանում դյուղացիներին և դյուղատնտեսական բանվորներին

7) Հնդիկներից գրավված հողերը վերադարձնել նրանց։

8) Ժողովուրդկան-դեմոկրատական աղատություններ լիակատար վոչչացում այն բոլոր հատուկ իրավունքների և արտօնությունների, վորոնցով ոգտվում են վորոշ ուսաներ կամ աղքություններ։ դավանության լիակատար աղատություն, յեկեղեցու բաժանում պետությունից։

9) Պայքար ամեն տեսակ իմպերիալիստական պատերազմների դեմ։ Համագործակցություն ամրող հարավային Ամերիկայի, բոլոր ճնշված ժողովուրդների աղքային-պատագրական շարժման հետ։

Ուսակցիոն պրեզիդենտ Վարդասը կտրականապես դիմադրեց այդ համազգային դեմոկրատական շարժման,

Հայուսարարելով, վոր իբր թե այն կըում և «օլարդ արտահայտված կոմունիստական բնույթ», և վարդապէն պաշտպանեցին պրովոկատոր-տրոցիստները: Նա սկսեց հետապահնեցին պրովոկատոր-տրոցիստները: Նա սկսեց հետապահնեցին պրովոկատոր-տրոցիստները: Նա սկսեց հետապահնեցին պրովոկատոր-տրոցիստները: Նա սկսեց հետապահնեցին պրովոկատոր-տրոցիստները:

Դրամից հետո չուտով արգելվեցին նաև մյուս, ալյանսին մոտիկ կաղմակերպությունները: Սկսվեցին խուզարությունները, ձերբակալությունները, աքսորումները և այլ դաժան միջոցներ՝ ակտիվ գործիչների— կառավարության հակառակորդների նկատմամբ: ՈՒԻՊ-ՌԵ-Ժանեյրոյում ուսանողների խաղաղ ցույցի ժամանակ, վոր կաղմակերպվել եր դասադրքերի թանկացման կապակցությամբ, վարդապատճությունը կրակում եր անդեն ուսանողների և ոլրովեսորների վրա:

Բանակի և նախատորմիդի այն ըոլոր սպաները, վորոնք համակրում ելին ալյանսին, արձակվեցին կամ կարդապահական տույժերի յենթարկվեցին: Անդիհական «Դրեյտ Ռեսուլիսմ» ձեռնարկության գործադրույթով բանվորներին խաղաղացնելու համար զորքեր կանչվեցին, բայց դինվորները չուղեցին կրակել իրենց յեղբայրների վրա: Այդ ժամանակ լինում ելին հուղիչ, անմոռանալի տեսարաններ: Բանվորների կանայք, աղջախն գրոշակներով փաթաթված նետվում ելին յերկաթուղադի վրա, վորապեսդի խանգարելին գորադնացքների յերթելվեկությունը:

Վարդապատճական վարդքը բուռն ցասում առաջացրեց ժողովրդական մասսաների մեջ և այդ ցասումը վեշացրեց ապստամբության, վորը դեկապատճամ եր աղջախն աղատադրական ալյանսը (1935 թ. նոյեմբերին):

Նատալում և Պերնաբուկույում քաղաքացիական բնակչության մի մասի հետ ապստամբեց կայազորը, պահանջելով տապալել Վարդապատճակի հյուսիս-արեելքում: Բարգիլիայի հյուսիս-արեելքում կազմվեց աղջախն-հեղափոխական կառավարություն, իսկ ՌԻՊ-ՌԵ-Ժանեյրոյում ապստամբեց Յ-ՐԴ հետեւակ գունդը, վոր հայտնի յե իր հեղափոխական տրադիցիաներով:

Այդ գեղագերից քիչ առաջ, սեպտեմբերին հրապարակվեց Պրեսենսի մանիֆեստը, վորը ցասկոտ, խարազանող խոսքերով մերկացնում եր Վարդապատճամ դաշտանական քաղաքականությունը:

«Մենք, ամբողջ Բրագիլիայի ալյանսիստներս, — գլուխ եր Պրեսենսը «Մանիֆեստում», — այսոր մի անգամ ևս վեր ենք բարձրացնում «18-ը խիզախների» դրոշակը, այն դրոշակը, վոր հարավից մինչև հյուսիս ամբողջ Բրագիլիան անցնելուց հետո պարզված ե Տերեզինայի դարբանների մոտ... Ներկա մոմենտը յուրաքանչյուր ազնիվ մարդուց պահանջաւմ ե պարզ ու վորոշակի դիրք— Փաշիզի հետ, թե՞ Փաշիզի դեմ, իմպերիալիզմի հետ, թե՞ իմպերիալիզմի դեմ: Ուրիշ ճանապարհ չկա... Բրագիլիայի աշխատավոր ժողովուրդ, յելլ' սպաստպանելու քո չահերը:

Բրագիլիայի վիճակներ, լսեցե՞ք: Բնակալներն ուղում են ձեզ ոգտագործել ձեր յեղբայրների դեմ, վորոնք պայքարում են աղջախն աղատության համար: ՈՒԻՊ-Դրանդի դու Սուլի վիճակներ, զորայան կամավորների հեղափոխական գործերի հերոսական շարունակողներ, պատրաստվեցե՞ք... դենքը դարձնելու բռնակալների դեմ:

Գյուղացիներ, հեղափոխական ժողովրդական կառավարությունը յերաշխափորում ե ձեզ այն հողերին և ամբարտակներին տիրանալը, վոր կգրավեք դուք:

Կորչի' Փաշիզը»:

ՊՐԵՍԵՍԻ ԶԵՐԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Դիկտատոր Վարդասին հաջողվեց ճնշել ժողովրդական ապանձեռությունը։ Հարյուրավոր ապստամբներ գաղանաքարի սպանվեցին։ Ազատության 17000 պաշտպաններ նետվեցին բանտերը։ Բանտարկվեցին վոչ միայն բանվորները, դյուդացիներն ու զինվորները, վորոնք մասնակցել եյին կառավարության դեմ ուղղված ճակատամարտերին, այլև գիտության ու կուլտուրայի բազմաթիվ ականավոր բուրժուական գործիչներ, արվեստագետներ, գիտնականներ, իրավաբաններ, ժուռնալիստներ և այլն։

1936 թվի մարտին Վարդասի վնասիկանությունը հայտնի է և ձերբակալեց ազնիվ ու անձնուրաց հեղափոխական կոմունիստ Լուիս Կարլոս Պրեսեսին։ Այդ մոմենտից Ազգային-ազատակրական այլաննի առաջնորդը տառապելմ ե թանտեւմ։

Երկու տարի առաջ, չնայելով ամբողջ աշխարհի աշխատավորական լայն մասսների և կուլտուրայի ականավոր գործիչների բազոքներին, Պրեսեսը դատապարտվեց տասնվեց և կես տարվա բանտարկության։ Այդ ժողովրդական տրիբունի, բրազիլան ժողովրդի «Հույսի Ասպետի» կյանքը վտանգի մեջ ե։ Նա գտնվում ե իր քաղաքական թշնամիների ձեռքում։

ՊՄՖԱՄ ՊՐԵՏԵՍԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՅՄԸՐ

Պրեսեսի ձերբակալությունից հետո վոչ միայն Բրազիլիայի, այլև Հարավ-ամերիկական մյուս յերկրների արհմիությունները, դիմոկրատական խավերը շարժմակ յենան-

դուն կամպանիա յեն մղում բրագիլյան ժամովակի սիրված հերոսի, «Հույսի Ասպետի» աղատության համար։

Դեմոկրատական ինտելիգենցիայի լավագույն ներկայացրուցիչները—գրողներ Ռոմեն Ռուզանը, Եպտոն Սինկլիերը և ուրիշները—չերմ կոչեր են հրազդարակել ի պաշտպահ նություն Պրեսեսին։

1936 թվից ընդհուպ մինչև մեր որերը Մեկսիկայում, Զիլիյում, Կուրայում, Ուրուգվայում, Արգենտինայում տեղի յեն ունենում բուռն ցույցեր, վորոնց մասնակցում ե 10-ից մինչև 20 հազար հոգի և վորոնք նետում են նույն լոգունգը, «Ազատել Պրեսեսին»։ Վարդամը մինչեւ այժմ նույնանման բովանդակութայմբ բազմաթիվ հեռանքեր և ստանում։

Բրազիլիայում տիրող գոտան, ուսակցիոն ռեժիմը ժողովրդին չի թույլ տալիս բացահայտ կերպով արտքահայտելու իր բողոքն ընդուեմ Պրեսեսի կալանավորման։ Այնուամենայնիվ, յերբ Պրեսեսին տանում ենին տրիբունալ, հսկայական բազմությունը, չնայելով վլուստիկաների սպառնալիքներին, համարվեց դատարանի դռան առաջ և վողջույնի բացականչություններով դիմավորեց իր հեղափոխական հերոսին։ Բրազիլյան ժողովուրդը լարված հետեւ տեղում ե Պրեսեսի բախտին։ Վերջերս Բրազիլիայում լուր տարածվեց, վոր իր թե նրան տարել են Ամանսյան ովկիանոսի ֆերնանդո Նորոնյա մենավոր կղզին, վոր 125 մղոնով հեռու յե բրազիլիական ափից (այս կղզին հայտնի յե առողջության համար կործանարար իր կլիմայով)։ Ցամանակակից ժամանակակից ժողովրդին։ Բրազիլյան թերթերում յերեացին հոգվածներ խոչոր վերնագրերով, «Ո՞ւր ե Պրեսեսը»։ Ժողովրդի բողոքն ու ցասումը կառավարու-

թյանը ստիպեցին ձեռնպահ մնալ Պրեստեսին տեղափոխելու իր վորոշումից: Ինքը, Պրեստեսը վերադատության դանդատ տվեց անարդարացի դատավճռի դեմ և հայտարարեց, վոր մինչև դատական նոր վորոշումը կառավարությունն իրավունք չունի իրեն աքսորելու:

Պրեստեսի ազատության համար մզվող պայքարը շարունակվում է չժուղացող եներգիայով: Յեկ այդ հասկանալի յե: Պրեստեսը բրադիլյան ժողովրդի պայքարի դրոշն է, այն պայքարի, վոր այդ ժողովուրդը մղում է իր հայրենիքի բռնակալների և ստրկացնողների դեմ:

Բրադիլիայի, ինչպես նաև մյուս կապիտալիստական և դաշութային յերկրների աշխատավոր մասսաներն իրենց հաղթանակի հավատը քաղում են այն հաջողություններից, վոր ձեռք և բերել աշխարհիս առաջին սոցիալիստական պետությունը— ամբողջ աշխարհի ճնշվածների մեջ հայրենիքը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0195021

1 л. 25 ч.

369,

А. ЛУРЬЕ
Герой
бразильского народа
Газ Арм. ССР, Ереван, 1940 г.